ՀԱՅԿԱԿԱՆ ԱՐԴԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ

ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄ

ԱՇՈՏ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՂՁԱՆՔԻ ԵՎ ԿԵՆՑԱՂԻ ՄԻՋԵՎ

ԻՐԻՆԱ ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ

«Դաշնակցության առիթով». Աշոտ Հովհաննիսյանի
պատմաքաղաքականությունը 1920-ականներին

ԵՐԵՎԱՆ 2023

Ներածություն

Ինչպիսի՞ն է հայաստանյան իրականությունը: Թվում է, այս հարցադրումն անխուսափելի է, եթե մեզ հետաքրքրում է հայաստանյան իրականության պայմաններում գործադրվող քաղաքականությունների բնույթը, դրանց գործադրության չափն ու ձևը: Սակայն այս հարցին դժվար թե հնարավոր լինի պատասխանել, եթե հետամուտ չլինենք պարզելու, թե ինչ քաղաքականության արդյունք են ինքնին իրականությունը հասկանալու մեր ձևերը: Ուրեմն, եթե փորձում ենք հասկանալ հայաստանյան իրականությունը, անխուսափելիորեն պետք է փորձ անենք հասկանալ հայաստանյան քաղաքական մտքի պատմությունը:

Հայաստանյան պատմությունն ու պատմագիտությունը, սակայն, իրենց առանձնահատկությունն ունեն: Դրանք իրենց կայացման կոնկրետ շրջանում ուղիղ կերպով քաղաքականացվել են: Այդ բեկումնային շրջանը 1920-ականների երկրորդ կեսն էր, երբ ստալինիզմի հաստատմամբ ստալինացվեց նաև պատմությունն ու պատմագիտությունը:[1] Այս կերպ, հայաստանյան իրականության մասին բարձրացված մեր հարցը դառնում է պատմականորեն կոնկրետ. ինչպե՞ս է հաստատվել ստալինյան քաղաքականությունը, հայաստանյան իրականության ի՞նչ պատմություն է ժառանգել մեզ ստալինիզմը:[2] Սակայն գործ ունենալ ստալինիզմի հետ նշանակում է գործ ունենալ մի

Սույն հետազոտության թեման ինձ վստահելու և հետազոտական աշխատանքի ընթացքում ուղղորդելու համար շնորհակալ եմ *Մշակույթ և արդիականացում* ծրագրի ղեկավար Վարդան Ազատյանին: Շնորհակալ եմ ծրագրի մասնակիցներ Աշոտ Գրիգորյանին, Նարե Սահակյանին, Սիրանուշ Դվոյանին, Լուսին Շաբոյանին, որոնց գիտական ու ընկերական աջակցությունը մեծապես նպաստել է հետազոտության կայացմանը: Առանձնակի շնորհակալ եմ ծրագրի համակարգող Լիաննա Աղամյանին, որի աշխատանքը հնարավոր է դարձրել նախագծի իրականացման բնականոն ընթացքը: Շնորհակալ եմ ընտանիքիս ինձ մշտապես սատարելու համար:

[1] Պետք է նշել, որ ստալինիզմի հաստատմամբ պատմության ու պատմագիտության ստալինացումը միայն Հայաստանի փորձը չէ: Այդ գործընթացը 1920-ականների երկրորդ կեսին խորհրդային երկրի կենտրոնում՝ Ռուսաստանում կատարվող քաղաքական այն բեկումների ուղիղ հետևանքն էր, որոնք չշրջանցեցին խորհրդային երկրներից և ոչ մեկին: Մասնավորապես Հայաստանի պատմության ու պատմագիտության ստալինացման վավերացումներից է, օրինակ, 1928-ին Հայաստանի կոմունիստական կուսակցության Կենտրոնական կոմիտեի նախագահության ընդունած «Հակախորհրդային գաղափարախոսության (դաշնակցական, մենշևիկյան, սպեցիֆիկյան և այլն) դեմ պայքարի ճակատում աշխատանքի ուժեղացման առաջարկությունները» (բնագիրը՝ ռուսերեն): Տե՛ս Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ), ֆոնդ 1, ցուցակ 8, գործ 16, թթ. 12-13: Դրանց մեջ առանձին մի կետ նշում էր. «Ուշադրություն դարձնել Գիտության և արվեստի ինստիտուտին՝ հարմարեցնելով պատմա-գրական բաժանմունքի աշխատանքը հակախորհրդային և հակակոմունիստական գաղափարախոսության դեմ պայքարի խնդիրներին»: Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 8, գ. 16, թ. 12:

[2] Ինքնագիտակից պատմաբանական նման մոտեցման արդյունք պետք է համարել Աշոտ Հովհաննիսյանի անվան հումանիտար հետազոտությունների ինստիտուտի գործունեությունը: Ինստիտուտի հրատարակություններից, օրինակ, Աշոտ Հովհաննիսյան, *Իսրայել Օրին և հայ ազատագրական գաղափարը* (Երևան: Հովհաննիսյան ինստիտուտ, 2016), Միսաք Խոստիկյան, *Դավիթ փիլիսոփան* (Երևան: Հովհաննիսյան ինստիտուտ, 2020), Նորա Ն. Ներսեսյան, *Որբաքաղաքը. նպաստամատույց աշխատողներ, կոմիսարներ և «նոր Հայաստանը կառուցողներ», Ալեքսանդրապոլ/Լենինական, 1919-1931* (Երևան: Հովհաննիսյան ինստիտուտ, 2018) գրքերը տարբեր անկյուններից վեր են հանում ստալինիզմով ջնջված հայ արդի պատմության ու գիտության մեր ավանդույթը: Ստալինիզմի ջնջած պատմության վերաբացահայտման ուղղությամբ են տարվել նաև Հովհաննիսյան ինստիտուտի *Հայկական արդիություններ* նախագծի շրջանակում իրականացրած մեր հետազոտությունները: Տե՛ս Իրինա Շահնազարյան, *Հարատևող հնի և հավակնոտ նորի միջև. կենցաղի ու արվեստի արդիականացման փորձը 1920-ականների առաջին կեսին* (2021), https://shorturl.at/hknKV, այց՝ 24 դեկտեմբերի 2023 թ.; Իրինա Շահնազարյան, *«Մաքրության» քաղաքականությունը. ստալինյան մշակութային հեղափոխությունը 1920-ականների երկրորդ կեսին* (2022), https://shorturl.at/abevw, այց՝ 24 դեկտեմբերի 2023 թ.: Տե՛ս նաև նախագծի շրջանակում իրականացված Աննա Գալստյանի *Ադո Ադոյանի որբական կոմունիզմը* (2021) հետազոտությունը (https://shorturl.at/iAIY5, այց՝ 24 դեկտեմբերի 2023 թ.): Ստալինիզմի փորձառությունը քննելու ձեռնարկներից տե՛ս նաև Հնագիտության ու ազգագրության ինստիտուտի վերջին տարիներին լույս տեսած հատորները՝ Հրանուշ Խառատյան, Գայանե Շագոյան, Հարություն Մարության, Լևոն Աբրահամյան, *Ստալինյան բռնաճնշումները Հայաստանում. պատմություն, հիշողություն, առօրյա* (Երևան: Գիտություն, 2015) և Տիգրան Սարգսյան, *Չմատնող կանայք.*

քաղաքականության հետ, որը 1920-ականների երկրորդ կեսին հաստատվում էր նախընթաց քաղաքական մտքի ավանդույթի վերացման ու դրա պատմության «ջնջման» գնով: Հայաստանյան իրականության պատմության ուսումնասիրումն այդ կերպ դառնում է առերեսում ոչ միայն ստալինիզմի, այլև քաղաքական ու պատմագիտական այն ավանդույթի հետ, որից մեզ զրկել է ստալինիզմը:

Հայաստանում ազգային կոմունիզմն էր այն ավանդույթը, որի դեմ պայքարում և որի հաղթահարմամբ տասնամյակի երկրորդ կեսին հաստատվեց ստալինյան քաղաքականությունը: Ո՞վքեր էին ազգային կոմունիստները: Նրանց մեծ մասն ազգային կուսակցություններից դեպի մեծամասնական կուսակցություն անցած այն հայ գործիչներն էին (ինչպես Ալեքսանդր Մյասնիկյանը, Սարգիս Լուկաշինը, Ֆլորա Վարդանյանը, Սահակ Տեր-Գաբրիելյանը և այլք), որոնք 1920-ականների առաջին տարիներին ստանձնեցին Խորհրդային Հայաստանի ղեկավարությունը:[3] 1920-ականներին ազգային կոմունիստների գործունեությունը հայաստանյան քաղաքական մտքի պատմության մեջ հատուկ կետ է այն պարզ պատճառով, որ մի կողմից կապված է նախընթաց շրջանի ազգային կուսակցությունների պատմության հետ, մյուս կողմից այդ գործունեությունն առերեսել է ստալինիզմի հաստատումը: Այս կապերը, սակայն, նշանակում են, որ ստալինիզմի հաստատումը ոչ միայն մոռացման ու ջնջման էր ենթարկելու իր անմիջական անցյալը՝ ազգային կոմունիզմի ավանդույթը, այլև, ի դեմս դրա, այն քաղաքական մտքի ավանդույթը, որն իրենց մեջ անձնապես կրում էին ազգային կոմունիստները: Մեծ հաշվով, ուրեմն, պետք է ընդունել պատմական այն փաստը, որ այն, ինչ մենք գիտենք ստալինիզմին նախորդած քաղաքական մտքի մեր պատմության, ազգային կուսակցությունների ու ազգային կոմունիզմի միջև կապերի պատմության մասին, մի զգալի մասով հենց այդ պատմությունն աղճատած ստալինիզմի պատմությունն է:

Ինչպե՞ս է, ուրեմն, հնարավոր շրջանցել ստալինիզմը քաղաքական մտքի մեր ջնջված պատմությունն իմանալու, հայաստանյան իրականության հետ քաղաքականապես հարաբերման մեր պատմական նախաստալինյան փորձին հասու դառնալու համար: Այս հարցի պատասխանը հստակ է. *անհնար է շրջանցել ստալինիզմը:* Հայաստանյան քաղաքական մտքի պատմությանը հասու լինելու միակ ձևը, թվում է, այդ պատմությունը հասկանալն է՝ անցնելով ստալինիզմի միջով. մի ձեռնարկ, որը հաջողելու քիչ հնարավորություններից մեկը պետք է կապել Աշոտ Հովհաննիսյանի ու նրա պատմաքաղաքական ժառանգության հետ:[4]

69-րդ հոդվածով մեղադրյալները (արխիվային նյութեր և բանավոր պատմություններ) (Երևան: ՀԲՀ և ՀԱԻ հրատ., 2022): Տե՛ս նաև Վլադիմիր Ղազախեցյանի *1937-ը Հայաստանում* (Երևան: Զանգակ, 2005) մենագրությունը:

[3] Հայ քաղաքական գործիչների ազգային կուսակցություններից դեպի կոմունիզմ անցման քննարկումը տե՛ս, օրինակ, Վարդան Ազատյան, ««Ոչ եղիցի չեղեալ, զոր ինչ եղևն». Աշոտ Հովհաննիսյանի ավարտաճառը և նրա գործուն պատմագիտությունը», ըստ՝ Հովհաննիսյան, *Իսրայել Օրին և հայ ազատագրական գաղափարը*, էջ 567-709; Վահագն Հակոբյան, «Ալ. Մյասնիկյանի հասարակական-քաղաքական գործունեության ազգային-«սպեցիֆիկյան» շրջանը (1901-1917)», *Բանբեր Հայաստանի արխիվների,* 2007, թիվ 1-2, էջ 167-176:

[4] Աշոտ Հովհաննիսյանին ու նրա պատմաքաղաքական ժառանգությունը վերագնահատելու գործում առանցքային կարևորություն ունի 2016-ին լույս տեսած Վարդան Ազատյանի ուսումնասիրությունը: Տե՛ս Ազատյան, ««Ոչ եղիցի չեղեալ, զոր ինչ եղևն»», ըստ՝ Հովհաննիսյան, *Իսրայել Օրին և հայ ազատագրական գաղափարը*, էջ 567-709: Այն հրատարակվել է իբրև Հովհաննիսյանի ավարտաճառի վերահրատարակությունը համալրող հետազոտություն: Իրականում, սակայն, Ազատյանի ուսումնասիրությունը, առանցքում պահելով Հովհաննիսյանի ավարտաճառը, վեր է հանում վերջինիս պատմաքաղաքականության կայացման բարդ հյուսվածքներն ու դրանց նույնքան բարդ հետագիծը հայ պատմագիտական ու քաղաքական պատմության մեջ: Հովհաննիսյանի պատմագիտական ժառանգությունն իր գործունեության մեջ կարևորում էր նաև Նորայր Սարուխանյանը, որը Պատմության ինստիտուտում եղել է Հովհաննիսյանի ասպիրանտներից: Տե՛ս Նորայր Սարուխանյան, *Ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյանի պատմագիտական ժառանգությունը* (Երևան:

Հովհաննիսյանն ու Դաշնակցություն կուսակցության գնահատման հարցը

Ստալինիզմի հաստատման ու հայաստանյան քաղաքական մտքի պատմության ջնջման ու աղճատման գինն անձնապես ազգային կոմունիստների ոչնչացումն էր: 1920-ականներին Խորհրդային Հայաստանի լուսավորության առաջին կոմիսար, ապա Կենտրոնական կոմիտեի գլխավոր քարտուղար Աշոտ Հովհանիսյանը 1937-ին ենթարկվեց բռնաճնշումների ու աքսորվեց:[5] Հովհաննիսյանը, սակայն, վերապրեց ստալինյան աքսորը. այսօր արդեն նրա ողջ մնալն ու շարունակած աշխատանքը ստալինիզմի միջով նախաստալինյան հայաստանյան իրականությանը հասու դառնալու ճանապարհն են բացում: Հովհաննիսյանի գործունեությունը սկիզբ է առել 19-րդ դարի վերջին ու անցել հայ քաղաքական մտքի ընթացքը բյուրեղացնող հանգրվաններով (Դաշնակցություն, սպեցիֆիզմ, կոմունիզմ): Նա ապրել է Հայաստանի Առաջին, ապա խորհրդային հանրապետությունների հաջորդման պատմական շրջանը, եղել Խորհրդային Հայաստանի հիմնադիր գործիչներից, փորձառել ստալինիզմն ու ստալինյան աքսորը, վերապրել ստալինիզմն ու գործել հետստալինյան՝ խրուշչովյան ձնհալի ու բրեժնևյան լճացման շրջանների խորհրդային երկրում: Հովհաննիսյանն այս կերպ խտացնում է հայաստանյան քաղաքական մտքի ավանդույթն ու այդ ավանդույթի մոռացման պատմությունը, ուրեմն և, հնարավորություն տալիս իրենով բացահայտել թե՛ այդ ավանդույթը, թե՛ դրա մոռացումը:

Հովհաննիսյանի արժեքը, սակայն, չի սահմանափակվում իրենով՝ իբրև պատմական մի դեմք: Հովհաննիսյանի կարևորությունն է, որ ինքը միաժամանակ նույն այդ ավանդույթի ուսումնասիրողն էր, հայաստանյան արդի քաղաքական մտքի պատմաբանը: Բայց լինել հայ արդի քաղաքական մտքի պատմաբան Հովհաննիսյանի դեպքում նշանակում էր զբաղվել ինքնահետազոտմամբ, պատմականացնել ոչ միայն անցյալը՝ իբրև ներկայից հստակորեն տարանջատված մի ժամանակափուլ, այլ պատմականացնել ներկան: Ներկայի պատմականացումն է, որ թույլ չի տալիս ներկան ըմբռնել իբրև ժամանակը մոռացության մատնող այժմեականություն, այլ ժամանակի մեջ անընդհատ կայացող մի ընթացք. կայացում, որտեղ թե՛ պատմական անցյալ ժամանակը, թե՛ պատմական գալիքը կենդանի ներկայություն են ձեռք բերում հենց ներկայում:[6]

Հովհաննիսյանի 1920-ականների թե՛ քաղաքականությունը, թե՛ պատմագիտությունը ներհակ կերպով կապված է եղել իր դաշնակցական ու սպեցիֆիկյան անցյալի հետ:[7] Նոր՝ խորհրդային Հայաստանի քաղաքական ղեկավարման համար պատասխանատու առաջին դեմքերից մեկը լինելով՝ Հովհաննիսյանը միաժամանակ պատմաբանի իր օրակարգով «ռեվիզիայի [էր] յենթարկում» հայ ազատագրական շարժումը՝ հին

Պատմության ինստիտուտ, 2015); Նորայր Սարուխանյան, *Մտորումներ և հուշեր ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյանի մասին* (Երևան: Գիտություն, 2012): Պատմաբան Վլադիմիր Ղազախեցյանը պատրաստել է Հովհաննիսյանին առնչվող արխիվային փաստաթղթերի ժողովածու, որը դեռևս մնում է անտիպ:

[5] 1937-ին Հովհաննիսյանին առաջադրված մեղադրականը տե՛ս Համլետ Միրզոյան, *Հայաստանի խորհրդային տիրակալները. Գևորգ Ալիխանյանից մինչև Սուրեն Հարությունյան* (Երևան: ՎՄՎ-պրինտ, 2013), էջ 24-25:

[6] Պատահական չէ, որ 1920-ականներին Հովհաննիսյանին մեծապես զբաղեցնում էր Հայաստանի խորհրդայնացման պատմությունը գրելու հարցը, այսինքն՝ իր իսկ ներկայի պատմականացումը: Տե՛ս, օրինակ, Աշոտ Հովհաննիսյան, *Հայաստանի հեղափոխության հուլիսն ու հոկտեմբերը* (Յերեվան: Պետհրատ, 1923); Աշոտ Հովհաննիսյան, «Նվաճում, թէ՞ հեղափոխություն», *Խորհրդային Հայաստան*, 29 սեպտեմբերի 1923 թ.; Աշոտ Հովհաննիսյան, *«Համազգային կրիզիսը». Նոյեմբերյան հեղափոխության հինգերորդ տարեդարձի առթիվ* (Յերեվան: Պետհրատ, 1926): Հովհաննիսյանի պատմաբանության մեջ ժամանակի ըմբռնման մասին տե՛ս Ազատյան, ««Ոչ եղիցի չեղեալ, զոր ինչ եղևն», էջ 650-654: Ազատյանը մասնավորապես նշում է, որ Հովհաննիսյանի համար «պատմագիտությունն իմաստ ունի միայն որպես պատմական շարժուն ժամանակի գիտություն, որն իր հերթին ներհայտ կապված է այդ ժամանակի հետ» (էջ 651):

[7] Հովհաննիսյանի դաշնակցական նախկին հարումների ու Սոցիալ-դեմոկրատական բանվորական հայ կազմակերպությանը (պեցիֆիզմին) անդամակցելու պատմությունն է բացահայտում Վարդան Ազատյանն իր հետազոտության մեջ: Տե՛ս Ազատյան, ««Ոչ եղիցի չեղեալ, զոր ինչ եղևն», էջ 569-609:

Հայաստանի անցյալը:[8] Հովհաննիսյանի համար հին ու նոր Հայաստանների կազմակերպման ու կազմալուծման գործողությունը զուտ քաղաքական գործողություն չէր, դա ներկայում հայ ազատագրական շարժման ու դրա վերաքննման պատմաբանական գործողությունն էր միաժամանակ:

Հովհաննիսյանի 1920-ականների գործունեությունն ինքնին նշում էր քաղաքականության ու պատմաբանության այս անքակտելիությունը: Պատահակա՞ն է, ուրեմն, որ 1920-ականներին Հովհաննիսյանի թե՛ պատմաբանության, թե՛ քաղաքականության առանցքում հայտնվեց Դաշնակցություն կուսակցության հարցը: Այսօր այս հարցին հնարավոր չէ պատասխանել՝ մնալով հայաստանյան պատմագիտության սահմաններում: Հայաստանյան պատմաբանության մեջ Հովհաննիսյանի գործունեությունը կա՛մ համարվում է զուտ քաղաքական ու հռետորաբանական, կա՛մ լայն իմաստով տեղավորվում է իր պատմաբանական ժառանգության ուղեծրում:[9] Արդյո՞ք, սակայն, չպետք է մտածել այն ուղղությամբ, որ ստալինիզմի հետևանք է հենց այն, որ մենք ի վիճակի չենք ո՛չ Հովհաննիսյանի, ո՛չ նրա պատմաքաղաքականության մեջ երևացող մեր անցյալը տեսնել իր բարդությամբ հանդերձ, առանց այն պարզեցնելու: Թվում է, եթե մեր այդ անկարողությանը լուրջ վերաբերվենք գուցե հնարավորություն կունենանք բացահայտել մեր այն ժառանգությունը, որը պատմաքննական մոտեցմամբ քաղաքականապես հարաբերվել է մեր իրականության հետ: Հովհաննիսյանի՝ Դաշնակցության շուրջ պատմաքաղաքական գործունեությունն այս ժառանգության մի գիծն է բացում: Դաշնակցության պատմաքաղաքական «ռեվիզիան» գործնական ու տեսական մակարդակում բյուրեղացնում էր հին ու նոր Հայաստանների կազմավորման ու կազմալուծման գործողությունը: Ուրեմն, Դաշնակցության պատմաքննական վերաքննումը հայաստանյան իրականության վերաքննումն էր:

1920-ականների ողջ ընթացքում Դաշնակցություն կուսակցության հարցը, մասնավորապես դրա գնահատման հարցը՝ իբրև «մանրբուրժուական» կուսակցություն, Հովհաննիսյանի պատմաքաղաքականության առանցքում էր:[10] Քաղաքականապես հայաստանյան իրականության գնահատման շուրջ 1920-ականներին ծավալված պայքարը համընկնում էր Դաշնակցություն կուսակցությանը տրվող գնահատականի համար պայքարին: Հովհաննիսյանի պատմաբանական հայացքում թե՛ դաշնակցականները, թե՛ իրենք՝ հայ մեծամասնական գործիչները պատկանում էին միևնույն իրականությանը: Այս հիմնարար ելակետն էր պայմանավորում հանգամանքը, որ

---

[8] Աշոտ Հովհաննիսյան, *Դաշնակցության առիթով* (Մոսկվա: Հրատարակություն հեղինակի, 1929), էջ 11: 1923-ին իր խմբագրությամբ հրապարակվող *Նորք* հանդեսում Հովհաննիսյանը գրում էր. «Նոյեմբերյան հեղափոխությունը նոր Հայաստանի կազմակերպման առաջին գործողությունը չեր միայն, այլ և հնի կազմալուծման վերջին արարը»: Տե՛ս Աշ. Հովհաննիսյան, «Հայաստանի հեղափոխության հուլիսն ու հոկտեմբերը», *Նորք,* 1923, թիվ 2, էջ 98:

[9] Օրինակ՝ ըստ Հայկական ուսումնասիրությունների Անի կենտրոնի հրապարակած մի նյութի՝ Հովհաննիսյանը «հակահայ» գործունեություն ծավալած մեծամասնականների շարքում է: Նույն՝ քաղաքական մակարդակում, բայց իբրև «հայրենասեր ու գիտակ» գործիչ է Հովհաննիսյանին համարում Արամ Մանուկյանը: Հակառակ քաղաքական գնահատականների՝ Հովհաննիսյանի պատմաբանական ժառանգությունը գնահատելու փորձ է ձեռնարկում Նորայր Սարուխանյանը: Տե՛ս ««Հայ բոլշևիկ կոմունիստների խնդիրը՝ արագացնել Հայաստանի պարտությունը». 1920 թ. սեպտեմբեր», https://shorturl.at/abdPR, այց՝ 24 դեկտեմբերի 2023 թ.; Արամ Մանուկյան, *Քաղաքական կուսակցությունների լուծարումը Խորհրդային Հայաստանում 1920-ական թվականներին,* ատենախոսություն (Երևան: Պատմության ինստիտուտ, 2012), էջ 38; Սարուխանյան, *Ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյանի պատմագիտական ժառանգությունը:*

[10] Տե՛ս, օրինակ, Աշոտ Հովհաննիսյան, «Դաշնակցության իդեոլոգիայի ընթացիկ կուրսը», *Նորք*, 1923, թիվ 3, էջ 162-185; «Ընկ. Աշոտ Հովհաննիսյանի զեկուցումը դաշնակցության ներկա քաղաքականության մասին», *Խորհրդային Հայաստան*, 4 հոկտեմբերի 1923 թ.; «Ընկ. Աշոտ Հովհաննիսյանի զեկուցումը. դաշնակցության ընթացիկ մտայնությունը», *Բանվոր*, 10 նոյեմբերի 1923 թ.; Հովհաննիսյան, *Դաշնակցության առիթով*; Աշոտ Հովհաննիսյան, «Դաշնակցության սոցիալական ծագումը», *Նորք*, 1927, թիվ 1, էջ 149-174:

դրանց միջև առկա էին ժառանգորդական կապեր. ազգային կոմունիստները ելած էին ազգային կուսակցություններից: Հետևաբար գնահատել Դաշնակցությունը նշանակում էր գնահատել այն իրականությունը, որի ծնունդն էր Դաշնակցությունը և որին պատկանում էին իրենք՝ ազգային կոմունիստները:[11] Այդ իրականությունը հասկանալու ընթացքն, ուրեմն, Հովհաննիսյանի համար արտաքին գործողություն չէր: Դաշնակցության ու դաշնակցականների՝ իբրև քաղաքական առաջնակարգ թշնամու հետ խոսակցությունը ներքին խոսակցություն էր, հայաստանյան քաղաքական միտքն իր ծավալման ներհակ ընթացքի մեջ տեսնելու գործողություն:

Հովհաննիսյանի Դաշնակցության մանրբուրժուականության տեսությունը տանում էր դեպի հայաստանյան մանրբուրժուական իրականությունը: Ո՞րն էր այդ մանրբուրժուական իրականությունը. դա քաղաքային և գյուղական մանր սեփականատերերի, մանր վաճառականի, քաղաքի ու գյուղի մտավորականության, արհեստավորի ու գյուղացու իրականությունն էր: Այդ իրականությունից էր, որ ծնունդ էր առել Դաշնակցությունը:[12] Պարզ է, ուրեմն, թե ինչու էր Հովհաննիսյանը հետևողականորեն պաշտպանում Դաշնակցությունը՝ իբրև մանր բուրժուազայի կուսակցություն գնահատելու դիրքորոշումը: Համարել Դաշնակցությունը բուրժուական, այսինքն՝ խոշոր արդյունաբերական կապիտալիստների կուսակցություն կնշանակեր կտրել Դաշնակցությունը ժողովրդական խավերի մանրսեփականատիրական հատվածից, կտրել ապրվող կյանքից ու իրականությունից: Հակառակը՝ պաշտպանել Դաշնակցության մանրբուրժուականության տեսությունը, նշանակում էր տեղայնացնել կուսակցությունը, տեսնել Դաշնակցությունն իրեն ծնած իրականության հետ կապի մեջ: Ուրեմն, եթե Դաշնակցությունը գնահատվեր իբրև բուրժուական կուսակցություն, այն կդադարեր լիներ տեղային, չէր նշի իրեն ծնունդ տված տեղի իրականության սոցիալական առանձնահատուկ բնույթը: Այս կերպ, Դաշնակցության քաղաքական գնահատականը միաժամանակ բացահայտում էր հայաստանյան իրականության մանրբուրժուական բնույթը: Քանի դեռ Դաշնակցությունն իր սոցիալական ծագմամբ գնահատվում էր իբրև մանրբուրժուական, խորհրդային քաղաքականությունը Հայաստանում պետք է հաշվի նստեր հայաստանյան իրականությանը հատուկ մանրսեփականատիրական բնույթի հետ:

---

[11] Ուշագրավ է այս իմաստով Վարդան Ազատյանի՝ Հովհաննիսյանի հեղափոխականության ու ժառանգված ավանդույթի հետ հարաբերման մասին դիտարկումը. «Հեղափոխականն այդքան դյուրությամբ չի ընդունում ժառանգվածը, որպեսզի պարզապես հակադրվի վերջինիս. նա նույն այդ ժառանգությունը բացահայտում է նորից՝ իբրև մեկը, ով սերում է նրանից, ինչը փոխում է»: Տե՛ս Ազատյան, ««Ոչ եղիցի չեղեալ, զոր ինչ եղևն», էջ 637:

[12] Հաճախ առանց մարքսիստական գնահատողական ձևակերպումների դաշնակցականներն իրենք էլ բնութագրում էին իրենց գործունեության ասպարեզ դարձած իրականությունն ու հասարակական այն խավերին, որոնց հետ կապված էր կուսակցության գործունեությունը: Օրինակ, Գառնիկ Գյուզալյանն իր *Հայ քաղաքական մտքի զարգացումը եւ Հ. Յ. Դաշնակցութիւնը* (Փարիզ: Հրատ. Հ. Յ. Դաշնակցութեան, 1927) գրքում գրում էր. «Սկզբից և եթ հայկական ազատագրական շարժումը վարակում է ռամկավար տարրերին – գիւղացիներին, արհեստաւորին, մանր վաճառականին....: Հայ հարուստը միշտ հեռու մնաց մեր քաղաքական շարժումից, բաւականացաւ՝ խոհեմութեան, հնազանդութեան քարոզներ կարդալով հայ յեղափոխութեան: Յեղափոխութեան գլուխ անցաւ ժողովրդից ծնած մտաւորականութիւնը: Այսպիսով հայոց ազատագրական շարժումը ստացաւ *ժողովրդական,* բայց ոչ *ազգային* բնոյթ» (ընդգծումը՝ Գ. Գ.) (էջ 119): Առաջին հանրապետության տարիներին Հայաստանում «հայ գեղջուկի» հաստատած «ազատագրութեան շէնքը» «ամրապնդելու և ընդարձակելու» համար անհրաժեշտ օգնության մասին դաշնակցական *Աշխատանք* թերթի հոդվածագիր Պարսամյանը գրում էր. «Արտասահմանեան հայ բուրժուազիան — հայ երկիրը արդէն բուրժուազիան չունի — նոյնիսկ ներկայ պատմական օրերուն կը զլանայ ամենադոյզն օգնութիւն և կըսպասէ համաշխարհային իրերու վերջնական դասաւորման և բնականոն կեանքի հաստատման՝ իր դրամագլուխը «ազգասիրաբար» Հայաստան մուծելու համար: Կըսպասէ, որովհետև անիկա չի ուզեր նոյնպէս «ազգասիրաբար» մէկ կոպէկ անգամ իր միլիոններէն ռիսկի ենթարկել՝ այն պահուն երբ հայ ժողովուրդի ողջ գոյութիւնը վտանգի տակ կը գտնուի: Ահա հայ բուրժուազիայի դաւաճան դերը, որ անցեալէն սկսեալ կը շարունակուի այս օր ալ և պիտի շարունակուի վաղն ալ»: Տե՛ս Յ. Պարսամեան, «Մտաւորականները դէպի Հայաստան», *Աշխատանք*, 22 հուլիսի 1919 թ.:

Վարկաբեկված պատմությունից անդին

Խոսակցություն բացել հայաստանյան իրականության Հովհաննիսյանի վերլուծության ու դրան տրված գնահատականի մասին առանց վերապահումների ու ճշգրտումների այսօր հնարավոր չէ: Դրա պարզ պատճառն այն է, որ թե՛ Հովհաննիսյանը, թե՛ հայաստանյան իրականության իր տեսությունը մեծապես վարկաբեկված խորհրդային երկրի ու խորհրդային մարքսիստական պատմաբանության մաս են: Երկրորդ՝ Հովհաննիսյանն իր տեսությունն առաջ է քաշել մի պետության գոյության պայմաններում, որը 30-ից ավել տարի այլևս գոյություն չունի:[13] Նշանակում է, ուրեմն, որ բաց հարց է՝ արդյո՞ք եթե խորհրդային պետությունը գոյություն չունի, ուրեմն, համարժեքորեն այդ տեսությունը ևս մեզ համար արժեք չի կարող ներկայացնել: Այս հարցը մի իմաստով արդեն ելնում է կանխադրույթից, որ քաղաքական կարգերի փոփոխությունների հետ արմատապես փոփոխվել է այն իրականությունը, որտեղ վերջիններս կայացել են: Իսկ գուցե՞ հարցին պետք է մոտենալ հակառակ կողմից. պետք է հասկանալ այն իրականությունը, որտեղ կայացել են այդ քաղաքականությունները, որպեսզի հնարավոր լինի հասկանալ դրանց անկայունությունն ու քայքայումը, լինի դա Առաջին հանրապետությունը, Խորհրդային Հայաստանը, թե մեր 30-ամյա պետությունը, որ կանգնած է ներքին ու արտաքին լուրջ մարտահրավերների առջև: Հարցի նման վերաձևակերպման պարագայում է, որ Հովհաննիսյանի հայաստանյան իրականության տեսությունն իր ողջ խորհրդային բառապաշարով հանդերձ դառնում է կարևոր: Կարևոր է դառնում այն պատճառով, որ իրականությունը քաղաքական կոնկրետ օրակարգի ներսից երևալով հանդերձ, այդ քաղաքական օրակարգի գործադրման հնարավորությունը կամ անհնարինությունը բացահայտում է հայաստանյան իրականության ու դրա պատմական կայացման հետ հարաբերության մեջ: Այս պարագայում է, որ Հովհաննիսյանի առաջ քաշած տեսության կապակցությամբ քաղաքական հարցը հառնում է պատմաբանական իր ողջ հրատապությամբ. ինչպիսի՞ն է հայաստանյան իրականությունը:

Այսօր մեզ քիչ բան է ասում այն, որ Հովհաննիսյանը հայաստանյան իրականությունը բնորոշել է նախևառաջ իբրև մանրբուրժուական: Այս տերմինաբանության պատմատեսական ասպեկտը բացահայտելու կարևորությունը հասկանալով հանդերձ՝ այն չենք դարձրել մեր հետազոտության առանցքային խնդիրը: Սա մեծապես պայմանավորված է նաև հենց Հովհաննիսյանի՝ հետազոտական նյութի հետ հարաբերվելու մեթոդաբանությամբ: Հովհաննիսյանն առանձին տեսական մեկնաբանություն չունի մանրբուրժուականության կամ քաղքենիության մասին: Հովհաննիսյանի պարագայում ըստ էության դրանք բացահայտվում են հետազոտական նյութի ծավալման ընթացքում և ոչ տեսական ու գործնական հատվածների բաժանման մեթոդով:[14] Գործուն պատմագիտության այս ըմբռնումն էական է Հովհաննիսյանի առաջ

---

[13] Ինչպես հետևողականորեն ցույց է տալիս Վարդան Ազատյանը Հովհաննիսյանը «մասնագիտությամբ պատմագետ առաջին մարքսիստ պատմաբաններից է ընդհանրապես»: Տե՛ս Ազատյան, ««Ոչ եղիցի չեղեալ, զոր ինչ եղևն», էջ 671: Խորհրդային մարքսիստական պատմաբանությունը, սակայն, ենթակա ստալինացման քաղաքականություններին, հետահայաց հավասարապես վարկաբեկված է այսօր որքան և խորհրդային երկրի պատմությունը: Ազատյանի հետազոտությունն այս իմաստով առանցքային է հայ քաղաքական ու պատմագիտական մտքի պատմության մեջ մարքսիստական ավանդույթը վերաբացահայտելու խնդրում:

[14] Դեռ 1922-ի իր հոդվածներից մեկում Հովհաննիսյանը հստակ ձևակերպում էր, թե գիտության ու իրականության ինչ նոր կապ էր առաջադրել Հոկտեմբերյան հեղափոխությունը. «Մենք նույնացնում ենք մի գիտական սինթեզի մեջ գիտության անմիջականությունը գործնական խնդիրների հետ և տալիս ավելի ձիգ միություն.... Հոկտեմբերը ծուլեց գիտությունը կյանքի մեջ.... Հոկտեմբերը խորհրդանիշն ե գիտության և կարիքի միության և համադրության»: Տե՛ս Աշ. Հովհ., «Կուլտուրա յեվ Հոկտեմբեր», *Խորհրդային Հայաստան,* 7 նոյեմբերի 1922 թ.: Հովհաննիսյանն այս մոտեցումն առաջադրում էր ելնելով Մարքսից: Մեջբերելով Մարքսին Հովհաննիսյանը գրում է. «Կարլ Մարքս իր աշխատություններից մեկում գրում ե, վոր պրոլետարիատը հեղափոխության սիրտն ե, իսկ փիլիսոփայությունը նրա գլուխը, Մարքսը Ենգելսի հետ,

քաշած հայաստանյան իրականության ու դրանից ծնված կուսակցության՝ Դաշնակցության մանրբուրժուականությունը հասկանալու համար:[15] Այս կերպ, առանց տեսական վերադրումների հետազոտական նյութի ծավալմամբ փորձել ենք հավատարիմ մնալ Հովհաննիսյանի մեթոդաբանությանն ու կիրառվող հասկացությունների իմաստները հասկանալի դարձնել հետազոտական նյութի ներսից:

ՆԷՊ-ի կամ Հովհաննիսյանի Լենինը

Հովհաննիսյանի պատմաքաղաքականության տեսաբանական հենակետերն ու տերմինաբանությունը մարքսիստական են: Ըստ մարքսյան սահմանման՝ մանր բարժուազիան «անցումային դասակարգ» է, որտեղ հատվում ու «լղոզվում» են կապիտալիստական հասարակության հիմնական դասակարգերի՝ բուրժուազիայի և պրոլետարիատի շահերը:[16] Մանր բուրժուազիայի շահերն ու սոցիալական դիրքն ըստ այդմ ևս այս երկու դասակարգերի միջև են:[17] Մանր բուրժուազիայի այս միջանկյալ, «տատանվող» դիրքը վճռական նշանակություն ձեռք բերեց 1920-ականների սկզբին խորհրդային երկրում Լենինի որդեգրած ներքին քաղաքականության համար: Իր հերթին Հովհաննիսյանը 1920-ականներին մանրբուրժուականության խնդրին անդրադառնալիս մեծապես ելնում էր լենինյան դրույթներից: Նոր տնտեսական քաղաքականության (ՆԷՊ) ներդրման տարիներին Լենինը գրում էր.

> Մեր գյուղն այս ժամանակամիջոցին *ավելի յե մանր-բուրժուական* դարձել: Սա ինքնուրույն դասակարգ ե, այն դասակարգը, վոր կալվածատերերի, կապիտալիստների վոչնչացումից, անհետանալուց հետո, մնում ե միակ դասակարգը, վոր *ընդունակ ե դիմադրելու* պրոլետարիատին (ընդգծումը՝ Ա. Հ.):[18]

Առանցքայինն, ինչում Հովհաննիսյանը միանշանակ հետևում էր Լենինին, մանր բուրժուազիայի դիմադրության ուժի բնույթի ձևակերպումն էր: Լենինը նշում էր. «Դուք գիտեք թե ինչ ե այդ ուժն իր քաղաքական տրամադրության տեսակետից: Դա–«*տատանման ուժն ե*»» (ընդգծումը՝ Ա. Հ.) (էջ 51): 1920-ականներին՝ Նոր տնտեսական քաղաքականության շրջանում սոցիալիզմի համար տնտեսական պայքարի պայմաններում մանր բուրժուազիան և մասնավորապես միջակ գյուղացիությունը տատանվում էր զարգացման սոցիալիստական և կապիտալիստական ուղիների միջև:

ասում ե Ստանիսլավ Բորինիսկին, փիլիսոփայությունը իր հին հասկացողությամբ ոչնչացրին և միացրին նրան գիտության հետ, այժմ մենք կարող ենք ասել Մարքսի ավելի հասուն տերմինով պրոլետարիատը հեղափոխության սիրտն ե, իսկ գիտությունը նրա գլուխը»: Տե՛ս Հովհ., «Կուլտուրա յեվ Հոկտեմբեր»:

[15] «Գործուն պատմագիտություն» է ձևակերպում Հովհաննիսյանի պատմագիտությունը Վարդան Ազատյանը: Տե՛ս Ազատյան, ««Ոչ եղիցի չեղեալ, զոր ինչ եղևն», էջ 667:

[16] Տե՛ս «Petite bourgeoisie», *Oxford Reference,* https://shorturl.at/opsF9, այց՝ 25 դեկտեմբերի 2023 թ.:

[17] Հմմտ. Կարլ Մարքս, *Լուի Բոնապարտի Բրյումերի տասնութը* (Յերեվան: Պետհրատ, 1931); Annette Leppert-Fögen, *Die deklassierte Klasse: Studien zur Geschichte und Ideologie des Kleinbürgertums* (Frankfurt: Fischer, 1974), էջ 39-70: Մանր-բուրժուական տնտեսական խավի «տատանվող» բնույթի շուրջ ավելի ժամանակակից քննարկումներումների համար տե՛ս, օրինակ, Geoffrey Crossick, Hienz-Gerhard Haupt, «Introduction: Shopkeepers, master artisans and the historian: the petite bourgeoisie in comparative focus», ըստ՝ Geoffrey Crossick, Hienz-Gerhard Haupt (խմբ.), *Shopkeepers and Master Artisans in Nineteenth-Century Europe* (London, New York: Methuen, 1984), էջ 3-10; Geoffrey Crossick, Hienz-Gerhard Haupt, «Introduction», ըստ՝ Geoffrey Crossick, Hienz-Gerhard Haupt (խմբ.), *The Petite Bourgeoisie in Europe 1780-1914: Enterprise, Family and Independence* (London, New York: Routledge, 2016), էջ 1-15:

[18] Լենինի երկերից մեջբերումները տալիս ենք ըստ Հովհաննիսյանի թարգմանության: Տե՛ս Աշոտ Հովհաննիսյան, *Մեր հեռանկարները յեվ լենինիզմը* (Երևան: Պետհրատ, 1926), էջ 50: Տեքստից հետագա մեջբերումները՝ տողամիջում:

Ի՞նչն էր, սակայն, որ գյուղացուն քաղաքականապես դարձնում էր «տատանվող»: Հարցի պատասխանը Լենինը տալիս էր ելնելով հենց գյուղացու նկարագրից.

> Գյուղացու մեջ ապրում ե տնտեսատիրող բնազդը, յեթե վոչ այսորվա, գեթ վաղվա տնտեսատիրոջ: Այդ տնտեսատիրական, մասնատիրական բնազդը վանում ե գյուղացուն պրոլետարիատից, ծնում ե գյուղացու մեջ պատրանք ու ձգտում՝ մարդ դառնալ, բուրժուա դառնալ, մեկուսանալ ամբողջ հասարակությունից իր հողաբաժնի վրա, իր ինչպես չարաբար ասել ե Մարքսը՝ թրքակույտի վրա (էջ 57):

Լենինի այս դիրքորոշումը գյուղացիության հարցում առանցքային էր գլխավորապես գյուղացիական խորհրդային երկրների ողջ քաղաքական կուրսը որոշելու հարցում: Պարզ ասած, Լենինի տված գնահատականը զգուշացնում էր գյուղացիությանը անմեղացնելու, նրա սեփականատիրական բնույթը հաշվի չառնելու վտանգների մասին. «Գյուղացիները սոցիալիստներ չեն: Կառուցել մեր սոցիալիստական պլաններն այնպես, վոր ասես թե գյուղացին սոցիալիստ լինի,–նշանակում ե կառուցել ավազի վրա, նշանակում ե չը հասկանալ մեր խնդիրները» (էջ 57):

Լենինի ըմբռնմամբ սա նշանակում էր համաչափություն չպահել մեծամասնականների քաղաքական ծրագրերի ու այն «վողորմելի իրականության» միջև, որտեղ այդ ծրագրերը գործադրվում էին (էջ 57): Քաղաքականապես գնահատել գյուղացիության սոցիալական վիճակը, ուրեմն, նշանակում էր սահմանել քաղաքական ծրագրերի ու իրականության միջև կոնկրետ հարաբերություն, քաղաքականություն գործադրելիս հաշվի առնել իրական պայմանները:[19]

Հովհաննիսյանի համար մանր բուրժուազիայի ու հատկապես գյուղացիության խնդրի լենինյան ըմբռնումը որոշում էր խորհրդային քաղաքականության սոցիալական բովանդակությունը. «Հասարակական վո՞ր ուժն ե, վորի դեմ կենտրոնացնում ենք այսոր մեր պայքարը սոցիալիզմի ճանապարհին: Անկասկած մանր բուրժուազիան, մանրբուրժուական տարերքը: Այդ ուժն ե, վոր պետք ե հաղթահարենք, այդ ուժն ե, վոր պետք ե մտցնենք մեր շինարարության ուղիների մեջ» (էջ 62-63): Այդ կազմակերպչական աշխատանքը Հովհաննիսյանը համարում էր միակ միջոցը, որով պետք է հաղթահարվեր «մանր-բուրժուական տարերքը». Հովհաննիսյանի ձևակերպմամբ՝ ««խաղաղ» մարտադաշտ», որտեղ փոխադրվում էր ՆԷՊ-ի շրջանում մեծամասնականների պայքարի ծանրությունը (էջ 63):

Հայ մանրբուրժուականության կուսակցության՝ Դաշնակցության քաղաքական տատանումներն, ուրեմն, հենց մանր բուրժուազիայի տատանումներն էին: Հովհաննիսյանը հետահայաց այդ տատանումների ուղեգծով էր տեսնում Դաշնակցության անցյալը.

> Դաշնակցությունը վորպես մանր բուրժուազիայի կուսակցություն անցյալում՝ գտնվել ե շարունակ կովկասահայ առևտրական, ավելի ուշ՝ արդյունաբերական-ֆինանսական բուրժուազիայի ազդեցության, նրա գաղափարական

[19] Լենինի նախազգուշացումն այս մասին ուղենշում էր ՆԷՊ-ի քաղաքական օրակարգը. «Մեր նպատակն ե վերականգնել զոդումը, գործերով ապացուցել գյուղացուն, վոր մենք սկսում ենք նրանից, ինչ հասկանալի յե նրան, ծանոթ ե նրան և մատչելի՝ չնայած իր աղքատ վիճակին և վոչ թե սկսել գյուղացու համար ինչ վոր հեռավոր, ֆանտաստիկ բաներից,–ապացուցել, վոր մենք կարողանում ենք ոգնել նրան, վոր կոմունիստները քայքայված, աղքատացած, սոսկալի սովահար մանր գյուղացու ծանր վիճակում՝ նրան հիմա գործով ոգնում են: Կամ այդ մենք կապացուցենք, կամ նա մեզ դուրս կը վռնդի» (էջ 58):

> գերիշխանության ներքո: Մանր-բուրժուական միջավայրում Դաշնակցությունը հանդես է յեկել վորպես նրա բուրժուական որիենտացիայի կուսակցություն:[20]

Ստալինյան իրականությունը

Հովհաննիսյանի՝ Դաշնակցության մանրբուրժուականության տեսության արժեքը հատկապես սկսեց երևալ 1920-ականների երկորդ կեսին նույն այդ տեսության դեմ բարձրացված քննադատական ալիքի շրջանակում: 1928-ին քննադատներից մեկին արձագանքելով Հովհաննիսյանը գրում էր.

> Անգիտանալով մարքսիզմի ուսմունքը մանր-բուրժուազիայի մասին, Դաշնակցության մասին, իմ ասածը ջրելու համար՝ նա հարկադրված է ժխտել միաժամանակ կովկասահայ մանր բուրժուազիայի հանրածանոթ անցյալը, իդեալականացնել մանր-բուրժուազիան ու նրա անցյալը հրամցնել վորպես արատներից զերծ մի պատմություն:[21]

1928-ին մանր բուրժուազիայի իդեալականացման, այն իբրև դասակարգ անմեղացնելու այս դիրքորոշումը ստալինյան դիրքորոշումն էր: 1920-ականների սկզբին անժամկետ ներդրված ՆԷՊ-ի քաղաքականությունն այլ բան չէր, քան միջին խավերին՝ մանր բուրժուազիային ու մասնավորապես գյուղացիությանը սիրաշահելու, նրա տատանումները մեղմելու ու դեպի պրոլետարիատ հակելու քաղաքականություն: Լենինյան գծի մեծամասնականների համար երկրի ներսում երկրորդ հեղափոխությունը բացառված էր. հնարավոր չէր վերացնել գյուղացիությունն իբրև դասակարգ՝ հանուն քաղաքական իշխանության անսասանության:[22] Լենինի մահից հետո, սակայն, այս դիրքորոշումը սկսեց սասանվել: 1920-ականների երկրորդ կեսին կուսակցության ներսում իշխանության համար պայքարն ի վերջո պետք է ավարտվեր Ստալինի հաղթանակով: 1928-ին ստալինյան առաջին հնգամյակով մեկնարկած տնտեսության արդյունաբերականացումն ու կոլեկտիվացումը միաժամանակ ազդարարում էին ՆԷՊ-ի ավարտը:[23] Քաղաքական, տնտեսական այս շրջադարձը նշանակում էր, որ Միության մասշտաբով որդեգրված ստալինյան նոր կուրսը հավակնում էր «վերևից հեղափոխություն» իրականացնել: Դրա նպատակն էր չեզոքացնել գյուղացիության, մանր բուրժուազիայի «տատանումները», իսկ դրա գինը վերացնելն էր գյուղացիությունն իբրև դասակարգ: 1929-ին «Մեծ բեկման տարին» հոդվածում Ստալինը կոլեկտիվացման

---

[20] Հովհաննիսյան, *Դաշնակցության առիթով*, էջ 23: Ըստ Հովհաննիսյանի՝ մեծամասնականները Դաշնակցությունը համարել են գիտակից գործիք խոշոր առևտրա-արդյունաբերական բուրժուազիայի և դրան հովանավորող իմպերիալիստական ուժերի ձեռքին. «Չժխտելով Դաշնակցության մանր-բուրժուական ծագումը, նրա մանր-բուրժուական անցյալը, բայլշևիկներն այս իմաստով է, վոր կովկասահայ մարտական բուրժուազիայի կուսակցություն են համարել Դաշնակցությունը»: Տե՛ս Հովհաննիսյան, *Դաշնակցության առիթով*, էջ 24:

[21] Հովհաննիսյան, *Դաշնակցության առիթով*, էջ 27:

[22] Ստալինիզմի հաստատումից առաջ՝ դեռ 1925-ին Հովհաննիսյանը երկրորդ հեղափոխության մասին գրում էր. «Խոսք չի կարող լինել այստեղ և նոր, յերկրորդ հեղափոխության մասին: Մեր դասակարգային պայքարը բուրժուական ներքին տարերքի դեմ գնալու յե տնտեսական մեր շինարարության գծով, տնտեսական մեր քաղաքականության գծով»: Տե՛ս Աշոտ Հովհաննիսյան, *Մեր պայքարը, նվաճումները յեվ անելիքը* (Յերեվան: Պետական հրատարակչություն, 1928), էջ 8:

[23] Տե՛ս, օրինակ, Sheila Fitzpatrick, *Stalin's Pesants: Resisitance and Survival in the Russian Village After Collectivization* (New York, Oxford: Oxford University Press, 1994), էջ 48-79; Moshe Lewin, *Russian Peasants and Soviet Power: A Study of Collectivization* (New York: W. W. Norton and Company, 1975), էջ 214-513; Jonathan Daly, *Hammer, Sickle, and Soil: The soviet Drive to Collectivize Agriculture* (Stanford: Hoover Institution Press, 2017); Maurice Hindus, *Red Bread: Collectivization in a Russian Village* (Bloomington, Indianapolis: Indiana University Press, 1988):

մասնակի ու փոքր նվաճումների հիման վրա եկավ այն ընդհանուր եզրակացության, թե իբր «միջակ գյուղացիությունը» շրջվել է կոլտնտեսությունների կողմը:[24] Նույն 1929-ին մարքսիստ ագրարագետների կոնֆերանսում ՆԷՊ-ի մասին Ստալինը մասնավորապես նշեց. «Եթե մենք ՆԷՊ-ի կողմնակից ենք, ապա այն պատճառով, որ այն ծառայում է սոցիալիզմի գործին: Իսկ երբ այն դադարի ծառայել սոցիալիզմի գործին, մենք այն գրողի ծոցը կնետենք» (բնագիրը՝ ռուսերեն):[25] Ստալինի համար այդ ժամանակն արդեն եկել էր: Համամիութենական կոմունիստական կուսակցության Կենտկոմի 1929 թ. նոյեմբերյան պլենումը, ստալինյան մոտեցմանը համապատասխան, արձանագրեց, թե «կոլեկտիվիստական շինարարության արդյունքներն ի հայտ են բերում գյուղատնտեսության արտադրական ուժերի աճի վիթխարի հնարավորություններ», թե «կոլխոզային շարժումն արդեն առանձին շրջանների առջև դնում է համատարած կոլեկտիվացման խնդիր»:[26] Այսպես ազդարարվում էր «գյուղատնտեսության սոցիալիստական վերափոխման *նոր պատմական էտապը*» (բնագիրը՝ ռուսերեն):[27]

Գյուղացիությանն իբրև դասակարգի քաղաքական վերացումը ստալինիզմը կատարում էր իդեոլոգիապես այն իդեալականացնելով: Իսկ իդեալականացնել հնարավոր էր միայն հերքելով մանր բուրժուազիայի ու հատկապես գյուղացիության «տատանվող» բնույթը, որը քաղաքական իրական վտանգ էր պարունակում: Քաղաքական վտանգի կանխումը ստալինիզմը վճռեց ոչ թե ՆԷՊ-ի ուղենշած տնտեսական պայքարով, այլ վերևից քաղաքական ուժի ուղիղ կիրառմամբ: Գյուղացիության դեմ հայտարարված քաղաքական այս կռիվը բացահայտ է դարձնում, թե ինչու 1928-ին Կոմունիստական կուսակցությունը պաշտոնապես Դաշնակցության ծագումը մանրբուրժուականի փոխարեն հռչակեց բուրժուական: Դաշնակցության բուրժուական բնույթի հռչակումը, նրան մանր սեփականատիրական իրականությունից կտրելն էր, որ թույլ էր տալիս միաժամանակ անմեղացնել գյուղացիությանը, այն դիտարկել իբրև գլխավորապես աշխատավորական տարր: Մյուս կողմից Դաշնակցությունը՝ որպես խոշոր բուրժուական կապիտալի մարտնչող կուսակցություն հայտարարելը մեծացնում, ուռճացնում էր Դաշնակցության ուժը: Այն դառնում էր «հայ իրականության հակահեղափոխական կուսակցություններից *ամենաազդեցիկն ու ամենավտանգավորը*»՝ թույլ տալով արդարացնել քաղաքական ուժի ուղիղ ու կոպիտ գործադրությունը (ընդգծումը՝ բնագրի):[28]

1920-ականներն այս անկյան տակ դիտված կնճռոտ մի շրջափուլ են հայաստանյան պատմության մեջ, երբ իրապես բեկվում էր մեր երկրի իրականությունը:[29] Հովհաննիսյանի համար Դաշնակցությունը խորհրդային երկրի *իրական* քաղաքական թշնամին էր, բառի ուղիղ իմաստով, քանի որ այն հայաստանյան *իրականության* կուսակցությունն էր: Ստալինիզմի համար քաղաքական հրահանգի ուժով իրականությունը ենթակա էր

---

[24] Иосиф Сталин, *Сочинения,* h. 12 (Москва: Государственное издательство политической литературы, 1952), էջ 124:
[25] Сталин, *Сочинения,* h. 12, էջ 171:
[26] *Коммунистическая партия Советского Союза в резолюциях и решениях съездов, конференций и пленумов ЦК,* h. 5 (Москва: Издательство политической литературы, 1984), էջ 29, 31:
[27] *КПСС в резолюциях*, էջ 31:
[28] ՀԱԱ, ֆ. 1, g. 8, գ. 8, թ. 161:
[29] Վարդան Ազատյանն, օրինակ, բացահայտելով 19-րդ դարավերջի ու 20-րդ դարասկզբի հայ երիտասարդության բարդ ու հակասալից գաղափարական հենքը պայմանավորած իրականությունը, միաժամանակ նշում է, թե «ստալինացման արդյունքում, բախումներով ու ներթափանցումներով լի այս շարժուն մթնոլորտը պետք է հետահայաց «մաքրվեր» ու անշարժացվեր, որպեսզի հարիր լիներ ինքն իրեն երիցս մաքուր հռչակած կուսակցական ղեկավար գծին»: Տե՛ս Ազատյան, ««Ոչ եղիցի չեղեալ, զոր ինչ եղևն», էջ 588:

վերափոխման, իսկ Դաշնակցությունը կուսակցություն էր, որը չէր ճանաչում տեղ ու պայման:

Սույն հետազոտությամբ փորձ ենք արել քայլ անել դեպի մեզ մեր իրականությանը հասու լինելու հնարավորությունից զրկելու պատմական կոնկրետ դրվագի: Այս ուղղությամբ գնալն է, որ հնարավորություն է տալիս բացահայտել հայաստանյան իրականության հանդեպ քաղաքական տարբեր դիրքավորումները (դաշնակցական, ազգային կոմունիստական, ստալինյան): Բայց ինչը թերևս առավել կարևոր է թվում, հայաստանյան իրականության գնահատման շուրջ 1920-ականներին ծավալված պայքարը թույլ է տալիս բացահայտել քաղաքական տարբեր օրակարգերի միջև բարդ, համընկնող ու տարամիտվող այն կապերը, որոնք այսօր մեզ գրեթե հայտնի չեն: Այլ կերպ ասած, բացահայտել այդ կապերը նշանակում է փորձ անել հասկանալ հայաստանյան իրականության պատմությունը, հասկանալ հայաստանյան իրականությանը տրված այն գնահատականը, որի ժառանգն ենք մենք այսօր: Ի վերջո, ստալինիզմի հաստատումը նշանավորեց ոչ միայն հայաստանյան իրականության մանրբուրժուական գնահատականի մոռացումը: Ստալինիզմի հաստատումը մոռացության տվեց նաև 1920-ականների բարդ ու բեկբեկումներով ծավալված քաղաքական այն պայքարը, որը մեր քաղաքական մտքի պատմության բեկումնային կետերից է: Այս կերպ, 1920-ականներին հայաստանյան իրականությունը գնահատելու շուրջ ծավալված կռիվը բացահայտելու փորձը միաժամանակ մարտահրավեր է հարաբերվելու հայաստանյան քաղաքական մտքի պատմության հետ՝ իր բարդությամբ հանդերձ:

Գլուխ 1

Դաշնակցությունը՝ «պատմության դատին»

«Սոցիալիստական փորձերը» Հայաստանում

1920-ին խորհրդային կարգերի հաստատմամբ ազգային պետություն կառուցելու տեսլականի փոխարեն Հայաստանը բռնեց սոցիալիստական երկիր դառնալու ճանապարհը: Քաղաքական այս բեկումը, սակայն, անցնցում իրադարձություն չէր: Կոմունիստների իշխանության հաստատումը հայաստանյան քաղաքական կյանքի կայունացման հերթական փորձաքարն էր: Դեռ 1919-1920 թվականների քաղաքական իրադարձերը վերհիշելով՝ Առաջին հանրապետության նախկին վարչապետ Սիմոն Վրացյանը գրում էր. «Կուսակցական կիրքն ու թշնամանքը այնքա՜ն կուրացրել էին նրանց (հայ կոմունիստներին՝ Ի. Շ.), որ «Դաշնակ»ների ետեւից չէին տեսնում Հայաստանն ու հայ ժողովրդին: Հայաստանը նրանց համար համաշխարհային յեղափոխութեան և կուսակցական հաշիւների առարկայ էր»:[30] 1920-ի նոյեմբերի վերջին և դեկտեմբերի առաջին օրերին կատարվածը դաշնակցականների համար հստակ գնահատական ուներ:

[30] Ս. Վրացեան, *Հայաստանը բոլշեւիկեան մուրճի եւ թրքական սալի միջեւ* (Պէյրութ: Տպ. «Համազգային» ընկերութեան, 1953), էջ 55:

«Ո՛չ հայ ժողովրդի յօժար կամքով», այլ արտաքին ուժերի ճնշման տակ «ժողովրդավար իրաւակարգի» փոխարեն հաստատվել էր «բռնատիրական կարգ»՝ խորհրդարանական կառավարությանը հաջորդել էր Հայաստանի Հեղափոխական կոմիտեի «միահեծան տիրակալութիւնը»:[31]

Անկախ դաշնակցականների տված գնահատականներից, այնուամենայնիվ, բաց հարց էր՝ արդյո՞ք հնարավոր էր Հայաստանում հաստատել սոցիալիստական կարգեր՝ ելնելով երկրի տնտեսական, սոցիալական կյանքի քայքայված դրությունից ու մշակութային զարգացվածության աստիճանից: Այս հարցն ուղղակիորեն շաղկապված էր Ռուսաստանի ու համաշխարհային սոցիալիստական հեղափոխության հնարավոր հեռանկարի հետ: Ռուբեն Դարբինյանը 1922-ին հրատարակված իր *Բոլշեւիզմը եւ Հայաստանը* գրքում պարզաբանում էր, թե «Ռուսաստանի նման տնտեսապէս, սօցիալապէս և կուլտուրապէս յետամնաց մի երկիր ոչ մէկ դէպքում չի կարող լինել առաջապահ՝ սօցիալիստական յեղափոխութեան համար»:[32] Ռուսաստանը գերազանցապես գյուղացիական երկիր էր, ուր կապիտալիզմը դեռ նոր էր սկսել թույլ նվաճումներ անել և որտեղ բանվորությունը համեմատաբար աննշան թիվ էր կազմում:[33] Տնտեսական զարգացման նման աստիճանի վրա գտնվող երկրում սոցիալիստական կարգեր հաստատելու քաղաքական պահանջն ինքնին խնդրահարույց էր թվում:[34] Ի՞նչ պետք է լիներ, ուրեմն, Հայաստանի պարագան, որտեղ «արդիւնաբերական խոշոր կապիտալ չկայ բնաւ: Հայ ժողովուրդը եթէ ունի մի փոքրաթիւ կապիտալիստական դաս, նա էլ գտնուում է Հայաստանի սահմաններից դուրս...: Իսկ Հայաստանի ներսում եղած կապիտալը վաշխառուական է և առևտրական գերազանցապէս»:[35] «Անպատրաստ, կապիտալիստօրէն անմշակ, յետամնաց իրականութեան» մեջ սոցիալիստական կարգեր հաստատելու փորձերը, Դարբինյանի գնահատմամբ, վտանգավոր ու վնասակար էին:[36] Միաժամանակ դրանք հարուցում էին անխուսափելի քաղաքական հետևանքներ. «Երբ ընկերվարական գաղափարի իրականացման համար անհրաժեշտ տնտեսական, ընկերային եւ կուլտուրական հողը չկայ *բռնութիւնը* անխուսափելի կը դառնայ իր բոլոր աւերումներով եւ վայրենութիւններով (ընդգծումը՝ Ռ. Դ.):[37]

---

[31] Վրացեան, *Հայաստանը բոլշեւիկեան մուրճի եւ թրքական սալի միջեւ*, էջ 139: Արտաշես Վանարյանին, օրինակ, Հայաստանի խորհրդայնացումը ներկայանում էր «ո՛չ թէ իբր տնտեսական, այլ միայն եւ միմիայն քաղաքական հարկեցուցիչ անհրաժեշտութիւն մը»: Վրացյանի համեմատ շատ ավելի սուր գնահատական տալով՝ Վանարյանը «տեղի ունեցածը» համարում էր «բռնի դաւանափոխութիւն»: Տե՛ս Արտաշէս Վանարեան, «Սօվիէթական Հայաստանը եւ անոր ուշ մնացած ջատագովները», *Հայրենիք*, 21 դեկտեմբերի 1920 թ.: Դաշնակցական պատմաբանության մեջ Հայաստանի խորհրդայնացմանն անդրադարձող գրականությունից տե՛ս, օրինակ, Հրաչ Տասնապետեան, *Դ.Յ. Դաշնակցութիւնը իր կազմութենէն մինչեւ Ժ. ընդհ. ժողովը (1890-1924)* (Աթէնք: «Դրօշակ»ի տպ., 1988), էջ 141-146; Յարութիւն Քիւրքճեան, *Ուրուագիծ Դ.Յ. Դ. պատմութեան 1919-1924 հնգամեակի* (Աթէնք: «Դրօշակ»ի տպ., 1988), էջ 43-51:

[32] Ռուբէն Դարբինեան, *Բոլշեւիզմը եւ Հայաստանը,* 2-րդ տպ. (Իզմիր: Տպ. Քէշիշեան, 1922), էջ 9:

[33] Ռուսաստանի հետհեղափոխական դրության մասին տե՛ս, օրինակ, Н. Верт, *История Советского государства* (Москва: ИНФРА-М, Весь Мир, 2002), էջ 116-162; Джузеппе Боффа, *История Советского Союза,* h. 1 (Москва: Международные отношения, 1990), էջ 15-135:

[34] Դարբինեան, *Բոլշեւիզմը եւ Հայաստանը*, էջ 9: Հայաստանում սոցիալիստական կարգերի հաստատման վաղաժամության մասին խոսում է նաև Արտաշես Վանարյանը *Ընկերվարութիւն եւ պոլշեւիզմ* (Պօսթըն: Տպ. Հայրենիք, 1922) գրքի համար գրված առաջաբանում, տե՛ս էջ [5-9]: Սոցիալիզմի հաստատման համար Հայաստանի պայմանների անպատեհության մասին տե՛ս գրքի «Թշուառութիւնն ու աղքատութիւնը հող չեն ընկերվարութեան իրականացումին» գլուխը (էջ 175-186):

[35] Դարբինեան, *Բոլշեւիզմը եւ Հայաստանը*, էջ 31: Դարբինյանի գնահատմամբ հայ աշխատավորության ձեռքը «գիւղերում–ոչինչ» չէր ընկնելու, իսկ քաղաքներում՝ «շատ և շատ չնչին բան, որ նա կսպառէ ամենաշատը մէկ ամսւայ ընթացքում»: Տե՛ս Դարբինեան, *Բոլշեւիզմը եւ Հայաստանը*, էջ 31:

[36] Դարբինեան, *Բոլշեւիզմը եւ Հայաստանը*, էջ 31:

[37] Ռ. Դարբինեան, «Յառաջաբանի տեղ», ըստ՝ Վանարեան, *Ընկերվարութիւն եւ պոլշեւիզմ,* էջ [6-7]:

Հայաստանի խորհրդայնացումը, սակայն, փաստ էր արդեն:[38] 1920-ին խորհրդային կարգերի հաստատումից հետո Հայաստանը որդեգրել էր գրոհով սոցիալիզմի կառուցման «ռազմական կոմունիզմի» ճանապարհը, որն իր հետ բերեց տնտեսության կազմակերպման քաղաքական կոպիտ ու ուղիղ միջոցներ:[39] Վրացյանը խորհրդայնացմանը հաջորդած առաջին շրջանի իրադարձությունների մասին հետահայաց հիշում է.

> ....Հայաստան մուտք գործեց Յեղկոմը և հետը մի քանի հարիւր քոսոտ կարմիր բանակայիններ ու հայ բոլշեւիկներ՝ շատերը ծանոթ մայիսյան խռովութիւններից իրենց զանազան արարքներով – Ս. Կասեան, Աս. Մռաւեան, Աւիս Նուրիջանեան, Աշ. Յովհաննիսեան, արիւնկզակ Աթարբէգեան և ուրիշներ:.... Երկրի բոլոր կողմերում խուզարկութիւններ և անվերջ ձերբակալութիւններ էին տեղի ունենում: Հայաստանի բանտերը բերնէ բերան լեցուեցին կալանաւորներով:.... Երեւանում և ամբողջ երկրում կատարւում էին անկանոն և անհաշիւ բռնագրաւումներ:[40]

«Ռազմական կոմունիզմի» պայմաններում սկսված մեծամասշտաբ բռնագրավումների վկաներից՝ Առաջին հանրապետության վարչապետ Հովհաննես Քաջազնունու նկարագրմամբ «բոլշեւիկեան եռանդի մի կէսը ծախսւում էր Չեկայի և յարակից գործողութիւնների վրայ, միւս կէսը՝ խուզարկութիւնների ու բռնագրաւումների վրայ: Բռնագրաււում էր ամէն բան՝ սկսած տնից, կառքից, գրաստից, վառելիքից և վերջացրած երաժշտական գործիքով, լուացքի սապոնով, թել-ասեղով...»:[41]

Հայաստանում, ուր բացակայում էր կամ գրեթե բացակայում էր խորը դասակարգային շերտավորումը, կոմունիստները ենթադրում էին խորացնել այդ շերտավորումը, վարել դասակարգային կռվի քաղաքականություն:[42] Վրացյանի խոսքով, խորհրդայնացումից հետո Հայաստանում իշխանությունն ըստ էության հանձնվել էր Գևորգ Աթարբեկյանին (Համառուսական Չեկայի լիազոր ներկայացուցիչը) ու Ավիս Նուրիջանյանին (զինվորական կոմիսարը): Հենց նրանք էին, որ ամբողջ թափով սկսել էին ««զարգացնել

---

[38] Հայաստանը խորհրդային հանրապետություն հռչակելու մասին Հայաստանի Հեղափոխական կոմիտեի 1920-ի նոյեմբերի 29-ի հռչակագիրը միաժամանակ ուրվագծեց նոր իշխանության որդեգրած արտաքին ու ներքին քաղաքականությունը, տե՛ս «Դեկլարացիա. Հայաստանը Սօցիալիստական Խորհրդային Հանրապետութիւն յայտարարելու մասին», *Հ.Ս.Խ.Հ. դեկրետների եւ հրամանների ժողովածու*, պ. 1 (էջմիածին: Գիտական ինստիտուտի տպարան, 1921), էջ 1-5: Հայաստանում խորհրդային կարգերի հաստատման մասին տե՛ս Վլադիմիր Ղազախեցյան, *Հայաստանը 1920-1940 թթ.* (Երևան: Պատմության ինստիտուտ, 2006), էջ 9-21; Ռիչարդ Հովհաննիսյան, *Հայաստանի Հանրապետություն,* հ. 4 (Երևան: Տիգրան Մեծ, 2016), էջ 437-459; Արմենակ Մանուկյան, *Քաղաքական կյանքը Հայաստանում 1920-1940 թթ.* (Երևան: Գիտություն, 2002), էջ 14-45:

[39] «Ռազմական կոմունիզմը» նպատակ ուներ սոցիալիստական տնտեսվարման հասնել՝ շրջանցելով ապրանքադրամական հարաբերությունները, շուկան, փողը, իրացնել կոմունիստական սկզբունքներն արտադրության և բաշխման նկատմամբ: «Ռազմական կոմունիզմում» կենտրոնականը պարենմասնատրումն էր: Բռնագրավվում էր գյուղացու հացը (մնում էր միայն ուտելու և սերմացուի բաժինը), պետականացման էին ենթարկվում բոլոր գործարանները, արհեստանոցները և այլ արտադրամիջոցները: Ենթադրվում էր պարտադիր աշխատանք և այլ միջոցառումներ: Ռուսաստանում «ռազմական կոմունիզմի» քաղաքականությունների մասին տե՛ս Берт, *История Советского государства*, էջ 133-162; Боффа, *История Советского Союза*, էջ 123-135: Մասնավորապես Հայաստանում «ռազմական կոմունիզմի» շրջանի մասին տե՛ս Ղազախեցյան, *Հայաստանը 1920-1940 թթ.*, էջ 21-26; Վլադիմիր Ղազախեցյան, *Սովետական Հայաստանի գյուղացիության պատմությունը 1920-1929 թթ.* (Երևան: Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 1975), էջ 61-71:

[40] Վրացեան, *Հայաստանը բոլշեւիկեան մուրճի եւ թրքական սալի միջեւ*, էջ 143-144:

[41] Տե՛ս Վրացեան, *Հայաստանը բոլշեւիկեան մուրճի եւ թրքական սալի միջեւ*, էջ 148: Խորհրդայնացմանը հաջորդած առաջին շրջանում Հայաստանում ծավալված իրադարձությունների մասին տե՛ս Ղազախեցյան, *Հայաստանը 1920-1940 թթ.*, էջ 21-26:

[42] Հայաստանում դասակարգային պայքարի խորացման կոմունիստների դիրքորոշման մասին տե՛ս Ղազախեցյան, *Հայաստանը 1920-1940 թթ.*, էջ 21-26:

քաղաքացիական կռիւը» եւ «խորացնել բանւորա-գիւղացիական յեղափոխութիւնը»»:[43] Վերհիշելով Աթարբեկյանի ու Նուրիջանյանի հետ 1920-ի փետրվարի 4-ին կայացած իր հանդիպումը Վրացյանը գրում է.

> Ըստ Աւիսի, առանց քաղաքացիական կռուի ո՛չ մի պրոլետարական դիկտատուրա գոյութիւն չէր կարող ունենալ: Բոլոր խորհրդային երկրներում քաղաքացիական կռիւը անխուսափելի է: Հայաստանն էլ պէտք է անցնի քաղաքացիական կռուի բովից: Հայաստանի յաղթական պրոլետարիատն ու կարմիր գիւղացիութիւնը, իրենց ձեռքն առնելով իշխանութիւնը, պէտք է հրապարակից վերացնեն խորհրդային իշխանութեան բոլոր թշնամիներին: Ծիծաղելի է խօսել դասակարգային համերաշխութեան մասին: Ի զուր են Դաշնակները սարսափում քաղաքացիական կռուից–մենք՝ կոմունիստներս ձգտում ենք քաղաքացիական կռուի եւ, որքան շուտ գայ նա, այնքան լաւ:[44]

Քաղաքական ու տնտեսական կյանքի վայրիվերումների այս հետնախորքի վրա են բացվում փետրվարի 18-ից մինչև ապրիլի 4-ը Հայաստանում ծավալված իրադարձությունները՝ գյուղացիական ապստամբությունը, Երևանում դաշնակցականների իշխանության հաստատումը, ապա, 11-րդ կարմիր բանակի Հայաստան մտնելով, իշխանության հետ անցումը կոմունիստներին: Վրացյանը հաստատակամորեն պնդում էր, որ Դաշնակցությունն ամեն «ճիգ թափում» էր խուսափելու քաղաքացիական կռվից. կատարվածն ամբողջությամբ բոլշևիկյան անհեռատես քաղաքականության արդյունք էր:[45] Վրացյանը հատուկ շեշտում էր, որ Փետրվարյան ապստամբությունը «նախամտածուած ու ծրագրուած քաղաքականության (այսինքն՝ Դաշնակցության քաղաքականության՝ Ի. Շ.) արդյունք չէր», այլ «համազգային ցասումի տարերային պոռթկում էր»:[46] Իր հուշերում հանրապետության նախկին վարչապետը մեկ անգամ չէ, որ խոսում է իշխանությունից հրաժարման ու այն սպասումների մասին, որ կապված էին հայ բոլշևիկների իշխանության հաստատման հետ. «Մեզ թւում էր, թէ նրանք կը կարողանան հասկանալ Հայաստանի բացառիկ փափուկ դրութիւնն....»:[47] Վրացյանի համար ակնհայտ էր, որ պրոլետարիատ չունեցող, գյուղացիական Հայաստանում հնարավոր չէր կիրառել նույն քաղաքականությունը, ինչ Ռուսաստանում. «Գիւղացիական Հայաստանում հնարաւոր չէր մտցնել հետեւողական *սոցիալիզացիա,* բայց չէ՞ որ բոլշեւիկներն իրենք էլ այնքան կարծամիտ չեն լինի, որ չհասկանան այս տարբերութիւնը Ռուսաստանի ու Հայաստանի միջև...» (ընդգծումը՝ Ս. Վ.) (էջ 271):

Դեռ 1920-ի հունվարին Հեղկոմի նախագահ Կասյանի հետ կայացած հանդիպման ժամանակ Վրացյանը շեշտում էր Հայաստանի գյուղացիական երկիր լինելու հանգամանքը (էջ 272): Միաժամանակ նա նշում էր հայ կոմունիստների իշխանության հաստատման նախապայմանը. «Կոմունիստները Հայաստանում նոր մարդիկ են եւ հայ

---

[43] Ս. Վրացեան, *Կեանքի ուղիներով. դէպքեր, դէմքեր, ապրումներ*, հ. 5 (Բէյրութ: Տպ. «Համազգային», 1966), էջ 229:
[44] Վրացեան, *Կեանքի ուղիներով,* էջ 281:
[45] Վրացեան, *Կեանքի ուղիներով,* էջ 286:
[46] Վրացեան, *Հայաստանը բոլշեւիկեան մուրճի եւ թրքական սալի միջեւ*, էջ 163-164: Փետրվարյան ապստամբության որոշ վավերագրեր տե՛ս *Պատմագրություն Հայ Յեղափոխական Դաշնակցության,* հ. 4 (Ա. տ.: Ա. հ., Ա. թ.), էջ 148-181: Հայ պատմագիտության մեջ Փետրվարյան ապստամբության լուսաբանումները քննելու փորձերից տե՛ս, օրինակ, Արարատ Հակոբյան, *ՀՍԽՀ 1921 թ. ներքաղաքական կյանքի պատմության հիմնահարցերը հայ պատմագիտության մեջ* (Երևան: Ա. հ., 2014), էջ 9-140; Խաչատուր Ստեփանյան, *1921 թ. Փետրվարյան հակաբոլշևիկյան ապստամբությունը Հայաստանում* (Երևան: Լուսակն, 2021):
[47] Վրացեան, *Կեանքի ուղիներով,* էջ 218: Տեքստից հետագա մեջբերումները՝ տողամիջում:

ժողովրդին անծանօթ: Որպէսզի իրենց իշխանութիւնը դարձնեն ամուր ու տեւական, նրանք պէտք է աշխատեն գրաւել լայն զանգուածների համակրանքը» (էջ 272):

Իրենք՝ դաշնակցականներն էլ ոչ վաղ անցյալում՝ 1920-ին, նույն այդ լայն զանգվածների համակրականքը շահելու մարտահրավերի առաջ են կանգնած եղել: Այդ մասին է վկայում ինքը՝ Վրացյանը, երբ հետահայաց անդրադառնում է 1920-ին դաշնակցականների իշխանության անկման դրվագին: «Անկուսակցական զանգվածը, մանաւանդ, քաղքենի տարրը» քաղաքականապես «օրօրուել» էր: Խաղաղության, քաղաքական պաշտպանության, «հաց ու մանուֆակտուրայի» ակնկալիքով, ըստ Վրացյանի, «քաղքենի տարրը»՝ գյուղացին, արհեստավորն ու խանութպանը, հակվել էր դեպի Ռուսաստանը:[48]

Այժմ նույն «քաղքենի տարրի» հետ քաղաքականապես հաշվի նստելու խնդրի առաջ էին կանգնած հայ կոմունիստները: *Հայրենիքի* 1925 թվականի համարներից մեկում թերթի խմբագրականը, քննադատելով բոլշևիկյան քաղաքական կուրսի բացթողումները, նշում էր. «....Հակադաշնակցական հոսանքները վերապահած էին իրենց միայն *խօսքի* հաճոյքը, առանց *գործի* դառնութիւնը ճաշակելու: Անոնք կ'արհամարհէին հայ կեանքը իր քաղքենի միջավայրով եւ հոն կուսական ովասիսներ կ'որոնէին իրենց դաւանանքը անաղարտ ձեւով վարդապետելու համար» (ընդգծումը՝ բնագրի):[49]

Արդյոք Փետրվարյան ապստամբության խորքային պատճառը քաղքենիության հերթական տատանումն ու օրորվելը չէ՞ր, հայ քաղքենիության հակընդդեմ քայլը բոլշևիկների՝ քաղքենիական միջավայրն արհամարհելուն ի պատասխան:[50] Դաշնակցականներն իրենք իրենց համարում էին այն քաղաքական հոսանքը, որը «կը խօսի՛ հայ ժողովուրդի 95 տոկոսի անունէն եւ կը պաշտպանէ այդ 95 տոկոսին, իսկ երբեմն՝ նաեւ բովանդակ հայ ժողովուրդին շահերը»:[51] Իսկ «ովքե՞ր են այդ հայ բոլշեւիկ կոչեցեալները»,– հարցնում է *Հայրենիք* թերթի հոդվածագիրներից մեկը:

> Անցեալում, ի՛նչ խօսք, որ նոյնն է նաև ներկայումս, հայ բուրժուազիան մեզ համար միանգամայն խորթ տարր է եղել: Նա ոչնչով կապւած չի եղել հայ աշխատաւոր ու միջին խաւերի հետ:
> Հային նա ճանաչել է այն չափով, ինչ չափով որ նա շահագործման աղբիւր է եղել իրեն համար: Հայ բուրժուազիան կ'ամրանար այնտեղ, որտեղ նա կը զգար իրեն լաւ ու ապահով, առանց երբևէ երես դարձնելու դէպի հարազատ երկիրն ու հարազատ ժողովուրդը:
> Վստահօրէն կարելի է ասել, որ հայ բոլշեւիկները նրանց ամենահարազատ ժողովուրդներն են: Մի Աշոտ Յովհաննիսեանի, կամ Լուկաշինի եւ կամ ամէն մի հայ բոլշեւիկի համար միևնոյն է, լինել Հայաստանում, Խիւայում կամ Սիբիրում:[52]

Դաշնակցականների իսկ գնահատմամբ Հայաստանում քաղաքական կուսակցության հարազատության չափանիշն աշխատավորության ու միջին խավերի հետ կապվածությունն էր: Կոմունիստներին կապելով տեղ չճանաչող բուրժուազիայի հետ՝ դաշնակցականները նույն կերպ տեղից կտրված պետք է համարեին նաև մեծամասնական

---

[48] Վրացեան, *Հայաստանը բոլշեւիկեան մուրճի եւ թրքական սալի միջեւ*, էջ 141:
[49] «Պոլշեւիզմէն դէպի Դաշնակցութիւն», *Հայրենիք*, 1 սեպտեմբերի 1925 թ.:
[50] *Հայրենիքի* նույն խմբագրականի դիտարկմամբ «մեր դաժան իրականութիւնը իր բովանդակ ծանրութեամբ չէր նստած տակաւին անոնց (կոմունիստների՝ Ի. Շ.) ուսերուն եւ անոնք տակաւին չէին կքած իրենց մէջքը այդ ահաւոր ծանրութեան տակ»: Տե՛ս «Պոլշեւիզմէն դէպի Դաշնակցութիւն», *Հայրենիք*, 1 սեպտեմբերի 1925 թ.:
[51] «Պոլշեւիզմէն դէպի Դաշնակցութիւն», *Հայրենիք*, 1 սեպտեմբերի 1925 թ.:
[52] Անցորդ, «Բաց նամակ Յ. Քաջազնունիին», *Յուսաբեր*, 12 օգոստոսի 1924 թ.:

քաղաքականությունը: Դրա հակառակ բևեռում, ուրեմն, իրենք դաշնակցականներն էին՝ հայ ժողովրդի 95 տոկոսի, հայ աշխատավոր ու միջին խավերի կուսակցությունը:[53]

Ընդհանուր այս գնահատականը կիսելով հանդերձ՝ դաշնակցականների շրջանում կոմունիստ գործիչների հանդեպ վերաբերմունքի որոշ տարբերություններ են նկատվում: Ինքը՝ Վրացյանը, կոմունիստների հանդեպ ունեցած քաղաքական հակառակորդի դիրքորոշմամբ հանդերձ, իր հուշերում տարբերակում է Աթարբեկյանի ու Ավիսի գործելակերպը Կասյանի, Մռավյանի «եւ, առհասարակ, *խոհեմութեան կուսակիցների»* մոտեցումից, որոնց նա բնորոշում է իբրև «Յեղկոմի *չափաւոր անդամներ»* (ընդգծումը՝ Ի. Շ.):[54] Հիշելով 1921-ի փետրվարի 9-ին Երևանում տեղի ունեցած ծերբակալությունների առիթով Ասքանազ Մռավյանի հետ իր հանդիպումը, Վրացյանն ինքը վերապատմում է վերջինիս խոսքերը. «Ինքը (Մռավյանը՝ Ի. Շ.) հակառակ է խիստ միջոցների, բայց իրենց մէջ էլ կան կուսակցական ներքին տարակարծութիւններ եւ պատահածը դրա արդիւնք է...»:[55]

Նույն Մռավյանը, արդեն սկսված քաղաքացիական պատերազմի օրերին նամակ է ուղղում Մոսկվայում գտնվող հայ գործընկերներին, որպեսզի վերջիններս Լենինին հաղորդեին նամակի բովանդակությունը՝ համապատասխան օգնություն ստանալու ակնկալիքով:[56] Մռավյանը պարզաբանում էր «դաշնակցական արկածախնդրության» պատճառները. Հայաստանում ու հատկապես Երևանում դաշնակցականները ծերբակալվում էին մասսայաբար, «մամուլն աղմկոտ, ճչան տոնով կոչում էր քաղաքացիական պատերազմի մասին:[57] Մթնոլորտը շիկանում էր յուրաքանչյուր ժամ» (բնագիրը՝ ռուսերեն) (թ. 1): Նամակում Մռավյանն ինքն էլ վկայում էր Վրացյանի այցի մասին. «Վրացյանն ինձ մոտ էր և զգուշաբար նախազգուշացնում էր բռնաճնշումների քաղաքականության մասին, փաստարկելով, որ այդ քաղաքականությունը միայն ուժեղացնում է մեր հակառակորդ-դաշնակցականներին» (թ. 1 և հակ.):[58] «Մի խոսքով,– շարունակում է բացատրել Մռավյանը,– մենք դաշնակցականների դեմ բաց, սուր և կատաղի պայքարի համար բոլորովին պատրաստ չէինք» (թ. 3-ի հակ.): Մռավյանի գնահատմամբ Կենտկոմի վերջին ամսվա քաղաքականությունը բնակչության շրջանում խորհրդային իշխանության դեմ առաջացրել էր «շատ նկատելի հոգեբանական ռեակցիա» (թ. 3-ի հակ. և 4):

---

[53] Ժողովրդի կուսակցությունը լինելու Դաշնակցության այս հավակնությունն ըստ էության հաստատված մոտեցում էր դաշնակցականների շրջանում: Վահան Նավասարդյանն այս առիթով գրում էր. «Արգելքներ ու խոչընդոտներ յարուցել Դաշնակցութեան առջև,–այդ նշանակում է գիտակցաբար հարուած իջեցնել հայ ժողովրդին և խավարով պատել նրա լուսաւոր երթը»: Տե՛ս Վ. Ն., «Մեր անելիքը. Պահենք Դաշնակցութիւնը», *Յուսաբեր,* 19 փետրվարի 1924 թ.: Առաջին հանրապետության անդրանիկ վարչապետ Քաջազնունին իր հերթին նշում էր. «Հայաստանի կեանքը՝ Հ. Յ. Դաշնակցութեան իսկ կեանքն է, ու մահը՝ նրա մահը»: Տե՛ս Տօք. Փ. Ա. Ադամեան, «Ազգային օրիէնտացիա», *Հայրենիք,* 15 օգոստոսի 1922 թ.:

[54] Վրացեան, *Կեանքի ուղիներով,* էջ 229, 234:

[55] Վրացեան, *Կեանքի ուղիներով,* էջ 285:

[56] ՀԱԱ, ֆ. 114, g. 2, գ. 79, թթ. 1-6: Տեքստից հետագա մեջբերումները՝ տողամիջում:

[57] Մռավյանը հիշատակում է նաև էսէռ Տեր-Ներսեսյանի ու մենշևիկ Անանունի ծերբակալության մասին (թ. 1):

[58] Տարվող այս քաղաքականությունը, պարզաբանում էր Մռավյանը, ղեկավարում էր Գևորգ Ալիխանյանը, ունենալով կուսակցության Կետրոնական կոմիտեի (Կենտկոմի) հավանությունը, առանց սակայն, Հայաստանի հեղափոխական կոմիտեի (Հեղկոմի) թույլտվության: Նամակում Մռավյանն անդրադառնում էր նաև Ռուսաստանի կոմունիստական կուսակցության Կենտկոմի Կովկասյան բյուրոյի նախագահ Սերգո Օրջոնիկիձեի այն զգուշացումներին, որ տարվող պայքարը կարող է վերածվել ընդդեմ մտավորականության պայքարի, որ պետք չէ ձեռք տալ Դրո-Վրացյան խմբին: Այդ մասին, լրացնում էր Մռավյանը, ինքը և Կասյանը տեղեկացրել էին Օրջոնիկիձեին՝ միաժամանակ միտված լինելով հեռանալ Կենտկոմից և Հեղկոմից (թ. 1-ի հակ.):

Իր հերթին Հեղկոմի նախագահ և Կենտկոմի անդամ Սարգիս Կասյանը Հայաստանում ստեղծված իրադրության մասին տեղեկացրել էր Օրջոնիկիձեին:[59] 1921-ի մարտի 29-ի գրության մեջ Կասյանը հայտնում էր, որ Հայկոմկուսի Կենտկոմի մեծամասնության «քյալլագյոզական քաղաքականությունը» հասցրել էր նրան, որ «բնակչությունը կտրուկ երես էր դարձրել խորհրդային իշխանությունից և կրկին նետվել էր դաշնակների գիրկը» (բնագիրը՝ ռուսերեն) (թ. 1): Կասյանի խոսքով՝ «մենք (մեծամասնականները՝ Ի. Շ.) պետք է դա խոստովանենք, չնայած արտաքին աշխարհի համար բղավում ենք բոլորովին այլ բան» (թ. 1): Կասյանի գնահատմամբ երկրում իրականացվող քաղաքականությունը «վերջնականապես գցել էր խորհրդային իշխանության հեղինակությունը բնակչության լայն շրջանների աչքում և վանել նրան այդ իշխանությունից» (թթ. 1-2): Վերլուծելով ստեղծված դրությունը՝ Կասյանը եզրակացնում էր, որ բնակչության համակրանքը վերանվաճելու համար (քանի որ խորհրդային իշխանությունը չունի դասակարգային և ռազմական հենարան) հարկավոր էր խորհրդային իշխանության վերահաստատումից անմիջապես հետո սահմանել երկրի սոցիալ-տնտեսական պայմաններին համապատասխան որոշակի և պարտադիր քաղաքականություն և հաստատել միասնական իշխանություն (թ. 2):[60]

Հայ կոմունիստների միջև, ուրեմն, տարամետ դիրքորոշումների կրողներ կային: Սա փաստ էր, որը կոմունիստներին ուղղված սուր քաղաքական քննադատությունը կիսելով հանդերձ, հաշվի էին առնում նաև դաշնակցականներից ոմանք, ինչպես օրինակ, Վրացյանը:[61] Մյուս կողմից փաստ էր, որ կոմունիստների համար Դաշնակցությունը գլխավոր քաղաքական թշնամու կարգավիճակ ուներ: Սակայն հայ կոմունիստների շարքերում կային պրոլետարիատի իշխանությունն առավելապես բռնի մեթոդներով հաստատելու կողմնակից և առավել մեղմ քաղաքականության հետևող կոմունիստներ, որոնք հաշվի էին առնում Հայաստանի առանձնահատուկ պայմանները, ինչպես Կասյանը կամ Մռավյանը: Քաղաքական այս բարդ կապերն ու տարամիտումներն իրենք ըմբռնելի են դառնում հայաստանյան իրականության ու դրա վրա գործադրվող քաղաքականությունների փոխհարաբերման անկյան տակ դիտված:

Հայաստանյան ո՞ր խավերն էին քաղաքականապես «օրորվել» ու թիկունք դարձրել 1920-ին դաշնակցական կառավարությունից, ո՞ւմ աչքում էր հեղինակազրկվել 1920-21-ին խորհրդային իշխանությունը, քաղաքական ո՞ր ուժն էր ըմբռնում Հայաստանի «բացառիկ փափուկ» դրությունը: Քաղաքական իշխանության ու հայաստանյան «լայն խավերի» հանդեպ գործադրվող քաղաքականությունը մարտահրավեր էր եղել թե՛ դաշնակցականների, թե՛ «ռազմական կոմունիզմը» գործադրած կոմունիստների, թե՛ առավել մեղմ քաղաքականության կողմնակից ազգային կոմունիստների համար: Փետրվարյան դեպքերն այս կերպ կարող են բացվել պարզ հարցի անկյան տակ. ինչպե՞ս էր հեղափոխական քաղաքականությունը Հայաստանում ծնել հակահեղափոխություն և

[59] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1021, ց. 2, գ. 1237, թ. 1-2: Տեքստից հետագա մեջբերումները՝ տողամիջում:

[60] Կասյանն առաջարկում էր ցրել հեղինակազուրկ Կենտկոմը, նշանակել նորը, ապա արմատապես փոխել Հեղկոմի կազմն ու անդամների թիվը, այն դարձնել միատարր: Ուշագրավ է մեղմ քաղաքականությունները մերժողներից Ադրբեջանից ուղարկված ՀՍԽՀ Գերագույն ռազմական տրիբունալի նախագահ, կոմունիստ Սերգեյ Բակշինովի զեկույցը 1921-ի փետրվարին ուղարկված ՌԿ(բ)Կ Կովկասյան բյուրոյին: Վերջինս պնդում էր, որ Հայհեղկոմի անդամների մեջ կան մարդիկ, ովքեր գտնում են, թե «չպետք է պարել Բաքվի նվագի տակ», թե չպետք է գրգռել քաղաքացիական պատերազմ»: Նա դժգոհում էր, թե չի կարողացել աշխատել, քանի որ ամեն վայրկյան իր վրա զգացել է Հեղկոմի ճնշումը, որը «ոչ միայն չէր ցանկանում մտածել իր բացահայտ թշնամիներին գնդակահարելու, այլև նույնիսկ նրանց ձերբակալելու մասին»: Արխիվային նյութին հղումը տե՛ս Ղազախեցյան, *Հայաստանը 1920-1940 թթ.,* էջ 34:

[61] Հայաստանի կոմունիստական կուսակցության ներսում ծագած տարաձայնությունների մասին տե՛ս, օրինակ, Արարատ Հակոբյան, *Միակուսակցական վարչակարգի ձևավորումը Խորհրդային Հայաստանում* (Երևան: Պատմության ինստիտուտ, 2016), էջ 287-294; Ղազախեցյան, *Հայաստանը 1920-1940 թթ.,* էջ 21-22:

արդյո՞ք քաղաքականապես հնարավոր էր երաշխավորել, որ հայաստանյան միջին խավերը կրկին չէին «օրորվի» ու չէին հակվի դեպի Դաշնակցությունը:

Աշոտ Հովհաննիսյանն արդեն 1922-ի հունվարին Հայաստանի կոմունիստական կուսակցության առաջին համագումարի ժամանակ արված իր մի դիտարկմամբ ուղղորդում էր դեպի այդ հարցի հնարավոր պատասխանը: Հովհաննիսյանն անթաքույց հայտարարում էր. «Հակահեղափոխությունը չէր ստեղծվում Դաշնակների աշխատասենյակներում, այլ հանդիսանում էր մեր քաղաքականության արդյունքը, ինչի մասին վկայում են բազմաթիվ փաստեր»:[62] 1925-ին հետահայաց գնահատելով կատարված դեպքերը՝ Հովհաննիսյանը երևան էր բերում դրանց սոցիալական հիմնապատճառները: Դրանք հիմնապատճառներ էին, որոնք ուղղակիորեն կապված էին հայաստանյան միջակ գյուղացիության հանդեպ որդեգրված քաղաքականությունների հետ՝ ընդ որում ինչպես Առաջին հանրապետության ժամանակ, այնպես էլ խորհրդային իշխանության առաջին տարիներին: Հովհաննիսյանի գնահատմամբ՝ Դաշնակցության քաղաքականությունը 2-3 տարում առաջացրել էր միջակ գյուղացիության տնտեսական քայքայում՝ նետելով նրան «չքավորության գիրկը»:[63] Տնտեսական այս իրադրությունն էր, որ իր հետ բերել էր քաղաքական հետևանքներ: Ըստ Հովհաննիսյանի՝ խորհրդային իշխանությունը նոյեմբերի 29-ին հաղթանակել էր չքավոր ու միջակ գյուղացիության միջև առաջացած զոդման, այլ ոչ թե քաղաքական կազմակերպման հետևանքով: Հովհաննիսյանի քաղաքական սթափությունը, սակայն, թույլ էր տալիս նույն չքավոր ու միջակ գյուղացիության հանդեպ որպես արդեն խորհրդային իշխանության որդեգրած քաղաքականության հետևանք տեսնել մեծամասնականների իշխանության տապալումը: Խորհրդային կարգերի հռչակումից հետո, ըստ Հովհաննիսյանի, մեծամասնականները չէին կարողացել քաղաքական ու տնտեսական ձևեր ստեղծել չքավոր ու միջակ գյուղացիության քաղաքական դաշինքի համար: Հովհաննիսյանի մոտեցմամբ, ուրեմն, հենց գյուղացիության հանդեպ ձախողված քաղաքականության հետևանքն էր այն «անխուսափելի քաղաքական տեռորը», որ կիրառվել էր նոյեմբերի 29-ից մինչև փետրվարի 18-ը՝ արդյունքում հանգեցնելով մեծամասնականների իշխանության տապալմանը. «Մենք չքավորության կարող եյինք զարգացնել ի հաշիվ միջակ գյուղացիության յեվ միջակ գյուղացիության տրամադրությունը փոխվում ե հոգուտ դաշնակցության: Սրա հետեվանքովն ե, վոր փետրվարին բռնկում ե դաշնակցական ապստամբությունը»:[64] Այս «հետաքրքիր յերեվույթն» էր, որ բացահայտում էր հայաստանյան քաղաքական կյանքի «տատանումների» սոցիալական երեսակը:[65]

---

[62] ՀԱԱ, ֆ. 1, ց. 2, գ. 1, թ. 10: Փետրվարյան ապստամբության սոցիալ-քաղաքական պատճառներն էր վերլուծում Հովհաննիսյանն իր «Հրէշավոր թիւրիմացութիւն» հոդվածում, տե՛ս *Կոմունիստ*, 17, 19 ապրիլի 1921 թ.:

[63] ՀԱԱ, ֆ. 1, ց. 5, գ. 1, թ. 40:

[64] ՀԱԱ, ֆ. 1, ց. 5, գ. 1, թթ. 40-41: Ուշագրավ է այս առումով Նորայր Սարուխանյանի մի վերհուշը Հովհաննիսյանի մասին: 1966-ին, երբ Պատմության ինստիտուտի գիտական խորհուրդը քննարկում է *Հայ ժողովրդի պատմության* 7-րդ հատորը, դիմելով 1921-ի քաղաքացիական կռիվների մասին գլխի հեղինակ Արշավիր Հակոբյանին, Հովհաննիսյանը նկատում է. «Ընկեր Հակոբյան, դուք գրել եք, որ երբ խռովարարները գրավում են Երևանի մեծ մասը, Հայաստանի կոմկուսի ղեկավարությունը և Հեղկոմը նահանջում են Ղամարլու: Ես, որպես այն ժամանակվա կառավարության անդամ, լուսավորության ժողկոմ, հայտարարում եմ, որ մենք չենք նահանջել, փախել ենք և ցավոք, այնպես ենք փախել, որ չենք հասցրել տեղաշոր վերցնել: Հանուն ճշմարտության, դուք պետք է բացատրեիք Փետրվարյան խռովության կամ հեղափոխության, ինչպես կուզեք, գլխավոր պատճառը, այն է՝ հաղթանակած խորհրդային իշխանությունը չկարողացավ բավարարել հայ գյուղացիության տնտեսական, հատկապես գաղթականության սոցիալական ամենատարրական պահանջները, որոնք և կարողացան օգտագործել դաշնակցականները ընդդեմ նորեկ խորհրդային վարչակարգի: Այս է պատմական եղելությունը, ուրիշ բացատրություն չկա»: Տե՛ս Սարուխանյան, *Մտորումներ և հուշեր*, էջ 70:

[65] ՀԱԱ, ֆ. 1, ց. 5, գ. 1, թ. 40:

«Դաշնակցության գերեզմանափորը»

Փետրվարյան ապստամբությունից հետո Հայաստանում խորհրդային իշխանության քաղաքականությունը մեծ բեկում ապրեց: Երևանում կոմունիստների վերահաստատումից անմիջապես հետո Օրջոնիկիձեն հայաստանյան իշխանություններին հայտնում էր, որ հարկավոր էր «անմիջապես դիմել ներման և լիբերալ ռեժիմի հաստատման նոր կուրսի»: Այդ էր, ըստ Օրջոնիկիձեի, իր ուղարկած հեռագրի «նրբերանգը», որպիսին ավելացնում էր նա, «թելադրվում է Մոսկվայի կողմից» (բնագիրը՝ ռուսերեն):[66] Այս պահանջի համատեքստում էր, որ Հայաստանում ղեկավարությունից հեռացան Գևորգ Ալիխանյանը, Գևորգ Աթարբեկյանը, փոխվեց Ավիս Նուրիջանյանի պաշտոնը. գործիչներ, որոնք առնչվում էին երկրում իրականացված կոպիտ քաղաքականությունների հետ: Հանրապետության Ռազմահեղափոխական կոմիտեն վերակառուցվեց Ժողովրդական կոմիսարների խորհրդի՝ Ալեքսանդր Մյասնիկյանի նախագահությամբ: Փոխվեց նաև կուսակցական ղեկավարությունը: Կենտրոնական կոմիտեի քարտուղար դարձավ Սարգիս Լուկաշինը: Նրան 1922-ին փոխարինեց Աշոտ Հովհաննիսյանը: Հայաստան աշխատելու եկան նոր կադրեր, ինչպես Արտաշես Կարինյանը, Պողոս Մակինցյանը, Սաքո Համբարձումյանը, Արամայիս Երզնկյանը և ուրիշներ:[67]

Ազգային կոմունիստներից կազմված Հայաստանի նոր կառավարության քաղաքական կուրսն ուղենշում էր ինքը՝ Լենինը, որի հատուկ նամակն ուղղված Ադրբեջանի, Վրաստանի, Հայաստանի, Դաղստանի և Լեռնականների հանրապետության կոմունիստներին իր հետ էր բերել Մյասնիկյանը: Լենինը նամակում հորդորում էր տեղի կոմունիստներին հաշվի առնել իրենց «ուրույն դրութիւնն» ու իրենց հանրապետությունների պայմանների տարբերությունը Խորհրդային Ռուսաստանից: Ըստ Լենինի՝ անհրաժեշտ էր չընդօրինակել Ռուսաստանի տակտիկան, «այլ խոհուն կերպով փոփոխումների ենթարկել այն տեղական կոնկրետ պայմանների տարբերութեան համեմատ»:[68] Լենինը հատուկ շեշտում էր դեպի սոցիալիզմ «աւելի դանդաղ, զգոյշ, աւելի սիստեմատիկ» անցման անհրաժեշտությունը, և այն, որ ներքին քաղաքականության առանցքային կետերից պետք է լիներ «աւելի մեղմ, զգոյշ և զիջող վերաբերմունքը.... դէպի մանր բուրժուազիան, ինտելիգենցիան և յատկապէս դէպի գիւղացիութիւնը»:[69]

Փետրվարյան դեպքերից հետո Հայաստանի համար պետական քաղաքականության մեջ այս վճռորոշ բեկումն իրականում արձագանքում էր Ռուսաստանում մեկնարկած քաղաքական, տնտեսական տեղաշարժերին: «Մենք պարտություն ենք կրել,– գրում էր Լենինը՝ գնահատելով «ռազմական կոմունիզմի» քաղաքականությունը,– «գրոհային» եղանակով, այսինքն՝ ամենակարճ, արագ, անմիջական եղանակով արտադրության ու

---

[66] Արխիվային նյութին հղումը տե՛ս И. Таирян, *XI Красная Армия в борьбе за установление и упрочение Советской власти* (Ереван: Айастан, 1971), էջ 276:

[67] Ղազախեցյան, *Հայաստանը 1920-1940 թթ.,* էջ 206: Հայաստանում մեծամասնականների իշխանության վերահաստատումն ու նոր ղեկավար կազմի նշանակումն ազդարարվեց նաև «համաներման» մասին դեկրետներով ու առավել մեղմ քաղաքականությունների որդեգրմամբ: Տե՛ս Ղազախեցյան, *Հայաստանը 1920-1940 թթ.,* էջ 207-209, 216-227:

[68] Տե՛ս «Լենինի նամակը Ադրբէջանի, Հայաստանի, Դաղստանի եւ Լեռնականների ընկ. կոմունիստներին», *Կոմունիստ* (Երևան), 10 մայիսի 1921 թ.: Տեքստից հետագա մեջբերումները՝ տողամիջում: Նամակի մեկ այլ թարգմանություն տե՛ս «Ընկ. Լէնինի նամակը Ադրբէջանի, Վրաստանի, Հայաստանի, Դաղստանի, Լեռնական հանրապետութեան ընկէր կօմմունիստներին», *Կոմունիստ* (Բաքու), 16 մայիսի 1921 թ., իսկ վերատպությունը տե՛ս Լենին, *ԵԼԺ*, հ. 43 (Երևան: Հայաստան, 1982), էջ 237-240:

[69] Տե՛ս «Լենինի նամակը», *Կոմունիստ* (Երևան), 10 մայիսի 1921 թ.: Հայաստանի նոր կառավարությունը ղեկավարած Ալեքսանդր Մյասնիկյանը, լենինյան այս դիրքորոշմանն արձագանքելով, հայտարարում էր. «Մեր նոր գիծը աւելի շեշտակի պիտի ընդգծենք Հայաստանի համար: Մենք պիտի աշխատենք աւելի մեղմ միջոցներով: Այստեղ դրութիւնն ուրիշ է, քան Ռուսաստանում»: Տե՛ս «Ընկ. Մեասնիկեանի ճառը», *Կարմիր աստղ*, 28 մայիսի 1921 թ.:

բաշխման սոցիալիստական հիմքերին անցնելու մեր փորձում»: Ուստի մի շարք տնտեսական հարցերում անխուսափելի էր նահանջը՝ ««գրոհից» «պաշարման» անցնելը»:[70] Քաղաքական այս վերադիրքավորումը նշեց «ռազմական կոմունիզմից» անցումը Նոր տնտեսական քաղաքականությանը (ՆԷՊ-ին):[71] ՆԷՊ-ն ըստ էության մանրգյուղացիական երկիր Ռուսաստանում (նաև խորհրդայնացած այլ երկրներում, այդ թվում՝ Հայաստանում) սոցիալիստական հեղափոխության հաղթանակը հնարավոր էր դարձնում մի շարք անցումային միջոցներով, ինչպես և կապիտալիստական տնտեսվարման որոշ ձևերի արտոնմամբ (որոնցից առանցքայինն ապրանքադրամական-շուկայական հարաբերություններն էին):[72] Միաժամանակ խորհրդային երկրում ոչ կոմունիստների ձեռքերով կոմունիզմ կառուցելու համար, ինչպես Լենինն էր պնդում, առանցքայինը պետք է դառնար զոդումը գյուղացիական տնտեսության հետ, գյուղացուն տնտեսապես բավարարելը:[73]

Հայաստանում կատարվող քաղաքական այս վերադիրքավորումը, դաշնակցական գործիչների գնահատմամբ, անմիջականորեն Փետրվարյան ապստամբության հետևանքն էր: Արտաշես Վանարյանը, գնահատական տալով կատարված իրադարձություններին, գրում էր, որ բոլշևիկները «*նոյնպէս կ'ընդունին, կը խոստովանին ու կը մատնանշեն ծանօթ դէպքին ահաւոր պատասխանատուութիւնը որ կը ծանրանայ Հայաստան մտնող պոլշեւիկ առաջին ղեկավարներուն վրայ*» (ընդգծումը՝ Ա. Վ.):[74] Ըստ Վանարյանի՝ դրա վկայությունն էր նախևառաջ Լենինի նամակը, որ «հրահանգեց «աւելի մեղմութիւն» գործ դնել «հանդէպ մտաւորականութեան, գիւղացիութեան եւ մանր պուրժուազիին»» ու ընդգծեց Ռուսաստանի ու Կովկասի պայմանների միջև «հսկայական տարբերութիւնը»: Դրա վկայությունն էին և կառավարության կազմի փոփոխությունն ու Մյասնիկյանի «մեղմ քաղաքականութեան» հաստատումը:[75] Նույն կերպ և Վրացյանը, նոր քաղաքական կուրսի

---

[70] Վլադիմիր Լենին, *Երկեր,* հ. 33 (Երևան: Հայաստանի պետական հրատարակչություն, 1952), էջ 91: Լենինի գնահատմամբ, նահանջն անխուսափելի և անհրաժեշտ էր սոցիալիստական հեղափոխությունը կործանումից փրկելու, սոցիալիստական շինարարության նոր եղանակներ որոնելու համար: Կապիտալիզմից սոցիալիզմ անցնելը, ինչպես պարզաբանում էր Լենինը, հնարավոր էր տարբեր ձևերով, որոնք կախված էին տվյալ երկրի սոցիալ-տնտեսական դրությունից:

[71] Այս մասին որոշումն ընդունվել է 1921 թ. մարտին ՌԿ(բ)Կ 10-րդ համագումարի կողմից: ՆԷՊ-ի ներդրման և դրա քաղաքականությունների մասին Ռուսաստանում տե՛ս Верт, *История Советского государства*, էջ 163-185; Боффа, *История Советского Союза*, էջ 153-171: Մասնավորապես Հայաստանում ՆԷՊ-ի շրջանի մասին տե՛ս Ղազախեցյան, *Հայաստանը 1920-1940 թթ.,* էջ 204-227; 260-317; Ղազախեցյան, *Սովետական Հայաստանի գյուղացիության պատմությունը 1920-1929 թթ.,* էջ 79-106, 160-183: «Ռազմական կոմունիզմից» ՆԷՊ-ի անցման հարցերի լուսաբանում տե՛ս Հակոբյան, *ՀՍԽՀ 1921 թ. ներքաղաքական կյանքի պատմության հիմնահարցերը հայ պատմագիտության մեջ*, էջ 185-230:

[72] Այս մասին իր հստակ դիրքորոշումն էր հայտնում Լենինը: Տե՛ս Լենին, *Երկեր,* հ. 33, էջ 517-528: Լենինի՝ ՆԷՊ-ի տեսլականն էր ըստ էության երևան բերում Աշոտ Հովհաննիսյանն իր *Մեր հեռանկարները յեվ լենինիզմը* գրքում: Իր հերթին Հայաստանի ղեկավարումը ստանձնած Ալեքսանդր Մյասնիկյանը՝ լենինյան մոտեցմանը հետևողական, ՆԷՊ-ով բացված քաղաքական, տնտեսական նոր հեռանկարի մասին գրում էր, թե փոխանցման այդ շրջանը «ըստ երևոյթին երկարատև է լինելու, նա կոմունիզմ չէ, բայց նաև զուտ կապիտալիզմ չէ, *վերջինից պէտք է վերցնել նրա դրական գծերը*՝ մասնաւոր ձեռներէցութիւն, պատասխանատուութիւն, հաշիւ և այլն. առաջինը, այսինքն կոմունիզմը, մեզ թոյլ է տալիս յենուել բանուորա-գիւղացիական մասսաների ոգևորութեան, նրանց ստեղծած կառավարութեան, նրանց դասակարգային համերաշխութեան և դիսցիպլինայի վրա» (ընդգծումը՝ բնագրի): Տե՛ս «Մասնաւոր ձեռներէցութիւնը», *Խորհրդային Հայաստան,* 18 հունվարի 1922 թ.:

[73] Լենին, *Երկեր,* հ. 33, էջ 344:

[74] Արտաշէս Վանարեան, «Ո՞րն է ազգային լաւագոյն քաղաքականութիւնը. ռուսակա՞ն թէ թրքական օրիէնտացիա», *Հայրենիք*, 26 մարտի 1922 թ.: Հետագա մեջբերումներն այս հոդվածից են:

[75] Նույն հոդվածում Վանարյանը մեջբերում էր Պոլսի առևտրական ներկայացուցիչ Պ. Շահվերդյանի հայտարարությունը, թե ««պ. Մեասնիկեանի վարչութիւնը չի հետեւիր իր նախորդին հալածանքի խիստ քաղաքականութեան» եւ հետեւաբար ժողովուրդը հարկ էր որ տարբեր աչքով նայէր անոր»: Տե՛ս Վանարեան, «Ո՞րն է ազգային լաւագոյն քաղաքականութիւնը»: 1922-ին *Հայրենիք* թերթում լույս տեսած իր հոդվածում Վ. Վեմյանը գրում էր. «Մեասնիկեանի վարչութիւնը տարրական խելամտութիւնը ունեցաւ որոշ չափով մեղմելու իր նախորդի խելագար քաղաքականութիւնը»: Տե՛ս Վ. Վէմեան, «Տնտեսական կացութիւնը Հայաստանի մէջ», *Հայրենիք,* 18 օգոստոսի 1922 թ.:

հաստատման մասին խոսելով, Փետրվարյան ապստամբությունն էր դիտում իբրև դրա հիմքում ընկած պատճառ. «....Անոնք (մեծամասնականները՝ Ի. Շ.) խրատուած անցեալէն այս անգամ աւելի մեղմ քաղաքականութեան մը հետեւիլ սկսան»:[76] Սակայն, անկախ նրանից, թե դաշնակցական գործիչներն ինչի հետևանք էին համարում քաղաքական նոր կուրսի հաստատումը Հայաստանում, վերջիններիս համար ակնհայտ էր ազգային կոմունիստների որդեգրած քաղաքականության տարբերությունը:

Թե՛ ազգային կոմունիստների, թե՛ դաշնակցականների համար պարզ էր, որ ՆԷՊ-ը հայաստանյան իրականությանն առաջադրված նոր քաղաքականություն էր, որի շեշտված մեղմությունը նույն այդ իրականության հանդեպ քաղաքականապես վերադիրքավորման օրակարգն էր իր հետ բերել: 1924-ին ՆԷՊ-ն իր ընթացքի մեջ էր, երբ արդեն գլխավոր քարտուղարի պաշտոնը զբաղեցնող Աշոտ Հովհաննիսյանը քննաբար ձևակերպում էր ՆԷՊ-ի ներդրման կարևորությունը:[77] Ներկայի պատմականացման ու ընթացքիկ քաղաքականության գնահատականը տալիս Հովհաննիսյանը մեծապես ելնում էր լենինյան ըմբռնումներից: Հովհաննիսյանը հենց ՆԷՊ-ն էր տեսնում իբրև սոցիալիստական հանրակարգի հաստատման համար բացված հնարավորություն:[78] ՆԷՊ-ի շրջանում ոչ միայն չէր վերանում հեղափոխության «*սոցիալիստական հեռանկարը*», այլև, ըստ Հովհաննիսյանի, պրոլետարիատի համար ստեղծվում էին տնտեսական և սոցիալական նախապայմաններ «*առաջ քաշելու այդ հեռանկարը, վորպես պայքարի հիմնական յեվ անմիջական նպատակ*» (ընդգծումը՝ Ա. Հ.):

Հովհաննիսյանի գնահատմամբ, 1921-ից սկսած կոմունիստական կուսակցությունը կանգնած էր «տաքտիկական նոր դիմադարձության առաջ»: Այդ դիմադարձությունն էր նշում պրոլետարիատի պայքարը գյուղացիության և մանր բուրժուազիայի անկայունության չեզոքացման համար: Հովհաննիսյանի՝ լենինյան հեղափոխական օրակարգի որդեգրումը երևան էր բերում նաև իր քաղաքական դիրքավորումը. մանր բուրժուազիան ու դրա անկայունությունը ՆԷՊ-ի պայմաններում սահմանվում են իբրև առանցքային քաղաքական խնդիր: Դրա կարևորությունը նշում էր այն հանգամանքը, որ գյուղացիությունն ու առհասարակ տատանվող ողջ մանր բուրժուազիան պրոլետարիատի իշխանության ժամանակ «միջին տեղն ե բռնում»: Պրոլետարիատի գործն էր, մեջբերում է Հովհաննիսյանը Լենինին, «տանել իր հետևից տատանվողներին, անկայուններին»: Հենց մանր բուրժուազիայի հարումներն ու հակումներն էին, ուրեմն, որ կարող էին վճռական դառնալ սոցիալիստական հասարակարգի կառուցման բացվող հեռանկարում: Հովհաննիսյանը հետևողական էր լենինյան այս գնահատականը հայաստանյան իրականության պայմաններում իբրև գործնական քաղաքականության ուղենիշ որդեգրելու հարցում: Հեղափոխական քաղաքականությունը վերադիրքավորվում էր այն իրականության առանձնահատուկ բնույթի հանդեպ, որտեղ պետք է ներդրվեր: Մանրբուրժուական իրականության պայմաններում քաղաքականության հաջողումն

---

[76] «Հայաստանի նախկին վարչապետներու ճառերը Ալեքսանդրիոյ մէջ. Վրացեանի ճառը», *Հայրենիք*, 1 ապրիլի 1922 թ.:

[77] «Հոկտեմբերը՝ ընդարձակվող հեռանկարի առաջ», *Խորհրդային Հայաստան*, 7 նոյեմբերի 1924 թ.: Հետագա մեջբերումներն այս հոդվածից են:

[78] Մասնավորապես դաշնակցականների համար ՆԷՊ-ի քաղաքականությունն այլ բան չէր նշում, քան սոցիալիստական տնտեսակարգ հաստատելու ջանքերի տապալումը: Երբ Մյասնիկյանը ՆԷՊ-ի պայմաններում արձանագրում էր, թե վերջիվերջո կոմունիզմը «գիւղացու համար՝ գիւղացիութիւնն է առանց շահագործման, կուշտ կեանք է բանւորի համար», ի պատասխան Վանարյանն արձանագրում էր. «Տե՞սաք այժմ որքան պարզ ու խեղճուկրակ բան է եղեր քօմիւնիզմը: Այս հաշուով երբ գիւղացի մը երկու եզ եւ քիչ մը հող ունենայ վարէ ու ցանէ, ինչպէս եւ բանւոր մը երբ 8-10 ժամ օրական աշխատելով քիչ մը կանոնաւոր վարձք ստանայ եւ կուշտ ապրի, երկուքն ալ իսկոյն *քօմիւնիստ*?? եղած կ'ըլլան» (ընդգծումը՝ Ա. Վ.): Տե՛ս «Ընկ. Մեասնիկեանի ճառը», *Կարմիր աստղ,* 28 մայիսի 1921 թ. և Վանարեան, *Ընկերվարութիւն եւ պոլշեւիզմ,* էջ 192:

ուրեմն հասարակական այն խավերի կարևորումն էր, որոնց տատանվող ու անկայուն բնույթն էր հենց նույն այդ քաղաքականության հնարավոր երերման ու անկման պատճառը: Գործնականում անժամկետ ներդրված ՆԷՊ-ի մեղմ քաղաքականությունների պայմաններում, սակայն, ի՞նչ էր նշանակում մանր բուրժուազիայի տատանումը:

Հովհաննիսյանն իր հոդվածներից մեկում հատուկ ընդգծմամբ գրում է. «Մեր այսորվա պայքարն.... կարող ե ունենալ «*յերկու տեսակ յելք*» և վոչ՝ *մի՛ յելք* ինչպես պնդում են մեզ անխուսափելի պարտություն գուշակող հակառակորդները» (ընդգծումը՝ Ա. Հ.):[79] Հնարավոր այդ ելքերը նշելիս Հովհաննիսյանն առաջնորդվում էր լենինյան դրույթներով: Լենինը ՆԷՊ-ի ներդրման առաջին շրջանում խորհրդային հանրապետության բախտը կապում էր կոնկրետ հանգամանքի հետ. «Կը գնա արդյոք գյուղացիական մասսան բանվոր դասակարգի հետ, հավատարմություն պահպանելով նրա հետ կնքած դաշինքին, թե՞ նա թույլ կը տա «նեպմաններին»՝ այսինքն՝ նոր բուրժուազիային, բաժանել իրեն բանվորներից, պառակտել իրեն նրանցից»:[80] Սրանից էր կախված, ըստ Լենինի, պայքարի ելքը: Հովհաննիսյանը հարցն ուղիղ էր դնում՝ ո՞րն էր լինելու պայքարի «յերկու *հնարավոր* յելքից անխուսափելին». «Այդ հարցի պատասխանը կախված ե *մեզնից, մեր քաղաքականության ընթացքից:* Ամեն ինչ կախված ե նրանից, թե վորքան *ուղիղ* կարող ենք տանել մենք քաղաքական մեր գիծը» (ընդգծումը՝ Ա. Հ.):[81]

1924-ին՝ նույն տարում, երբ Հովհաննիսյանը խոսում էր սոցիալիստական հասարակարգի կառուցման գործում մանր բուրժուազիայի տատանումը չեզոքացնելու քաղաքական առաջնահերթ խնդրի մասին, լույս է տեսնում Դաշնակցություն կուսակցության առաջին դեմքերից մեկի՝ Վահան Նավասարդյանի *Հ. Յ. Դաշնակցութեան «լիկվիդացիան»* գիրքը:[82] Քաղաքական կռվի հռետորությամբ գրված հատորը, ինչպես հուշում է դրա ենթավերնագիրը, նպատակ ուներ վեր հանել «բոլշևիզմի սնանկությունը»: Ուշագրավ դրվագը գրքի վերջին էջերն են, որտեղ Նավասարդյանը, ընդարձակ մեջբերումներ անելով, խոսակցություն է բացում Աշոտ Հովհաննիսյանի հետ.

> «*Դաշնակցութիւնը կարող է վերագրաւել գործողութեան նոր յենակէտներ*,–
> «նայիրեան» թախիծով խոստովանում է Դաշնակցութեան գերեզմանափորը, Աշոտ Յովհաննիսեան:
> «Պոկ գալով սոցիալական հարազատ հանգրվանից, Դաշնակցութեան քաղաքական նաւը, հողմահար ու հողմավար, յածում է հիմա պատմական ահաւոր ալիքների վրայ:
> «*Բայց կարող է փոխուել քամիների ընթացքը, հին նաւը կարող է մտնել բանուկ հունի մէջ* (ընդգծումը՝ Վ. Ն.) (էջ 184-185):

Դաշնակցության համար Հովհաննիսյանի ուղենշած քաղաքական հնարավոր այս ապագան անթաքույց կերպով ոգևորել էր Նավասարդյանին: Դաշնակցության քաղաքական գործունեության հնարավորության մասին նախազգուշացնողը Հայաստանի

---

[79] Աշոտ Հովհաննիսյան, ««Վերասերման հեռանկարները» յեվ լենինիզմը», *Խորհրդային Հայաստան*, 4 ապրիլի 1926 թ.:
[80] Հովհաննիսյան, ««Վերասերման հեռանկարները» յեվ լենինիզմը»:
[81] Լենինն իր հերթին պնդում էր. «Կամ մենք կենթարկենք մեր կոնտրոլին ու հաշվառքին մանր-բուրժուազիային...., կամ նա կտապալի մեր բանվորական իշխանությունն անխուսափելիորեն և անհրաժեշտաբար»: Տե՛ս Հովհաննիսյան, *Մեր հեռանկարները յեվ լենինիզմը*, էջ 72:
[82] Վ. Նաւասարդեան, *Հ. Յ. Դաշնակցութեան «լիկվիդացիան» (բոլշեւիզմի սնանկութեան առիթով)* (Գահիրէ: Տպ. Յուսաբեր, 1924): Տեքստից հետագա մեջբերումները՝ տողամիջում: Նավասարդյանը, Հովհաննիսյանի բնորոշմամբ, Դաշնակցության «յերիտասարդ ղեկավարներից մեկն» էր: Իր «Դաշնակցության իդեոլոգիայի ընթացիկ կուրսը» հոդվածում Հովհաննիսյանը նշում է, թե Նավասարդյանը «թարգման» էր դարձել Դաշնակցության «ձախակողմ մտայնության» (էջ 175-176):

կոմունիստական կուսակցության գլխավոր քարտուղարն էր: Հարց էր, ուրեմն, որտեղի՞ց պետք է Դաշնակցությունն ակնկալեր քաղաքական քամիների ընթացքի հնարավոր փոփոխությունը: Նավասարդյանի համար այդ պատասխանը տալիս էր նույն Հովհաննիսյանը:

> Հարազատ անկարութիւնն ու օտար ուժերի աննպաստ դասաւորութիւնը հարկադրեցին Հայաստանի քաղքենուն կապել իր բախտը պրոլետարական յեղափոխութեան հետ: Բայց պրոլետարական յեղափոխութեան համաշխարհային կռիւը բուրժուական հակայեղափոխութեան դէմ դեռ չէ աւարտուած: Յեղափոխութիւնը յաղթանակ է միայն վերջին հաշւով (էջ 185):

Հայաստանի քաղքենու քաղաքական խնդիրը Հովհաննիսյանի հայացքում երևում է տեղական ու համաշխարհային ճակատներում պրոլետարիատի մղած պայքարի առանցքում: Քաղքենու հերթական տատանումը հակել էր վերջինին դեպի պրոլետարիատը, բայց ակնհայտորեն Հովհաննիսյանի համար բուրժուական հակահեղափոխությունը քաղքենու տատանումների նոր հեռանկար կարող էր ուրվագծել: Ի՞նչ էր տեսնում Նավասարդյանը Հովհաննիսյանի այս տողերում: Հայաստանի քաղքենու տատանումը, նրա անկայունությունը Նավասարդյանն ուղղակիորեն կապված էր տեսնում հենց Դաշնակցության համար բացվող հեռանկարի հետ: Սոցիալիստական հեղափոխությունը հաջողելու Հովհաննիսյանի համար առաջնային խնդիրը՝ մանր բուրժուազիայի տատանման չեզոքացումը, բացահայտվում է հայաստանյան իրականության մեջ դրա կոնկրետ քաղաքական կողմով: Վերջինս վերաբերում էր Լենինի այն դիտարկմանը, թե ամբողջ մանր բուրժուազիան զբաղեցնում է «միջին դիրք»: Այդ «միջին դիրքի» հանդեպ էին դիրքավորվում թե՛ Հովհաննիսյանը, թե՛ Նավասարդյանը:

> «*Պայքարի ընթացքում*,– շարունակում է մեջբերել Հովհաննիսյանին Նավասարդյանը,– *հնարաւոր է նահանջ, հնարաւոր է ուժերի նոր դասաւորութիւն:* Նշանակում է *հնարաւոր է նաեւ քաղքենու* (կարդա՝ հայ աշխատաւորի. Վ. Ն.) *նոր դիմադարձութիւնը:* Նա դաւաճանեց բուրժուազիային, կարող է դաւաճանել և պրոլետարիատին:
> *Յեղաշրջուած իր «օրիենտացիան» փարոս կարող է վառել հակայեղափոխական այն յուսակայանի վրայ, որտեղ Դաշնակցութեան յածող նաւը քաղաքական խարիսխ ձգելու հնար չունի հիմա* (ընդգծումը՝ Վ. Ն.) (էջ 185):

Քաղքենիության նոր դիմադարձության, պրոլետարիատից երես թեքելու, նրան դավաճանելու մեջ էին տեսնում իրենց քաղաքականությունների ներկան ու ապագան թե՛ Հովհաննիսյանը, թե՛ Նավասարդյանը: Նշանակում է դաշնակցականների ու կոմունիստների միջև քաղաքական պայքարը, որ պայքար էր հայ քաղքենու հերթական տատանման դեմ կամ համար, Փետրվարյան ապստամբությունից հետո շարունակվում էր քաղաքական նոր իրադրությունում: Հովհաննիսյանի նախազգուշացման մեջ Նավասարդյանը տեսնում էր Դաշնակցության իշխանության վերադարձի հնարավորությունը: Սակայն, թվում է, Հովհաննիսյանի հոդվածից արված մեջբերման մեջ Նավասարդյանի կատարած պարզաբանումը վեր է հանում քաղաքական կոնկրետ մի խնդիր: Հովհաննիսյանի օգտագործած «քաղքենի» բնորոշումը Նավասարդյանը փակագծերում պարզաբանում է իբրև «հայ աշխատավոր»: Քաղքենու ու աշխատավորի այս նույնացումը Նավասարդյանի քաղաքական օրակարգում էր, դրանք միմյանցից տարբերակելը՝ Հովհաննիսյանի: «Միջին դիրք» գրավող մանր բուրժուազիան իբրև ընդհանրական հայ աշխատավորություն ըմբռնելու մոտեցումն ամբողջովին փոխում էր

հայաստանյան իրականության սոցիալական նկարագիրը, որը Հովհաննիսյանի քաղաքականության ելակետն էր: Սակայն այդ նկարագիրն անտեսելով, մանր բուրժուազիային «անմեղացնելով» էր, որ Նավասարդյանը Հովհաննիսյանի տողերում պիտի հիմք տեսներ իր քաղաքական ակնկալիքների համար. «Անհրաժեշտ է,– շարունակում է Հովհաննիսյանը,– կանխել ուժերի իր հաւաքումը, քանի դեռ չէ յեղաշրջուած առմիշտ սոցիալական այն շերտի զարգացման ընթացքը, որից նա իր մարտական եռանդն է քաղում....» (էջ 186-187):

Հայ քաղքենին էր այն սոցիալական շերտը, որը սնում էր Դաշնակցության «մարտական եռանդը»: Նավասարդյանի ուշադրության առարկան հայաստանյան իրականության սոցիալական պատկերը վեր հանելու Հովհաննիսյանի փորձը չէ, այլ դրանից արված քաղաքական հետևությունները: Այդ հետևություններն է Նավասարդյանը դարձնում Հովհաննիսյանի խոսքերում եղած «Ճշմարտութեան ոսկեայ հատիկը»: Հովհաննիսյանի հոդվածից արված ընդարձակ մեջբերումներից հետո, Նավասարդյանն իր համաձայնությունն է հայտնում վերջինիս դիտարկումներին. «Այո՛, վաղաժամ է Դաշնակցութեան «լիկուիդացիայի» մասին խօսելը, երբ բոլշեւիզմն ապրում է իր անբուժելի սնանկութեան պրոցէսը» (էջ 186):[83] Հայաստանյան իրականության մանրբուրժուականության հետ քաղաքականապես հարաբերվելու Հովհաննիսյանի փորձը Նավասարդյանը հանգեցնում է Դաշնակցության քաղաքական գործունեության նոր ասպարեզ հայտաբերելու իր ակնկալիքներին. «քաղաքական քամիների» ընթացքը փոխվելու էր, և Դաշնակցությունը կրկին վերահաստատելու էր իր քաղաքական դիրքերը:

Նավասարդյանը Հովհաննիսյանի տողերում գտնում էր կոմունիստական քաղաքականության սնանկությունը, բայց ոչ մանր բուրժուազիայի այն տատանումը, որ մեկ անգամ արդեն 1920-ին հանգեցրել էր հենց իրենց՝ դաշնակցականների իշխանության անկմանը: Սակայն քաղաքական իշխանության կորստի վա՞խն է նշմարելի Հովհաննիսյանի տողերում, թե՞ հայաստանյան իրականությունը բնորոշելու փորձը, որի հետ Հովհաննիսյանը հարաբերում էր քաղաքական ներկան ու գալիքը:

Իր «Դաշնակցության իդեոլոգայի ընթացիկ կուրսը» հոդվածում, որտեղից Նավասարդյանն ընդարձակ մեջբերումներ էր կատարում, Հովհաննիսյանը քաղաքական ընդգծված հռետորաբանությանը զուգահեռ կոնկրետ էր իր գնահատականներում: Մասնավորապես Դաշնակցության առիթով Հովհաննիսյանն առանց երկմտելու գրում է. «Անմիջական վտանգ Դաշնակցությունից չի սպառնում մեզ,–այդ վեր ե կասկածից: Սակայն միամտություն կլիներ կարծել, թե յերգված ե իսպառ իր յերգը, թե անելու այլևս վոչինչ չունի նա, թե կրած պարտությունից հետո պայքարն սպառված պիտի համարել առմիշտ»:[84]

Հովհաննիսյանի գնահատմամբ «թուրքահայ կատաստրոֆը» քաղաքական պարտություն էր Դաշնակցության համար, բայց դրանով հանդերձ Դաշնակցությունն, ըստ

---

[83] Մեկ այլ տեղ Նավասարդյանը գրում էր. «Միասնիկեանների ու Յովհաննէսեանների տղայամիտ շաղակրատնքներն անզօր են այն հմայիչ ուժի դէմ, որ գունաւորեց մեր խօլական երեսնամեակի պատմութիւնն ու շունչ տուաւ մեր կեանքին»: Տե՛ս Վ. Ն., «Մեր անելիքը. Պահենք Դաշնակցութիւնը»: Առհասարակ Հովհաննիսյանի ելույթները պարբերաբար հայտնվում էին դաշնակցական մամուլի ուշադրության կենտրոնում, որպես նույն «սնանկությունը» հաստատող փաստեր: Տե՛ս, օրինակ, «Հայ համայնավարական կուսակցութեան ներքին տագնապը», *Յուսաբեր*, 1 հուլիսի 1924 թ.; Խ. Ջաւէն, «Ի բերանէ իւրմէ. «Պրոլետարական դիկտատուրա»», *Յուսաբեր*, 24 հուլիսի 1924 թ.:

[84] Հովհաննիսյան, «Դաշնակցության իդեոլոգիայի ընթացիկ կուրսը», էջ 163: Տեքստից հետագա մեջբերումները՝ տողամիջում: Հովհաննիսյանի այս հոդվածին անդրադառնում է Նորայր Սարուխանյանն իր *Ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյանի պատմագիտական ժառանգությունը* գրքում (էջ 88-100):

Հովհաննիսյանի, կորցրել էր միայն «քաղաքական եքսպերիմենտների հին թատերաբեմը», բայց ոչ «գործողութիւնների սոցիալական հենակետերը». «Նա ե՛ր և շարունակում եր լինել կովկասահայ քաղքենիության մարտական կազմակերպությունը» (էջ 164):

Մանր բուրժուազիայի, հայ քաղքենիության վրա էր հենվում Դաշնակցություն կուսակցությունը: Ակնհայտ էր, ուրեմն, որ Դաշնակցության քաղաքական ապագան նույն այդ դասակարգի քաղաքական ճակատագիրն էր ուրվագծում: Նավասարդյանը, սակայն, Դաշնակցությունը կտրելով իրեն սոցիալական հենարան ծառայող դասակարգից՝ մոռացման էր տալիս հենց Դաշնակցության սոցիալական նկարագիրը: Դրա հետևանքով է, որ վերջինս մնում է միայն Հովհաննիսյանի մատնանշած քաղաքական հետևանքների շրջանակում ու շրջանցում է դրանք ծնող հայաստանյան իրականության սոցիալական իրողությունները:

Ճիշտ հակառակը՝ Հովհաննիսյանի համար քաղքենիության հետ քաղաքական աշխատանքն առաջնահերթություն էր: Նրա գնահատմամբ խորհրդային իշխանության հաստատման շրջանում քաղաքական հաջողություններից էր այն, որ խորհրդային իշխանությունն Անդրկովկասում կարողացել էր «նվաճել քաղքենի մասսաների.... համակրանքը» (էջ 167): «Այս բոլորը,– գրում է Հովհաննիսյանը,– գիտակցում և հաշվի յեն առնում անգամ մեր կատաղի հակառակորդները և դրանց թվում՝ Դաշնակցությունը» (էջ 167): Ի տարբերություն Նավասարդյանի, Հովհաննիսյանն անթաքույց կերպով էր նշում հայ քաղքենիության հետ կապված ոչ միայն Դաշնակցության անցյալ, այլև «ընթացիկ կուրսը»: Այդ էր ուրվագծված տեսնում Հովհաննիսյանը հենց դաշնակցական գործիչների մոտ: Հովհաննիսյանն այս առիթով էր վկայակոչում, օրինակ, Փետրվարյան դեպքերից հետո քաղաքական իրավիճակին տրված Վրացյանի գնահատականը: Վրացյանը գտնում էր, որ Փետրվարյան շարժումից հետո Հայաստանը պետք էր պահել ներքին ցնցումներից ու քաղաքացիական կռիվներից: Այս պնդման մեջ, սակայն, Հովհաննիսյանը կոնկրետ պատճառ էր տեսնում. «....Սիրում ե հավատալ մեր ասպետը (նկատի ունի Վրացյանին՝ Ի. Շ.), ինչ վոր այսոր, բոլշեվիկների որով, շինվի Հայաստանում, վաղը պիտանի պետք ե լինի մեզ համար: Ոգնելով այսոր Հայաստանի վերաշինության, մենք նպաստած կլինենք մեր վաղվա գործին» (էջ 168): Այս հայտարարության մեջ էր Հովհաննիսյանը տեսնում դաշնակցական քաղաքական ընթացիկ ծրագիրը, որ նպատակ ուներ «կուտակել քաղքենու մարտական յեռանդը սոցիալական գալիք ցնցումների համար» (էջ 169): Հայաստանյան հակահեղափոխության հիմքում, ուրեմն, Հովհաննիսյանի գնահատմամբ, սոցիալական կոնկրետ ուժերի՝ հայ քաղքենու քաղաքական համախմբումն էր:

ՆԷՊ-ի քաղաքականությունն էապես պայմանավորում էր քաղքենու քաղաքական դիմագիծը: Գյուղական և քաղաքային մանր սեփականությունը Նոր տնտեսական քաղաքականության պայմաններում տնտեսական աճ էր ապրում: Սոցիալական տեսանկյունից հայ քաղքենին հասարակական ներհակ բևեռ էր կազմում գյուղական չքավորությանը և քաղաքային պրոլետարիատին: Ինչն առանցքային էր Հովհաննիսյանի՝ հայ քաղքենու հետ քաղաքականապես հարաբերման հարցում, այն էր, որ ուրույն քաղաքական նկարագիր, ըստ Հովհաննիսյանի, այդ քաղքենին չուներ: Այն քաղաքականապես ըստ էության անորոշ դիմագիծ ուներ. դրա որոշ մասը, Հովհաննիսյանի գնահատմամբ, բարյացակամ էր տիրող կարգերի նկատմամբ, մյուսներն անտարբեր էին կամ խուլ դժգոհություն էին հայտնում (էջ 169): Քաղաքականապես անորոշ նկարագիր ունեցող, սոցիալապես տատանվող քաղքենու տնտեսական ամրացումն էր հենց Հովհաննիսյանը դիտում իբրև հասարակական այդ խավի

դիմադարձության հնարավորություն՝ պրոլետարիատից դեպի բուրժուազիա: Քաղքենու տնտեսական դրության բարելավումն էր, ուրեմն, որ կարող էր ներքին հենակետեր ստեղծել Հայաստանում Դաշնակցության իշխանության վերահաստատման համար:

Հայաստանյան իրականության հասարակական, սոցիալական բնույթն է, որ Հովհաննիսյանի համար որոշում էր քաղաքական օրակարգը: Թե՛ կոմունիստական, թե՛ դաշնակցական քաղաքականության սոցիալական հենակետերը բացահայտելն, ուրեմն, Հովհաննիսյանի համար քաղաքականությունն իրականության հետ՝ հարաբերելու հնարավորությունն էր: Հովհաննիսյանի համար ակնհայտորեն հայաստանյան քաղաքականությունը պետք է հաշվի նստեր հայաստանյան իրականության մանրբուրժուական բնույթի հետ ինքնին այդ քաղաքականությունը հնարավոր դարձնելու համար: Հովհաննիսյանի ուրվագծած կոմունիստական քաղաքական հեռանկարի հիմքերում բացահայտվում էր այն մանրբուրժուական իրականությունը, որին պատկանում էր Դաշնակցությունը: Ուրեմն և Հովհաննիսյանը բացահայտում էր Դաշնակցության սոցիալական ծագումը: Հայաստանյան իրականության մանրբուրժուականության ծնունդն էր Դաշնակցությունը, ու քաղաքական կռիվը Դաշնակցության դեմ, նշանակում էր կռիվ այն իրականության սոցիալական նկարագրի փոփոխության համար, որին պատկանում էր վերջինս:

Նավասարդյանի բնորոշումը տված Հովհաննիսյանին՝ իբրև «Դաշնակցության գերեզմանափոր» դիպուկ է թվում:[85] Հովհաննիսյանը գլխավոր քարտուղարի պաշտոնում իրապես Դաշնակցության «գերեզմանափորի» գործն էր ստանձնել: Սակայն Նավասարդյանը տեսնում էր այդ գործի զուտ քաղաքական կողմը, գրեթե փորձ չանելով նկատել Հովհաննիսյանի քաղաքական գործելակերպի պատմաբանական կողմը: Հայաստանյան իրականությունը հասկանալը Հովհաննիսյանի դեպքում քաղաքական օրակարգ էր: Դրա սոցիալ-պատմական նկարագիրն էր ընթացիկ ու գալիք քաղաքականության հիմքում: Նավասարդյանի համար Հովհաննիսյանը Դաշնակցության «գերեզմանափորն» էր նախևառաջ քաղաքական կոնկրետ իրադարձության՝ 1923-ին կայացած «Նախկին շարքային դաշնակցականների համահայաստանյան համագումարի» նախաձեռնման համատեքստում: 1923-ի նոյեմբերի 20-ին կայացած համագումարը Դաշնակցության անդամների հրապարակային հրաժարիմքն էր Դաշնակցությունից ու հարումը Հայաստանի խորհրդային իշխանությանը: Մի քանի օր տևած, 7 նիստից բաղկացած համագումարի արդյունքներն ամփոփող բանաձևն առաջին կետով հայտարարում էր. «Լիկվիդացիայի յենթարկել Հ. Հ. Դաշնակցության բոլոր կազմակերպությունները Հայաստանում»:[86] Նավասարդյանը կատարված իրադարձության կապակցությամբ հարց էր բարձրացնում. «Նրանք (մեծամասնականները՝ Ի. Շ.) ընդունո՞ւմ են արդեօք, որ բոլոր «դաւանափոխները» իրապէս դաւանափոխներ են և որ նրանց ձեռքով իսկապէս որ Հ. Յ.

---

[85] Նաւասարդեան, *Հ. Յ. Դաշնակցութեան «լիկվիդացիան»,* էջ 184:

[86] *Նախկին շարքային դաշնակցականների համահայաստանյան համագումարի արձանագրությունները. ստենոգրաֆիյական հաշվետվություն (20-23-ն նոյեմբերի 1923 թ.)* (Երևան: Տրեստի առաջին տպարան, 1923), էջ 128: Այն, որ Հովհաննիսյանն էր Հայաստանում Դաշնակցության գործունեությունը կասեցնող այս համագումարի գործնական ու հատկապես գաղափարական հենքն ապահովողը, գաղտնիք չէ այսօր: Այս մասին տե՛ս, օրինակ, Միրզոյան, *Հայաստանի խորհրդային տիրակալները*, էջ 25-34: Համագումարի ու դրանում Ակսել Բակունցի ներգրավվածության մասին ուշագրավ վավերագիր է հրատարակել Հովիկ Չարխչյանը՝ ներկայացնելով 1954-ին Աշոտ Հովհաննիսյանի հարցաքննության արձանագրությունը: Տե՛ս «Բակունցը՝ ժամանակի հայացքի ներքո», https://shorturl.at/fjCH8, այց՝ 4 հոկտեմբերի 2023 թ.: Համագումարին անդրադարձներից տե՛ս Արարատ Հակոբյան, ««Նախկին դաշնակցականների» 1923թ. հայաստանյան համագումարը», *Վէմ*, 2016, թիվ 3, էջ 51-84:

Դաշնակցութիւնը գերեզման է դրուել»:[87] Նավասարդյանի կարծիքով մեծամասնականներն իրենք դրան չէին հավատում: Նավասարդյանի համար իր այս պնդման ապացույցը տալիս էր Հովհաննիսյանը՝ «բոլշեւիկեան «խելօքիկ» Լայեոլլան» (էջ 50): Ալեքսանդրապոլում ընթերցած Հովհաննիսյանի զեկույցից Նավասարդյանը մեջբերում էր անում իր ընդգծումներով.

> «Մենք այսօր շարքային դաշնակցականներից վճռական խօսք ենք սպասում,– յայտարարում է մեր դժբախտ երկրի հաւատաքննիչն իր մէկ դասախօսութեան մէջ, կարդացած Ալէքսանդրապոլում,– նրանք պէտք է ցոյց տան, որ *անկեղծօրէն հրաժարւում են իրենց հին ծրագրից, այլ ոչ թէ ձեւականօրէն*....» (ընդգծումը՝ Վ. Ն.) (էջ 51-52):[88]

Նավասարդյանը Հովհաննիսյանի տողերում «հարուածուած հաւատի մի ամբողջ թունալից աշխարհ» է տեսնում: Հովհաննիսյանը՝ «յայտարարագրերի հոգևոր հայրն ու հակադաշնակցական պայքարի եռանդուն քարոզիչը», ըստ Նավասարդյանի, «չի հաւատում այն լուտանքին, որ իր թելադրանքի տակ դաւանափոխերն ամէն օր թափում են իրենց հին դաւանանքի հասցէին» (էջ 52): Ըստ Նավասարդյանի, Հովհաննիսյանն անկեղծության օրինակներ էր պահանջում, սակայն ինքն էլ չգիտի, թե դրանք ինչպիսի օրինակներ պետք է լինեին, որպեսզի համոզեին Չեկային: Հովհաննիսյանը «լռում է, որովհետև չգիտէ թէ ինչ է իր պահանջածը» (էջ 53). «Ստրուկի կամակատարութեան նա չի հաւատում, նա սարսափում է նրա հնարաւոր ըմբոստացումից, նա բնազդօրէն զգում է, որ իր շուրջը դաւադրութեան մի ընդարձակ ոստայն է հիւսւում....» (էջ 53-54):

Դաշնակցության դեմ քաղաքական պայքարն անշուշտ տարվում էր քաղաքական ամենաբարձր մակարդակում, որտեղ Հովհաննիսյանն առանցքային դերակատար էր: Քաղաքական հռետորաբանությունը խորհրդային իշխանության, այդ թվում և Հովհաննիսյանի ելույթներում ու հոդվածներում անթաքույց էր: Սակայն Նավասարդյանն այդ հռետորությունն ինքնին ընկալում էր իբրև Հովհաննիսյանի քաղաքականության մեխ: Արդյո՞ք խորհրդային իշխանության «հոգեկան գալարումների բանալին» Նավասարդյանը ճիշտ տեղում էր որոնում: Որտե՞ղ էր ինքը՝ Հովհաննիսյանը տեսնում «հնարավոր ըմբոստացման» աղբյուրը:

Դաշնակցության «դատը»

1923-ին դաշնակցական գործիչների շրջանում, ինչպես և մամուլում Դաշնակցության քաղաքական «լիկվիդացիան» նշող համագումարը մեծ արձագանք գտավ:[89] Սակայն, թվում է, քաղաքական այդ ձեռնարկի գաղափարական հենքը պետք է գտնել դրան նախորդած մեկ այլ իրադարձության մեջ: Խոսքը դեռ 1921-ի վերջին խորհրդային կառավարության կողմից կազմակերպված «Դաշնակցություն կուսակցության դատի»

---

[87] Նաւասարդեան, *Հ. Յ. Դաշնակցութեան «լիկւիդացիան»,* էջ 50: Տեքստից հետագա մեջբերումները՝ տողամիջում:

[88] Հովհաննիսյանը Դաշնակցության հանդեպ իր դիրքորոշումը հայտնում էր նաև հանրայնորեն: Նավասարդյանի նշած Հովհաննիսյանի ելույթը տե՛ս «Ընկ. Աշոտ Հովհաննիսյանի զեկուցումը. դաշնակցության ընթացիկ մտայնությունը»: Տե՛ս նաև «Ընկ. Աշոտ Հովհաննիսյանի զեկուցումը դաշնակցության ներկա քաղաքականության մասին»:

[89] Տե՛ս, օրինակ, Համազասպ Օհանջանյանի բանախոսությունը՝ «Ընկ. Համ. Օհանջանեանի բանախօսութիւնը», *Յուսաբեր,* 18 մարտի 1924 թ.; Հայաստանում կազմակերպված «Լիկվիդացիոն բյուրոյի» մասին տե՛ս «Կեանքը Հայաստանի մէջ», *Յուսաբեր*, 26 հունվարի 1924 թ.:

մասին է:[90] Ըստ էության այս դրվագում պետք է որոնել Դաշնակցության դեմ քաղաքական ու գաղափարական պայքարի այն ուղեգիծը, որին ի դեմս Հովհաննիսյանի հետևում էր ազգային կոմունիստների կառավարությունը 1920-ականների առաջին կեսին:[91]

Նախապես կազմակերպված այս դատավարության ընթացքում Հովհաննիսյանի կարգավիճակն իրապես հետաքրքրական է: Ի դեմս ոմն Յաղուբյանի, մեղադրյալի աթոռին նստած Դաշնակցության պաշտպանությունը ստանձնել էր ոչ այլ ոք, քան ինքը՝ Հայաստանի կոմունիստական կուսակցության գլխավոր քարտուղար Աշոտ Հովհաննիսյանը:[92] Հայաստանի սոցիալիստական հեղափոխության մեկամյակի օրերին կազմակերպված հանրային այս դատավարությունը, ինչպես նշում էր դատարանի նախագահ նշանակված Դրաստամատ Տեր-Սիմոնյանը, նպատակ ուներ «այդ կուսակցության գործունեությունը դատ[ել] անաչառ յեվ անողոք կերպով» (թ. 2):

Դատավարությունը սկսվում է Տեր-Սիմոնյանի Դաշնակցության դեմ կազմված մեղադրական ակտի ընթերցմամբ: Դաշնակցության 30-ամյա գործունեությանն ամփոփ գնահատական տալով՝ Տեր-Սիմոնյանը ներկայացնում է Դաշնակցության դեմ ուղղված 15 կետից բաղկացած մեղադրանքը՝ խոսքն ավարտելով եզրակացությամբ.

> Ի նկատի ունենալով.... հայաջինջ ու դավադիր քաղաքականությունը յեվ հայ աշխատավորության դեմ գործադրված հակահեղափոխական գործերը մեղադրյալին առաջարկվում ե ամենաբարձր պատիժը, նա իբր քաղաքական կուսակցություն Հայաստանի արեվի տակ տեղ չունի յեվ մահվան պիտի դատապարտվի (թ. 10):

Երկար տևած հարցաքննության ընթացքում առանձնապես հետաքրքրական դրվագ է թվում հասարակական մեղադրողի դերում հանդես եկող Արամայիս Երզնկյանի ելույթը, որի խոսքն առավել ծանրակշիռ էր: Վկաների ցուցմունքները, ըստ Երզնկյանի, պարզում էին այն «արյունալի մարտիրոսագրությունը», որին ենթարկվել էր հայ

---

[90] ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 199: Ինչպես պարզում ենք դատավարության բացումը նկարագրող հատվածից, այն կազմակերպվել էր Բանվորական ակումբում, որտեղ ներկա են եղել «Յերեվանի լայն մասսաները»: Դատավարության ընթացքը վերապատմող անանուն հեղինակը նշում է, թե նման երևույթը Երևանի կյանքում «նոր» էր: Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 199, թ. 2: Հետագայում հանրային նման դատավարությունները Խորհրդային Հայաստանում դարձան բավական լայն տարածում ունեցող երևույթներ, որոնք քննում էին տարբեր ոլորտներին առնչվող դեպքեր և լուսաբանվում էին նաև մամուլում: Տե՛ս, օրինակ, Շ. Ղ., «Ն. Ախտայի շրջ. կանանց միության կազմակերպած ընկ. դատը», *Խորհրդային Հայաստան,* 6 հունիսի 1924 թ.; Ս. Աղավնի, «Ընկերական դատերի մասին», *Ավանգարդ,* 26 նոյեմբերի 1925 թ.; Անկեղծ, «Գրական դատ», *Կոմմունիստ* (Բաքու), 4 մարտի 1924 թ.: Դատավարության տարբեր հատվածները ներկայացնող անդրադարձները մամուլում տե՛ս ««Դաշնակցութիւն կուսակցութեան դատը»», *Խորհրդային Հայաստան*, 3, 9, 13 դեկտեմբերի 1921 թ.: Դաշնակցական մամուլի անդրադարձներից տե՛ս «Հայ կեանք. Դաշնակցութիւնը մահուան դատապարտուած», *Ասպարէզ,* 27 հունվարի 1922 թ.; «Խելագարներու իշխանութիւնը», *Ասպարէզ,* 7 փետրվարի 1922 թ.; Վ. Վէմեան, «Բարոյական նոր պարտութիւն մը», *Հայրենիք*, 25 օգոստոսի 1922 թ.:

[91] Սրան զուգահեռ մոռացության չպետք է տալ, որ Հայաստանի խորհրդային կառավարությունը Դաշնակցության դեմ վարում էր իրական քաղաքական պայքար, որի մասին պատկերացում են թույլ տալիս կազմել, օրինակ, Վլադիմիր Ղազախեցյանի հրատարակած վավերագրերի ժողովածուները: Տե՛ս *Հ.Յ. Դաշնակցությունը և խորհրդային իշխանությունը (Փաստաթղթերի և նյութերի ժողովածու)* (Երևան: Հրատարակություն ՀՅ Դաշնակցության Բյուրոյի, 1999); *ՀՅ Դաշնակցությունը ԽՍՀՄ արտակարգ հանձնաժողովի և պետական քաղաքական վարչության գաղտնընթերցումներում (1920-ական թվականներ) (փաստաթղթերի ժողովածու)* (Երևան: Պատմության ինստիտուտ, 2016): Տե՛ս նաև Մանուկյան, *Քաղաքական կուսակցությունների լուծարումը Խորհրդային Հայաստանում 1920-ական թվականներին,* էջ 82-114:

[92] Մեկ այլ պաշտպան է եղել Ավիս Նուրիջանյանը, որը սակայն, ըստ դատավարության արձանագրության, պաշտպանական խոսքով հանդես չի եկել: Դատարանի նախագահն էր Դրաստամատ Տեր-Սիմոնյանը, անդամներն էին Ա. Խաչյանը, Հայկ Ազատյանը, Ս. Մարտիկյանը և Պողոս Մակինցյանը: Իբրև հասարակական մեղադրողներ հանդես են եկել Արամայիս Երզնկյանը, Ս. Մարգարյանը, Ա. Ղարագոզյանը: Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 199, թ. 2: Տեքստից հետագա մեջբերումները՝ տողամիջում:

աշխատավորությունը Դաշնակցության «անմիտ ու կործանարար» քաղաքականության արդյունքում: Դրանք ապացուցում էին Դաշնակցության այն «անմիտ» քաղաքականությունը, որը եղել է «Տաճկահայաստանի հայության բնաջնջման դրդապատճառը» (թ. 19): Երզնկյանն իր խոսքով խնդիր էր դնում պարզելու Դաշնակցության «եյությունն ու կործանարար քաղաքականության հետեվանքները»: Ուստի և անհրաժեշտ է համարում հայացք նետել կուսակցությանը ծնունդ տված պայմաններին (թ. 19): Ըստ Երզնկյանի՝ հայ ցրված առևտրականները, որոնք 19-րդ դարի 2-րդ կեսին մահմեդական երկրներում զուրկ են եղել տարրական իրավունքներից և առևտուրը զարգացնող պայմաններից, «իրանց ազատագրման հույսը դնում են ցարիզմի վրա յեվ ձեռք տված Անդրկովկասի հայ բուրժուազիային նպաստում նույն ցարիզմի առաջխաղացմանը դեպի հարավ ստեղծելու նոր ազատ շուկաներ»: Երզնկյանի գնահատմամբ՝ Տաճկահայաստանի ծանր վիճակը, ազգաբնակչության իրավազրկումը «առատ նյութ ե տալիս հայ բուրժուական լիբերալիզմի գաղափարական կաղապարի մեջ դնելու յուր ձգտումները դեպի ազատ շուկաներ» (թ. 20):

Սա էր, ըստ Երզնկյանի, այն միջավայրը, որտեղ ծնունդ էր առել Դաշնակցությունը: Ըստ Դաշնակցությանը ծնունդ տված պայմանների նկարագրի առանցքային է դառնում Երզնկյանի տված գնահատականը հենց Դաշնակցությանը: Ըստ Երզնկյանի՝

> Հայ մեշչանականությունը (հայ մանր բուրժուազիան՝ Ի. Շ.) զուրկ էր իր սեփական իդեոլոգիայից յեվ հետեվում եր հայ լիբերալիզմին: Իսկ այդ լիբերալիզմի ձգտումները թեյեվ քողարկված մեշչանական ֆրազիոլոգիայով – իրականացնելու համար ծնունդ առավ դաշնակցությունը:
> Թեյեվ դաշնակցական գրականության մեջ նկատված ե նառոդնիկական բնույթ, բայց իրոք իրականության մեջ, դաշնակցությունը զուտ բուրժուական մի կուսակցություն եր յեվ աշխատում եր բուրժուական պրյոմներով ու քաղաքականությամբ (թ. 20):

Սկզբից մինչև վերջ նախապես մտածված այս դատավարության տրամաբանությունը պարզ է դառնում, երբ դատավարության ժամանակ՝ իբրև վերջին ելույթ ունեցող, հանդես է գալիս Դաշնակցության պաշտպան Աշոտ Հովհաննիսյանը: Երզնկյանի ելույթն ըստ էության բյուրեղացնում էր ողջ դատավարության ընթացքում Դաշնակցության քաղաքական գործելակերպը բնորոշող գնահատականը. Դաշնակցությունը բուրժուական կուսակցություն է: Ավելին, բուրժուական լիբերալիզմն ընդամենը քողարկվում էր մանրբուրժուականության «ֆրազիոլոգիայով», այնինչ հայ մանր բուրժուազիան որպես այդպիսին սեփական իդեոլոգիա առհասարակ չուներ:

Ի՞նչ պետք է փաստարկեր այս մեղադրանքի դեմ Հովհաննիսյանը: Ինչպե՞ս պիտի պաշտպաներ Դաշնակցությանը: Այն, թե մեղադրանքի որ կետից է սկսում Հովհաննիսյանն իր ելույթը, ըստ էության, կարծես վեր է հանում ինքնին դատավարության կազմակերպման գաղափարական տրամաբանությունը: Հովհաննիսյանը նախևառաջ հայտարարում էր, որ «թյուր կարծիք» է այն, թե Դաշնակցությունը կամ ազգային հեղափոխական կուսակցությունները ծնունդ են մահմեդական երկրների և անդրկովկասյան հայ բուրժուազիայի.

> Վերագրել հայ բուրժուազիային քաղաքական նման առաքինություն, կնշանակեր ուղղակի ծիրանի հագցնել խոզին: Հայ բուրժուազիան յեվ մանավանդ հայ առեվտրական կապիտալը, վորի մասին խոսվում ե

> մեղադրականում ծագման ու զարգացման պարագաներով զուրկ են յեղել ազգային քաղաքական վորյեվե նկարագրից (թ. 25):

Հովհաննիսյանն այս կերպ վճռականորեն կտրում է Դաշնակցությունը հայ բուրժուազիայից: Առևտրական կապիտալը նոր ժամանակներում, ըստ Հովհաննիսյանի, զարգացել էր որպես գաղութային կապիտալ: Նոր Ջուղայի, Նոր Նախիջևանի, Մոսկվայի, Պետերբուրգի, Պոլսի, Ջմյուռնիայի և այլ գաղութներում, Հովհաննիսյանի գնահատմամբ, հայ կապիտալը կարող էր զարգանալ՝ կորցնելով աստիճանաբար իր ազգային նկարագիրը և համակերպվելով տիրող քաղաքական ռեժիմներին: Իսկ Հայաստանը հայ առևտրական բուրժուազիայի համար չի ներկայացել իբրև գրավիչ շուկա (թ. 25): 1880-90-ականներին, անդրկովկասյան հայ արդյունաբերական կապիտալը ևս կապված էր դրսի՝ Բաթումի, Թիֆլիսի ու Բաքվի, բայց ոչ հայկական քաղաքների շուկաների հետ: Նույնը և տաճկահայ բուրժազիայի կապիտալի դրությունն էր, որը կապված էր սուլթանական ռեժիմի հետ (թ. 26): Հովհաննիսյանի հայացքը հայ առևտրական բուրժուազիային չէ, որ ուղղված էր.

> Ավելի կարեվոր ե կանգ առնել ռուսահայ մանր բուրժուազիայի վրա: Քաղաքային մանր բուրժուազիան Անդրկովկասում կրում եր զարգացող կապիտալի հարվածները: Կորցնելով հետզհետե գոյութեյան ռեյալ հենակետեր, հայ մանր բուրժուազիան սկսում ե հետզհետե տարվել քաղաքական ռոմանտիզմով յեվ «Ավետյաց յերկրի» մեջ վորոնել իր բարեկեցության աղբյուրները: Քաղաքական նույն ռոմանտիզմով պետք ե տարվեր նայեվ հայ գյուղացիությունը (թ. 27):[93]

Հովհաննիսյանի պաշտպանականի առանցքը կազմող փաստարկն, ուրեմն, կռիվն էր Դաշնակցության սոցիալական ծագմանը պատմականորեն ճիշտ գնահատական տալու համար: Այդ գնահատականն էր, որ միաժամանակ պիտի վճռեր և Դաշնակցության ճակատագիրը քաղաքականապես:[94] Դաշնակցությունը տեղ ու ազգային քաղաքական օրակարգ չճանաչող բուրժուազիայի կուսակցությունը չէր, այլ հայաստանյան իրականությունից ծնունդ առած, այդ իրականությունը պայմանավորող հայ մանր բուրժուազիայի հարազատ կուսակցությունն էր: Այս տեսակետից ամենևին պատահական չի թվում այն, որ Դաշնակցության պաշտպանի դերում նշանակված է եղել հենց Հովհաննիսյանը: Հովհաննիսյանն էր, որ պատմականորեն վեր էր հանում հայաստանյան իրականության սոցիալական նկարագիրն ու ըստ այդմ վերագնահատում Դաշնակցությանը ներկայացված մեղադրանքները: Պաշտպանել

---

[93] Տաճկահայաստանի ազատագրական շարժման ակունքներին անդրադառնալով՝ Հովհաննիսյանը հաստատակամորեն պնդում է, որ Դաշնակցության հիմնադիրները՝ «Քր. Միքայելյան, Ջորյան, Ռոստոմ, քաղաքական դաստիրակություն եյին ստացել վոչ թե հայ լիբերալիզմի կամ ցարական ոխրանկայի շրջանում, այլ ռուս նարոդնիկական շարժման մեջ….»: «Դաշնակցությունը իդեյական ժառանգ կարող ե համարվել Ռաֆֆիի....» (թթ. 28-29): Տեղին է հիշել, որ Հովհաննիսյանի աշխարհայեցողական զարգացման հարցում ևս նշանակալի դեր են կատարել Ռաֆֆու գրվածքները: Հովհաննիսյանն այս մասին գրում է. «Հայրական գրադարանում կային Ռաֆֆու երկերը, որոնց ընթերցումը մեծապես ուղղություն էր տալիս իմ մտավորին»: Տե՛ս Աշոտ Հովհաննիսյանի ֆոնդ, թղթ. 244/12, վավ. 256ա, թ. 26, հմմտ. 28, 29, 30: Այս մասին տե՛ս Ազատյան, «Ոչ եղիցի չեղեալ, զոր ինչ եղևն», էջ 572-573: Ռաֆֆու քաղաքակրթական իդեալների ու զինված ազատագրական պայքարի միջև կապերը քննող ուշագրավ անդրադարձ է *Մշակույթ և արդիականացում* ծրագրի շրջանակում իրականացված Սիրանուշ Դվոյանի *Ազգային կյանքը նյութական պայմաններից անդին. Ռաֆֆու լուսավորական ծրագիրը* հետազոտությունը: Տե՛ս https://shorturl.at/KLPU7, այց՝ 6 հունվարի 2024 թ.:

[94] Պատահական չէ, որ արդեն 1923-ին կայացած նախկին դաշնակցականների համագումարում Դաշնակցության մանրբուրժուականությունն այլևս քննարկման առարկա չէր: Տե՛ս *Նախկին շարքային դաշնակցականների համահայաստանյան համագումարի արձանագրությունները,* էջ 3:

Դաշնակցության մանրբուրժուականությունը նշանակում էր իրատես լինել հայաստանյան իրականության սոցիալական բնույթի հանդեպ: Պաշտպանել հայաստանյան իրականության մանրբուրժուականության թեզը, նշանակում էր քաղաքականապես իրատես լինել Դաշնակցության քաղաքական ուժի հանդեպ:

Ուշագրավ է այս իմաստով Հովհաննիսյանի ելույթի ամփոփիչ հատվածը: Հովհաննիսյանի ըմբռնմամբ, Դաշնակցության հանցանքները կատարվել էին մի հասարակարգի շրջանում, որը այլևս գոյություն չուներ: Սակայն հանցանքը պետք է քննվեր այն իրավակարգի սահմաններում, որի դեմ Դաշնակցությունը մեղանչել էր: Այդ տեսակետից է, որ Հովհաննիսյանը դատավարությունը նկատում է որպես «թյուրիմացություն», քանի որ եթե դատավարությունը դասակարգային պայքարի միջոց պետք է դիտվեր, այդ միջոցը գործադրվում էր մի հակառակորդի դեմ, որը հրապարակի վրա չէր (թ. 31): Հովհաննիսյանն իր ելույթի վերջին տողերով Դաշնակցության դատը քաղաքական դատավարության հարթությունից անդին է դնում. «Դաշնակցության գործունեությունը այսոր հայոց պատմության սեփականությունն ե. յեվ այդ գործունեությունը պետք ե յենթակա լինի մի ուրիշ դատի, ավելի ահեղ քան ներկա դատը, դա պատմության դատն ե» (թ. 31):

Ո՞վ էր սակայն Դաշնակցությանը պատմության դատին հանձնողը: Հովհաննիսյանի պատմաբանական հայացքը քաղաքական անհեռատեսությունը կանխող գործոնն էր: Ազգային կոմունիզմը քաղաքական ժառանգն էր Դաշնակցության, դրա նոր հանգրվանը: Ներհակ ձևով ազգային քաղաքական մտքի ժառանգորդությունը 1920-ականներին չափազանց կենդանի կերպով էր դրսևորվում: Հովհաննիսյանի դիրքորոշումը՝ Դաշնակցությունը գնահատել իբրև հայ մանր բուրժուազիայի կուսակցություն, միաժամանակ նշանակում էր քաղաքական ժառանգը լինել այն քաղաքական, սոցիալական իրականության, որից ծնվել էր Դաշնակցությունը: Մանրբուրժուականության տատանումը քաղաքական այն խնդիրն էր, որն իբրև ժառանգություն ազգային կոմունիստները ստացան դաշնակցական գործիչներից: Հայաստանյան իրականության մանրբուրժուականությունն էր, որից ծնվել, որին պատկանել էր Դաշնակցությունը, ու որն իբրև հայաստանյան քաղաքական մտքի չլուծված խնդիր փոխանցվել էր Դաշնակցությունից ազգային կոմունիզմին: Հովհաննիսյանի հետևողականությունը՝ Դաշնակցությունը չկտրել դրան ծնունդ տված պայմաններից, հավասարապես նշանակում էր հաշվի նստել այդ պայմանների ռեալության հետ, չթերագնահատել Դաշնակցության քաղաքական ուժն ու, որ թերևս առանցքայինն էր, մանր բուրժուազիայի անկայուն բնույթից ելնող քաղաքական վտանգները:

1924-ին Երևանում ընթերցած զեկույցներից մեկում ազգային կոմունիստ գործիչներից մյուսը՝ Ալեքսանդր Մյասնիկյանն անդրադառնալով դաշնակցականների քաղաքականությանը, իբրև իր խոսքի ամփոփում հավելում է.

> Ընկերնե՛ր, գուցե յես դաշնակցության մասին յերկար խոսեցի: Այդ դիտմամբ եմ անում, վորովհետև գիտեմ, վոր նա հայության համար վոչ թե միայն կազմակերպություն ե, այլ մի հոգեբանություն: Ամեն հայ կուլակ, չարչի,

> քայքայել ենք դաշնակցությունը, բայց նրա բուրժուական հոգեբանությունը դեռ կա մեր մեջ. պետք է այն վերացնել:[95]

Դաշնակցական հոգեբանությունը մանրբուրժուական հոգեբանությունն էր: Հնարավոր չէր քաղաքականապես Դաշնակցությունը քայքայելով ակնկալել մանրբուրժուականության քայքայում: Պատահական չէ, որ Մյասնիկյանի համար դաշնակցական հոգեբանությունը վերացնելու խնդիրը «կենցաղի հարց» էր և այդ իսկ պատճառով վերացնելը՝ «դժվար»: Քաղաքականությունն ի զորու չէր վերացնել իրականությունը՝ «կենցաղը»: Ազգային կոմունիստների քաղաքական սթափությունն էր, որ թույլ էր տալիս թերահավատ գտնվել հենց քաղաքականության հանդեպ, տեղ տալով ապրվող կյանքին, կենցաղին, որը դեռ շարունակում էր մնալ նույն մանրբուրժուական իրականությունը:

Ի վիճակի՞ էին դաշնակցականները հասկանալ կոմունիստների քաղաքականությունը: Դաշնակցական *Յուսաբերը* Մյասնիկյանի ելույթին անդրադարձավ առանձին հոդվածով՝ վերնագրված ««Ամէն հայ դաշնակցական հոգեբանութիւն ունի»»:[96] Հոդվածում Մյասնիկյանի ելույթի վերը բերված հատվածը մեջբերված է ամբողջությամբ, սակայն ուշագրավ մի փոփոխությամբ: Մյասնիկյանի «կուլակ, չարչի, դուքանչի, ինտելիգենտ» թվարկումը *Յուսաբերի* խմբագրական հոդվածում փոխարինվել էր «Ամէն հայ, ինչ դասակարգի ալ ըլլայ» ձևակերպմամբ:[97] Կուլակի, չարչու, դուքանչու, ինտելիգենտի դասակարգային պատկանելությունը, այսինքն՝ դրանց մանրբուրժուականությունը չառերեսելն ինքնին նշան չէ՞ր, որ Դաշնակցությունն ի զորու չէր հարաբերվել հայաստանյան իրականության հետ՝ դրան իրապես հատուկ առանձնահատկություններով հանդերձ: Ավելին, հայ կոմունիստների՝ հայաստանյան իրականության հետ աշխատելու փորձն իսկ վերածվել էր Դաշնակցության քաղաքական ուժի հանդեպ խոնարհման նշանի: Դասակարգային խնդրի նման անտեսումը կոնկրետ հետևության էր հանգեցնում դաշնակցականներին՝ քաղաքական գնահատականը վերածելով «թանկագին մեղադրանքի».

> Այսքան թանկագին մեղադրանք չէ եղած մինչեւ այսօր Դաշնակցութեան դէմ: Այո՛, պարոն կոմիսարներ, ամէն հայ, դաշնակցական հոգեբանութիւն ունի: Գիտցէ՛ք: Ասիկա պատիւ կը բերէ այդ կուսակցութեան, որ կրցեր է իր շունչովը դաստիարակել հայ ժողովուրդը....: Ասիկա պատիւ կը բերէ նաեւ հայ ժողովուրդին, որ ըմբռներ է իր ճշմարիտ բարեկամը, իր շահերուն պաշտպանը....: «Պուրժուակա՞ն»–ձե՛ր կարծիքով, այո՛, որովհետեւ հարկադրուած էք բանով մը մրոտելու, ձեր տգիտութիւնը պարտակելու եւ քիչ մը ճերմակ երեւալու համար...:[98]

«Ամեն հայի» գաղափարից «հայ ժողովուրդ» արտածելու այս գործողության մեջ էր հենց, որ կորում էր հայաստանյան իրականությունը: Այնինչ դրա հետ հարաբերվելու

---

[95] «Ընկ. Մյասնիկյանի զեկուցումը Յերևանի կուսակցական պրոֆեսիոնալ յեվ Լ. Կ. Յերիտմիության քաղկազմակերպությունների արտակարգ ժողովում. 1924 թ. սեպտեմբերի 29-ին», *Խորհրդային Հայաստան*, 2 հոկտեմբերի 1924 թ.: Մյասնիկյանի Դաշնակցությանն անդրադարձող նյութերից տե՛ս, օրինակ, Ալ. Մարտունի, «Դաշնակցութեան փաստաթղթերից» [առաջաբան], ըստ՝ *Դաշնակցական կառավարութեան դոկումենտներից. Ա. Սիարոնեանի զեկոյց-նամակները* (Երեվան: Տպ. Ռազմ. ժող. Կոմիսարիատ, 1922), էջ 3-9:

[96] ««Ամէն հայ դաշնակցական հոգեբանութիւն ունի»», *Յուսաբեր*, 4 նոյեմբերի 1924 թ.: Մյասնիկյանի այս ելույթին իբրև անդրադարձ տե՛ս նաև Ն. Բաղալեան, «Հ. Յ. Դաշնակցութիւնը եւ Միասնիկեանը», *Յուսաբեր*, 8, 11 նոյեմբերի 1924 թ.:

[97] ««Ամէն հայ դաշնակցական հոգեբանութիւն ունի»»:

[98] ««Ամէն հայ դաշնակցական հոգեբանութիւն ունի»»:

փորձը միայն կոմունիստներին չէր պատկանում: Իրենց՝ դաշնակցականների շրջանում այս հարցում էական տարաձայնություններ կային: Դաշնակցության հիմնադիրներից «ամենամարքսիստը»՝ Ռոստոմը, այս ընդհանրացումից ակնհայտորեն շատ հեռու դիրքորոշում ուներ: 1907-ին Վիեննայում կայացած Դաշնակցության ընդհանուր ժողովի ժամանակ Ռոստոմը անդրադառնալով Դաշնակցության մարտավարությանը նշում էր.

> «Գալով այն հարցին, թէ ինչպէ՛ս է տարուել մեր կռիւը Տաճկահայաստանում, մի անգամ եւս պէտք է պնդեմ, որ նա չի տարուել «ազգովին»: Այո՛, նա եղել է ազգի համար, բայց՝ ո՛չ ազգովին: Դաշնակցութիւնը յենուել է միայն աշխատաւորական տարրի վրայ […] Նիւթական օժանդակութեան վերաբերեալ, Կովկասում […] ջերմ օժանդակութիւն էին ցոյց տալիս մանր բուրժուաները [միայն], բայց սահմանափակ շրջանում եւ ոգեւորութեան բացառիկ դէպքերում…»:
> Ապա,– ինչպես իր հոդվածում նշում է Ռոստոմի «գաղափարական աշխարհին» անդրադարձող Հարություն Քյուրքչյանը,– «Ռոստոմ բացառելով «շնորհիւ ձեռք առնուած մի քանի միջոցների» (իմա՛ «Փոթորիկ»-ի գործ) քաղքենիութեան բերած հարկադրական նպաստի պարագան՝ կ՛եզրակացնէ. «…այդ տարրը ոչ մի բնական ձգտում չունի որեւէ օգնութիւն հասցնելու յեղափոխական գործին…»:[99]

Անկայուն մանր բուրժուազիան էր կրկին, որի «ոգևորության» տատանումների հետ գործ էր ունեցել Դաշնակցությունն իր գործունեության վաղ շրջանում: Նույն մանր բուրժուազիայի, քաղքենու տատանումն էր հիշում Վրացյանը Հայաստանի խորհրդայնացմանը նախորդած շրջանի մասին հուշերում: Ի վերջո, մանր բուրժուազիայի տատանման հետ հաշվի նստել փորձող դաշնակցականներն ու կոմունիստները նույն մանր բուրժուական իրականությունից ծնունդ առած քաղաքական մտքի տարբեր հանգրվաններն էին: Հայ քաղաքական մտքի ժառանգորդական այս կապն իր բարդությամբ, բայց միաժամանակ իր ակնհայտությամբ է երևան գալիս, երբ դաշնակցականներն ու կոմունիստներն իրենք են այն ձևակերպում: Իր գրքի վերջում Վրացյանը գրում է. «Հայ բոլշեւիկներն էլ, ի վերջոյ հայ են.... Դաշնակամիտ համայնավարներ»:[100] Նույն այդ «դաշնակամիտ համայնավարներից» Աշոտ Հովհաննիսյանը 1921-ին իր ելույթներից մեկի ժամանակ հայտարարում է. «Մենք մեզ համարում ենք ժառանգորդ նախկին գաղափարակիր հոսանքների....»:[101]

---

[99] Յարութիւն Քիւրքճեան, «Ռոստոմի գաղափարական աշխարհը՝ բնագիրներու ընդմէջէն», https://shorturl.at/nsvB6, այց՝ 14 օգոստոսի 2023 թ.:
[100] Վրացեան, *Հայաստանը բոլշեւիկեան մուրճի եւ թրքական սալի միջեւ*, էջ 196-197:
[101] Ըստ՝ Անուրջ, «Հ. Ս. Խ. Հանրապետութեան լուսժողկոմ ընկեր Աշոտ Հովհաննիսեանի զեկոյցը «Հայարտան»», *Կարմիր աստղ*, 2 սեպտեմբերի 1921 թ.:

Գլուխ 2

Դաշնակցությունը՝ ստալինիզմի դատին

«Ընկերներ, վո՞րտեղ ե այստեղ բոյլշեվիզմը»

Որքա՞ն պետք է տևեր ՆԷՊ-ի շրջանում «մանր-բուրժուական տարերքի» դեմ հայտարարված պայքարը: Այս հարցն ուղղակիորեն շաղկապված էր քաղաքական այն ուժի իշխանության տևականության հետ, որը ստանձնել էր պայքարի այդ օրակարգը: Ազգային կոմունիստների ղեկավարությունը Հայաստանում իշխանության էր եկել ՆԷՊ-ի հաստատման պայմաններում: Սակայն 1920-ականների երկրորդ կեսին Խորհրդային Ռուսաստանում կատարվող իրադարձություններն ու ներկուսակցական լարված դրությունն անխուսափելի փոփոխություններ էին կանխորոշում ոչ միայն Ռուսաստանի, այլև ողջ Միության քաղաքական կուրսի համար: 1927-1928-ին կոմունիստական հեղափոխական գաղափարախոսությունը ստալինացման ակնհայտ միտումներ էր դրսևորում:[102]

Կոմունիստական կուսակցության 15-րդ համագումարը, որը կայացավ 1927-ի դեկտեմբերին, ամփոփեց տրոցկիզմի դեմ երկարամյա պայքարի արդյունքները և հայտարարեց դրա լիկվիդացման մասին:[103] Սա, ըստ էության, նշանակում էր, որ լիկվիդացիայի էր ենթարկվել Լև Տրոցկու գլխավորած «ձախ» թեքումն ու ըստ այդմ չեզոքացվել ՆԷՊ-ից հրաժարման ու երկրի զարգացման հեռանկարը «արդյունաբերության դիկտատուրայի» հաստատման հետ կապելու Տրոցկու պահանջը:[104] Ստալինը սա հաջողեց կոնկրետ քայլերով. դեռ 1920-ականների կեսերին ՆԷՊ-ը շարունակելու Նիկոլայ Բուխարինի դիրքորոշումը պաշտպանելով էր, որ Ստալինը Տրոցկուն հեռացրեց քաղաքական ասպարեզից: Սակայն նույն 1927-ին ստալինյան կուրսում նկատվեց նոր փոփոխություն: Կուսակցության 15-րդ համագումարում ընդունված բանաձևերում դեռևս թույլ, բայց արդեն շոշափելի էր քաղաքական կուրսի դեպի «ձախ» թեքման միտումը: Այս սպասվող շրջադարձն էր, որ շուտով «աջ» թեքման կարգավիճակում պետք է դներ հենց Բուխարինին և ՆԷՊ-ի պաշտպաններին:[105] Ներկուսակցական այս վերադիրքավորումներն էին, որ քաղաքականապես ճանապարհ էին հարթում 1928-ին ազդարարված ստալինյան առաջին հնգամյակի համար:[106]

---

[102] Ներկուսակցական պայքարի ու ստալինիզմի հաստատման մասին տե՛ս Верт, *История Советского государства*, էջ 185-208; Боффа, *История Советского Союза*, էջ 258-274:

[103] Տե՛ս Верт, *История Советского государства*, էջ 200:

[104] Երկրի տնտեսական զարգացման «ձախերի» տեսլականը տե՛ս Верт, *История Советского государства,* էջ 184:

[105] 1927-ի այս դրությունը մեծ հաշվով արդյունքն էր դեռ 1924-ին Լենինի մահից անմիջապես հետո նրա ժառանգության վրա մենիշխանություն հաստատելու Ստալինի փորձի: Իրեն իբրև Լենինի գաղափարների միակ օրինական մեկնաբան ներկայացնող Ստալինի գաղափարական իշխանության ուժը կենտրոնական («լենինյան») դիրքի հետ նույնացումն էր: Դրա արդյունքում էր, որ ներկուսակցական սուր վեճերը մեկնաբանվում էին իբրև կենտրոնի «գլխավոր գծի» պայքար «աջ» կամ «ձախ» թեքումների դեմ: Տե՛ս Верт, *История Советского государства,* էջ 198: Կենտրոնում ծավալված ներկուսակցական պայքարի արձագանքները Հայաստանում տե՛ս Ղազախեցյան, *Հայաստանը 1920-1940 թթ.,* էջ 322-334; Հակոբյան, *Միակուսակցական վարչակարգի ձևավորումը,* էջ 294-333:

[106] Ստալինյան առաջին հնգամյակի մասին տե՛ս, օրինակ, Pobert Conquest, *The Harvest Sorrow: Soviet Collectivization and the Terror-Famine* (New York: Oxford University Press, 1986), էջ 85-188; Lewin, *Russian Peasants and Soviet Power*, էջ 344-382; Sheila Fitzpatrick, *Stalin's Pesants,* էջ 48-79; Lynne Viola, *Peasant Rebels Under Stalin: Collectivization and the Culture of Peasant Resistance* (New York, Oxford: Oxford

Միության կենտրոնում կատարվող այս «մեծ բեկումը» Հայաստանում իր ուղիղ արձագանքն էր գտնում: Հայաստանում ստալինիզմի հաստատումը սկսվեց ազգային կոմունիստների ղեկավարության դեմ քաղաքական արշավով: Կենտրոնում ՆԷՊ-ի պաշտպաններին վերագրված «աջ» թեքումը Հայաստանում նույնացվեց ազգայնականության հետ: «Աջ-ազգայնական» թեքման մեջ մեղադրանքը Հայաստանում ըստ էության ուղղվեց բոլոր այն գործիչների դեմ, որոնք ՆԷՊ-ի պայմաններում այս կամ այն կերպ արտահայտվում էին Հայաստանի առանձնահատկությունները հաշվի առնելու, գյուղի սոցիալիստական վերակառուցման ավելի դանդաղ ընթացքի անհրաժեշտության օգտին և այլն: Ազգային կոմունիստների դեմ սկսված ստալինյան քաղաքական արշավի գլխավոր թիրախը, սակայն, կոնկրետ անձ էր՝ Հայաստանի կոմունիստական կուսակցության գլխավոր քարտուղար Աշոտ Հովհաննիսյանը:[107] 1927-ի մարտին կայացած Հայաստանի կոմունիստական կուսակցության Կենտրոնական կոմիտեի և Կենտրոնական վերահսկիչ հանձնաժողովի (ԿՎՀ) միացյալ պլենումը բացահայտ դարձրեց քաղաքական այն մեղադրանքները, որոնք բարձրաձայնելն ի վերջո նպատակ ուներ հեռացնել Հովհաննիսյանին զբաղեցրած պաշտոնից և ըստ այդմ նաև հեռացնել ազգային կոմունիստ գործիչների ղեկավարությունն առհասարակ:[108]

Ինչպես պարզ է պլենումի արձանագրությունից, Հովհաննիսյանի զեկույցով բացվել է պլենումի առաջին նիստը:[109] Հովհաննիսյանը զեկույցի սկզբում նշում է, որ նախ հանդես է գալու Կենտրոնական կոմիտեի նախագահության որոշումների մասին հաշվետու զեկույցով, ապա անդրադառնալու է ներկուսակցական դրությանը, որը ընթացիկ պլենումի «ուշադրության կենտրոնում» է (բնագիրը՝ ռուսերեն) (թ. 1): Բայց արձանագրության ընթերցումից ու հատկապես Հովհաննիսյանի ելույթին հաջորդած քննարկման ժամանակ հանդես եկած մասնակիցների խոսքից պարզ է դառնում, որ Հովհաննիսյանի զեկույցի արձանագրությունն ամբողջական չէ: Բացակայում է մասնավորապես Հովհաննիսյանի զեկույցի ներկուսակցական դրության մասին հատվածը: Մի իմաստով, ուրեմն, մարտյան պլենումի արձանագրությունը ներկայացնում է կայացած սուր քաղաքական բանակռվի մի կողմը միայն, այն հատվածը, որտեղ Հովհաննիսյանը ենթարկվում է սուր քննադատության: Հովհաննիսյանի զեկույցի քննարկման մասնակիցների շարքում առավել ընդգծված հռետորաբանությամբ աչքի ընկնողներից էր Ալեքսանդրապոլի գավառային գործադիր կոմիտեի նախագահ Արսեն Եսայանը: Բացահայտ առճակատման մեջ մտնելով Հովհաննիսյանի հետ՝ Եսայանը հայտարարում էր. «Ես կարծում եմ, վոր մեր կազմակերպության մեջ ներկայումս գոյություն ունի խորը դժգոհություն յեվ անվստահություն դեպի մեր կուսակցության ղեկավար կադրը» (թ. 32):[110] Եսայանի խոսքով իր ելույթը նպատակ ուներ պարզել այն

University Press, 1996), էջ 13-44: Հայաստանում ստալինյան առաջին հնգամյակի մասին տե՛ս Վլադիմիր Ղազախեցյանի *Սովետական Հայաստանը մեծ բեկման տարում* (Երևան: ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1962) և *Հայաստանի կոլտնտեսային գյուղացիության պատմությունը (1929-1937)* (Երևան: ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1978) հատորները:

[107] Խոսելով 1926-1927-ին Հայաստանում սկսված ներկուսակցական պայքարի մասին Արարատ Հակոբյանը փաստում է, որ «ամեն ինչ սկսվեց ԿԿ-ի քարտուղար Աշ. Հովհաննիսյանի պաշտոնանկության գործընթացից»: Տե՛ս Հակոբյան, *Միակուսակցական վարչակարգի ձևավորումը,* էջ 299: 1926-1927-ի ներկուսակցական պայքարի մասին տե՛ս նաև Մանուկյան, *Քաղաքական կյանքը Հայաստանում*, էջ 33-45, 52-67:

[108] ԿՎՀ-ն կուսակցության բարձրագույն վերահսկիչ մարմինն էր: ԿՎՀ կարող էին ձևավորել այն կուսակցական կազմակերպությունները, որոնք ունեին Կենտրոնական կոմիտե: ԿՎՀ-ն հաշվետու էր կուսակցության համագումարի առաջ: Մարտյան պլենումի մասին տե՛ս Հակոբյան, *Միակուսակցական վարչակարգի ձևավորումը,* էջ 300-303:

[109] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 7, գ. 15, թթ. 1-17: Տեքստից հետագա մեջբերումները՝ տողամիջում:

[110] Հովհաննիսյանի դեմ 4-րդ պլենումում բացահայտ դուրս եկած առավել աչքի ընկնող կուսակցական անդամների թվում էին նաև Հայկ Ազատյանը, Հովհաննես Բաննահյանը, Արամայիս Երզնկյանը: Պլենումում ելույթով հանդես եկած Լ. Ղազարյանի խոսքով «Կենտկոմի նախագահության գիծը գրոհելու առաջին երկչոտ փորձերը սկսեց Եսայանը՝ անցյալ տարվա մայիսյան պլենումին» (բնագիրը՝ ռուսերեն) (թ. 112):

պատճառները, որոնք առաջացնում էին այդ դժգոհությունը և այն տարաձայնությունները, որոնք գոյություն ունեին Կենտրոնական կոմիտեում. «Տանում ե արդյո՞ք մեր Կենտկոմն իր ամբողջությամբ լենինյան բոյլշեվիկյան գիծ: Ի հարկե, այո: Ուրիշ տեսակ ել չէր կարող լինել, այնքան վորքան մեր ընդհանուր քաղաքական գիծը – մեր բոյլշեվիկյան լենինյան Կենտկոմի գիծն ե» (թ. 33): Եսայանի հարցադրման ելակետային փաստը, սակայն, այլ էր. «Մենք այստեղ, Հայաստանում, քաղաքականություն չենք անում, այլ կիրառում ենք կյանքում մեր կուսակցության ընդհանուր քաղաքականությունը» (թ. 33). մի դիրքորոշում, որ ճիշտ հակառակ էր Հայաստանում քաղաքականություն վարելու ազգային կոմունիստների ու անձնապես Հովհաննիսյանի դիրքորոշմանը: Հովհաննիսյանի համար, հեղափոխությունից հետո Անդրկովկասի ժողովուրդները «անկախ [էին] իրենց ներքին բաղդը տնորինելու գործում» և միասնական Խորհրդային Ֆեդերացիայի շրջանակներում «ծավալում [էին] հեղափոխական աշխատանք»՝ հանուն պրոլետարիատի համաշխարհային պայքարի:[111] Եսայանի ու ստալինյան գծի մեծամասնականների համար, սակայն, Հայաստանի ղեկավարության քաղաքական գիծը գնահատելու չափանիշը դառնում էր սեփական քաղաքականություն չկիրառելը.[112]

> Ահա այդ կիրառման մասին ե, վոր պետք ե խոսվի, թե արդյոք մենք ինչքա՞ն ճիշտ ըմբռնում ենք մեր ընդհանուր քաղաքական գիծը յեվ ինչքա՞ն ուղիղ նրան, այստեղ, կյանքում կիրառում, յեվ յերբ խնդրին այդպես ենք մոտենում, յես գտնում եմ, վոր մեր ղեկավարությունը թույլ ե, չի վայելում մեր կուսակցության ամբողջական վստահություն, նա անաշխատընդունակ ե, նա սայթաքումներ ե անում, նա պետք ե, վոր փոխվի:[113]

Ի՞նչ էր սակայն բովանդակային իմաստով նշանակում Եսայանի այս մեղադրանքը: Եսայանը կուսակցության մեջ նկատում է «հակա-բոյլշեվիկյան հակալենինյան տրամադրություններ յեվ տենդենցներ», որոնցից առաջին հերթին առանձնացնում է սպեցիֆիզմը (թ. 33): Թեև Եսայանի հաստատմամբ «Կենտկոմը սպեցիֆիկյան թեքում չունի», բայց «կա.... մեզ մոտ սպեցիֆիզմ» (թ. 34). «Այդ սպեցիֆիզմը գոյություն ունի մեր կուսակցության Անդրկովկասի բանվորական հասարակական շարժման պատմության գնահատման մեջ»: Ըստ Եսայանի անցյալը «հրամցվում» էր «սպեցիֆիկյան գունավորմամբ». «Լուրջ աշխատանք ե յեղել սպեցիֆիզմը պատմականորեն արդարացնելու, նրան ժողովրդականացնելու համար, իսկ բոյլշեվիկյան պատմությունը յեվ նրա պատմական դեմքերը ստվերի մեջ են թողնվել» (թ. 34):

Սպեցիֆիզմը, Եսայանի բնորոշմամբ, ««մարքսիզմ» պլյուս նացիոնալիզմ» դրսևորումն էր, որպիսի «գունավորում» հակահեղափոխական շարժումն ուներ Հայաստանում:[114] Այս

---

[111] Հովհաննիսյան, «Դաշնակցության իդեոլոգիայի ընթացիկ կուրսը», էջ 167:

[112] Ուշագրավ է, որ 1927-ին դաշնակցական *Դրոշակը* «այժմեայ Կօմկուսի վարիչ շրջանների» բարքերը քննելիս գրում էր. «Ամենատարրական շրջաբերականներն ու հրահանգները բոլոր կոմիսարիատներում գալիս են Մոսկվայից, թարգմանւում են չինահայերէնի և կուրօրէն տառացի կերպով գործադրւում են ամենախուլ անկիւններում անգամ»: Տե՛ս Հերա, «Եօթը պարիսպներից ներս», *Դրոշակ,* 1927, թիվ 3, էջ 93:

[113] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 7, գ. 15, թ. 33: Տեքստից հետագա մեջբերումները՝ տողամիջում: Հայկ Ազատյանը Հովհաննիսյանին ուղղված մեղադրանքների կողքին հայտարարում էր նաև, թե Հովհաննիսյանի գլխավոր քարտուղարի պաշտոնում նշանակվելուն կուսակցական մասսան ի սկզբանե դեմ է եղել և որ Հովհաննիսյանն անընդունակ էր կուսակցական այդ պաշտոնի համար (թթ. 49-50):

[114] Հատկանշական է, որ Սուրեն Շադունցն իր ելույթում քննադատելով սպեցիֆիզմի գաղափարակիր Դավիթ Անանունին նշում է. «Սպեցիֆիկ լինել 1927-ին, նշանակում է լինել դաշնակ» (ՀԱԱ, ֆ. 1, ց. 7, գ. 16, թ. 38), ապա իր խոսքի մեկ այլ հատվածում հայտարարում. «1927-ին.... ցանկացած հակաբոլշևիկյան ելույթ բացառապես ազգայնական-դաշնակցական ելույթ է» (բնագիրը՝ ռուսերեն): Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 7, գ. 16, թ. 44: Պետք է նշել, որ Հովհաննիսյանին սպեցիֆիզմի մեջ մեղադրող քննադատությունները ծայր էին առել դեռ շատ ավելի վաղ՝ 1924-ին: Դրանց առաջին հեղինակը Սուրեն Երզնկյանն էր, որը Հովհաննիսյանի՝ Հայաստանի առանձնահատկություններին տեղ տվող քաղաքական ու պամագիտական մոտեցումը որակեց իբրև

հիմնավորմամբ էր, որ Եսայանը սպեցիֆիզմի խնդիրը մերժում էր ընդունել իբրև զուտ պատմական խնդիր: Սպեցիֆիզմի խնդիրը իբրև պատմական հարց դիտարկելն ու դրան քաղաքական նշանակություն չտալը Եսայանը համարում էր «խոշոր սխալ»: Վերջինիս գնահատմամբ «լուրջ փորձեր են կատարվում պատմականորեն արդարացնելու սպեցիֆիզմը, ազգայնականությունը, խեղաթյուրվում ե մեր պատմությունը (թ. 34):[115]

Եսայանի հնչեցրած ազգայնականության ու սպեցիֆիզմի այս մեղադրանքների ուշագրավ ասպեկտը հակահեղափոխական շարժման հիմքում Եսայանին երևացող սպեցիֆիզմին ու ազգայնականությանը պատմական հիմնավորում տալու հանգամանքն է: Պատմության ու քաղաքականության այս փոխկապակցումը Եսայանի քննադատության մեջ ինքնին հուշող փաստ էր, որ այդ քննադատության հասցեատերը պիտի դառնար ոչ այլ ոք, քան Աշոտ Հովհաննիսյանը: Հովհաննիսյանն էր, որ քաղաքականությունն անանջատ էր տեսնում այն ներկայող անցյալից, այդ կերպ ինքնին պատմականացնելով ներկան ու դրանում ծավալվող քաղաքականությունը: 1920-ականների առաջին տարիներին ազգային կոմունիստների քաղաքականության ուղենիշ պատմաբանական այս մոտեցումը, սակայն, տասնամյակի երկրորդ կեսին քաղաքական նոր գնահատական էր ստանում: Հենց Հովհաննիսյանի *Յերկու բնությագիր. Ստ. Շահումյան յեվ Ալ. Ռուբենի* գրքույկն է Եսայանը վերցնում իբրև «սպեցիֆիկյան, ազգայնական» գրականության ամենավերջին օրինակ, որից, Եսայանի խոսքով, «սպեցիֆիզմի հոտ ե գալիս» (թ. 35).[116] Ըստ Եսայանի գրքում թերագնահատված էր Շահումյանը և գերագնահատված Ռուբենին:

«*թրթուջության «մարքսիզմ»*», «*պեղ-աղբյուրյան* «հեղափոխական» նվաճումներ» (ընդգծումը՝ Ե. Ս.): Տե՛ս Ե. Սուրեն, «Բայլշևիկյան պատմության մեշչանական ըմբռնման մի նմուշ», *Հայարտուն,* 1925, թիվ 1, էջ 160: Այս հոդվածն իրականում վերջինն էր մեկ տարի առաջ սկսված բանավեճում: Տե՛ս Ե. Սուրեն, «Հեղափոխական ուսանողության անցյալից (Մի «վավերագրի» առիթով)», *Մարտակոչ,* 24 հունիսի 1924 թ., ինչպես նաև Աշոտ Հովհաննիսյան, «Ռեաբիլիտացիայի մի փորձ (բաց նամակ ընկ. Սուրեն Երզնկյանին)», *Խորհրդային Հայաստան,* 17 հուլիսի 1924 թ.: Երզնկյանի մեղադրանքները սրվեցին հատկապես 1920-ականների երկրորդ կեսին՝ հաստատվող ստալինիզմի պայմաններում, երբ վերջինս Թիֆլիսի *Մարտակոչում* հրապարակեց «Յերկու տենդենց» ընդարձակ հոդվածը: Տե՛ս *Մարտակոչ,* 3, 4, 5, 6, 8, 9, 10, 11 փետրվարի 1927 թ.: Կենտկոմին ու ըստ էության Հովհաննիսյանին սպեցիֆիզմի մեջ մեղադրող հոդվածը 1927-ին քննարկման առարկա դարձավ մարտյան պլենումում: Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 7, գ. 15, թթ. 21-22, 54, 58, 101, 112: Սակայն մինչ այդ մարտի 6-ին Կենտկոմի և Կենտրոնական վերահսկիչ հանձնաժողովի նախագահությունները միացյալ նիստում որոշում էին կայացրել կտրականապես մերժել Երզնկյանի առաջ քաշած մեղադրանքը «ԿԿ-ին սպեցիֆիզմի մեջ մեղադրելու հարցում՝ այն համարելով անհեթեթ»: Նույն խնդիրը քննած Անդրերկրկոմի նախագահությունը որոշում կայացրեց թույլ տված սխալների համար Երզնկյանին հայտարարել խիստ նկատողություն և ազատել *Մարտակոչի* խմբագրակազմից: Այս մասին տե՛ս Հակոբյան, *Միակուսակցական վարչակարգի ձևավորումը,* էջ 301-303: Այն, որ Երզնկյանի հոդվածաշարի տպագրությունն ուղիղ կապված էր Կենտկոմի դեմ սկսված պայքարին, ակնհայտ էր նաև դաշնակցականների համար: Դաշնակցական *Յուսաբերի* թղթակցություններից մեկն այդ մասին գրում էր. «Այդ նոյն պայքարի քողարկած մէկ արտայայտութիւնն է եթէ կուզէք, նաեւ Սուրէն Երզնկեանի այնքան լպիրշ ու փողոցային յօդուածները «Մարտակոչում» հայ մարքսիստ Դաւիթ Անանունի վերջին աշխատութեան դէմ (նկատի ունի Անանունի *Ռուսահայերի հասարակական զարգացումը* գրքի երրորդ հատորը՝ Ի. Շ.): Անանունի գիրքը *պատրուակ* է սակայն, որովհետեւ յօդուածաշարքը ուղղուած է առաւելապէս որոշ բոլշեւիկների դէմ: Ուշադիր ընթերցողը այդտեղ կարմիր թելի պէս մինչեւ վերջը պիտի տեսնի, որ.... յօդուածը ուղղուած է ոչ միայն Դաւիթ Անանունի, Բախշի Իշխանեանի.... Ալ. Ռուբէնի, Վ. Տէրեանի դէմ, այլև Աշ. Յովհաննէսեանի, Ս. Համբարձումեանի ու Պ. Մակինցեանի դէմ» (ընդգծումը՝ բնագրի): Տե՛ս «Եօթ պարիսպներից ներս. Հայկոմկուսի բարքերից», *Յուսաբեր,* 28 ապրիլի 1927 թ.: Ի պատասխան Երզնկյանի հոդվածի՝ նույն *Մարտակոչում* Հովհաննիսյանը հրատարակեց իր ««Ձախ» պանիկյորության հայկական մի վարիանտի մասին» ընդարձակ հոդվածաշարը: Տե՛ս Աշոտ Հովհաննիսյան, ««Ձախ» պանիկյորության հայկական մի վարիանտի մասին», *Մարտակոչ,* 26, 27, 29, 30, 31 մարտի 1927 թ.: Այս մասին տե՛ս «Պայքարը Թիֆլիզի եւ Երեւանի հայ պոլշեւիկներու միջեւ», *Յուսաբեր,* 21 մայիսի 1927 թ.:

[115] Բաննահյանը սպեցիֆիզմին անդրադառնալիս նշում է. «Միանգամայն ավելորդ և անթույլատրելի եմ համարում տարբեր պատրվակներով սպեցիֆիզմի իրապես ազգայնական էությունը թաքցնելն ու կոծկելը: Ինչի՞ համար է պետք այս ամենն անել: Ըստ երևույթին, ինչ-որ մեկն ուզում է արխիվից հանել այդ թշվառ ու ողորմելի սպեցիֆիզմը և կապել այն Անդրկովկասի հեղափոխական շարժման հետ՝ դնելով նրա ոգեշնչողներին ընկեր Շահումյանի և ուրիշների հետ գրեթե նույն հարթության վրա» (բնագիրը՝ ռուսերեն): Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 7, գ. 15, թ. 107:

[116] Տե՛ս Աշոտ Հովհաննիսյան, *Յերկու բնությագիր. Ստ. Շահումյան յեվ Ալ. Ռուբենի* (Յերեվան: Պետական հրատ., 1927): Ըստ Եսայանի՝ Հովհաննիսյանը գրքույկը հրատարակել էր բացառապես նրա համար, որպեսզի հերքեր Սուրեն Երզնկյանի՝ սպեցիֆիզմի մեջ իրեն մեղադրող քննադատությունը (թ. 35):

Ընդհանրապես միայն այն, որ Շահումյանի ու Ռուբենու անունները մի գրքում էին լույս տեսել և համեմատվում էին միմյանց հետ, Եսայանի խոսքով, իր վրա «լավ տպավորություն չ[էր] թողնում». «Իմ ճաշակը գտնում ե բոլորովին անթույլատրելի Շահումյանի յեվ ինչ-վոր Ռուբենու բնութագրերը միմիանց հետ ներկայացնել մեր կուսակցությանը: Այդ յերկու անունները վոչ մի համեմատություն յեվ առնչություն իրար հետ չեն կարող ունենալ (թ. 35):

Եսայանի այս դիրքորոշումն ակնհայտ էր դարձնում քաղաքականության ստալինացման ընթացքը: Եսայանի քննադատությունն ուղղված Հովհաննիսյանին այլ բան չէր, քան քաղաքականապես սեփական անցյալը «մաքրելու», «զտելու» ստալինյան տրամաբանության գործնական կիրարկումը: Պայքարն ազգային կոմունիստների ղեկավարության դեմ պետք է սկսվեր Հովհաննիսյանի դեմ գաղափարական պայքարով այն պարզ պատճառով, որ Հովհաննիսյանը հետևողականորեն վեր էր հանում հայ հեղափոխական քաղաքական մտքի ավանդույթը: Իսկ քաղաքականություն գործադրել հաշվի առնելով տեղական քաղաքական մտքի պատմական ընթացքը, նշանակում էր միաժամանակ հաշվի նստել այն իրականության հետ, որից ծնունդ էր առել այդ միտքը: Եսայանի ելույթն իր կոպտությամբ երևան էր բերում քաղաքականության ու իրականության մեջ խզում դնելու ստալինյան հավակնությունը: Քաղաքականությունը դրա պատմական կայացման ընթացքից զրկելը նշանակում էր հաստատել իրականության մի ըմբռնում, համաձայն որի այդ իրականությունը դառնում էր քաղաքականության գործադրման տեղ և ոչ թե պատմականորեն կոնկրետ, բայց իր կայացման մեջ փոփոխվող ընթացք: Առաջինը ենթադրում էր այնպիսի խզում քաղաքականության ու իրականության միջև, որի պարագայում քաղաքականությունն ինքը դառնում է այն ուժը, որն ըստ իր օրակարգի վերափոխում է իրականությունը: Երկրորդը ենթադրում էր, որ քաղաքականությունը հաշվի է նստում իրականության կայացման՝ պատմականորեն կոնկրետ կայացման ընթացքի հետ, որին ինքը պատկանում է և որի վերափոխման հետ հարաբերության մեջ է ձևակերպվում իր օրակարգը:

Իրականության պատմական կայացման այս մոտեցումը պիտի ենթադրեր քաղաքական «խառը» ավանդույթ, այնինչ ստալինիզմի պայքարն ազգային կոմունիզմի դեմ ազգայնականության դրոշի ներքո նշում էր սեփական «խառը» անցյալից ու ավանդույթից հրաժարման ստալինիզմի օրակարգը: Այս կերպ պարզ է, թե ինչու պետք է Հովհաննիսյանի դեմ ուղղված քննադատության առանցքային կետը դառնար Շահումյանի ու Ռուբենիի անունները միմյանց կողքին դնող գրքույկը:[117] Միաժամանակ նաև ակնհայտ է, թե ինչու պետք է Հովհաննիսյանի համար սկզբունքային լիներ պլենումից երեք օր առաջ նախկինում լույս տեսած այդ երկու բնութագրերն առանձին գրքույկով վերահրատարակելը (թ. 39):[118] Ռուբենին Հովհաննիսյանի համար ինքնին հայ քաղաքական հեղափոխական մտքի բարդ հանգույցները խտացնող կերպար էր: Շուշվա դաշնակցական «Կոկոն» խմբակից անջատված ու 1903-ին Բաքվում Սոցիալ-դեմոկրատական բանվորական հայ կազմակերպությունը («սպեցիֆիկներ») հիմնած Ռուբենին հայ քաղաքական մտքի զարգացման բեկումնային մի դրվագն էր նշում: ՍԴԲՀԿ-ն մարմնավորում էր Դաշնակցությունից ծնված, բայց և Դաշնակցության գործունեության

[117] Հովհաննիսյանի ելույթին հաջորդած քննարկման ժամանակ, ի դեպ, Հովհաննիսյանի դեմ հնչող մեղադրանքների կենտրոնում էր հայտնվել նաև Ռուբենիի արձանի տեղադրումը Երևանում:
[118] Եսայանի ելույթի մի զգալի մասը նվիրված էր Հովհաննիսյանի այս գրքույկի քննադատությանը (թթ. 35-39): Գրքույկում տեղ գտած հոդվածներից Ստեփան Շահումյանին նվիրվածը նախկինում տպագրվել էր Մոսկվայում լույս տեսնող *Կարմիր դրոշակում* (2 մայիսի 1919 թ.), ապա արտատպվել Աստրախանի *Կարմիր բանուոր* թերթում: Ռուբենիին նվիրված հոդվածը լույս էր տեսել *Խորհրդային Հայաստանում* (9 ապրիլի 1922 թ.), արտատպվել՝ Բաքվի *Կոմմունիստի* 1923-ի թիվ 43-ում:

այն ժամանակվա որոշ սահմաններ մատնացույց անող մի մարտահրավեր: Այն նշում էր ազգային խնդիրները դասակարգային պատկանելիության հետ առնչակցելու հայ քաղաքական մտքի նոր հանգրվանը: Այսպիսով, Ռուբենիի կերպարն ինքնին մարմնավորում էր հայկական մարքսիզմի ուշագրավ այդ ավանդույթը:[119] Հովհաննիսյանի պարագայում այս ավանդույթը նաև իր ավանդույթն էր՝ անցումը հայ քաղաքական մտքի տարբեր հանգրվաններով՝ Դաշնակցությունից դեպի սպեցիֆիզմ ու Կոմունիստական կուսակցություն: Այս կապերն էին, որ անթաքույց էին Հովհաննիսյանի պատմաքաղաքական մոտեցման մեջ և նույն այդ կապերն էին, որ Եսայանը 1927-ի դրությամբ հայտարարում էր մեծամասնական քաղաքական գծի համար անթույլատրելի.

> Ընկերներ, վո՞ւրտեղ է այստեղ բոյլշեվիզմը, ի՞նչու յե այսպես հերոսացվում «Կոկոն»-ը, ու՞մն է հարկավոր այս ռոմանտիկան: Յերբ ենք մենք գնահատել դաշնակցական-շովինիստական խմբակներին, իբրեվ «սրբազան ընտանիքներ», իսկ նրանց ճանապարհը «ազգային հեղափոխական արյունոտ ճանապարհ»....:[120] Յեթե մենք վերցնենք ընկ. Աշոտի ամբողջ գրական ժառանգությունը, մենք շատ հեռուները կը գնանք, սպեցիֆիզմից ել դենը (թ. 38):

Ավելի հեռուն, անշուշտ, Հովհաննիսյանի դաշնակցական անցյալն էր. ազգային քաղաքական մտքի այն ասպարեզը, «ազգային հեղափոխական արյունոտ» այն ճանապարհը, որ մեկնակետ էր եղել նաև իր՝ Հովհաննիսյանի համար ու որի հետ ներակա կապից վերջինս չէր հրաժարվում: Դա էր փաստում նաև ինքը՝ Եսայանը. «Ընկ. Աշոտը սիրում է միշտ կրկնել, վոր իր բոլոր գրածները հետեվողական մարքսիստական, բոյլշեվիկական, գիտական մտքի արդյունքներ են, նա շատ հաճախ հայտնել է, վոր չի հրաժարվում իր վոչ մի գրածիցը» (թ. 39): Հովհաննիսյանն իր գրածներից չէր հրաժարվում, սակայն իր գրածներին տրվող գնահատականն էր, որ այլևս փոխվել էր. «Ընկ. Աշոտի գրական ժառանգությունը հետեվողական մարքսիստական, մաքուր բոլշեվիկյան չե յեվ նրա դեմ մեր կուսակցությունը պետք է համապատասխան պայքար մղի» (թ. 39):[121]

«Մաքուր բոլշևիկյան» ժառանգություն ունենալու ստալինյան օրակարգում հիրավի քաղաքականապես վտանգավոր պետք է գնահատվեր տեղական քաղաքական մտքի ավանդույթի հետ մեծամասնական քաղաքականությունն անքակտելիորեն կապելու Հովհաննիսյանի հետևողականությունը:[122] Հեղափոխական քաղաքականությունն

---

[119] Հովհաննիսյանի քաղաքական հայացքների ձևավորման հարցում Ռուբենիի ունեցած վճռական դերակատարման մասին տե՛ս Ազատյան, «Ոչ եղիցի չեղեալ, զոր ինչ եղևն», էջ 576-578: Ռուբենիի՝ «Ընկեր Ծատուրի (Ալ. Ռուբենիի) յիշատակին» էր նվիրված Հովհաննիսյանի *Հայ-ռուս օրիենտացիայի ծագման խնդիրը (պատմական-քննադատական ուսումնասիրութիւն)* (Էջմիածին: Տպ. գիտական ինստիտուտի, 1927): Ի դեպ, Ռուբենիին իր ուսուցիչն էր համարում Ալեքսանդր Մյասնիկյանը: Տե՛ս Հակոբյան, «Ալ. Մյասնիկյանի հասարակական-քաղաքական գործունեության ազգային-«սպեցիֆիկյան» շրջանը (1901-1917)», էջ 173: Տե՛ս նաև Ազատյան, «Ոչ եղիցի չեղեալ, զոր ինչ եղևն», էջ 593: ՍԴԲՀԿ-ի շարքերում Ռուբենիի ներգրավվածության մասին տե՛ս, օրինակ, Վահագն Հակոբյան, *Սոցիալ-դեմոկրատական բանվորական հայ կազմակերպության ձևավորումը և առաջին քայլերը* (Երևան: Հեղ. հրատ., 2015), էջ 28-66:

[120] Եսայանի մեջբերումը Հովհաննիսյանի գրքում տե՛ս Հովհաննիսյան, *Յերկու բնույթագիր,* էջ 20:

[121] Հովհաննիսյանի «գրական ժառանգությանը» Եսայանն անդրադարձավ նաև հրապարակայնորեն՝ այս անգամ թիրախավորելով Հովհաննիսյանի՝ Էջմիածնի *Արարատ* հանդեսի ու Էջմիածնի գիտական ինստիտուտի հետ ունեցած կապերը. «Նա ճգնում է փաստաբանել, վոր նա կատարել է «մարքսիստական», «բալշևիկյան» աշխատանք «Արարատում»: Տե՛ս Ա. Յեսայան, «Հայ յեկեղեցին, հայ սպեցիֆիկները յեվ Եջմիածնի փաստաբանը մեր կուսակցության մեջ», *Խորհրդային Հայաստան,* 3 հուլիսի 1928 թ.:

[122] Պատահական չէ, որ Արամայիս Երզնկյանն իր հերթին անդրադառնալով Հովհաննիսյանի *Յերկու բնույթագիր* գրքույկին հայտարարում է. «Գրքում.... նա կրկին մի շարք մեղադրանքներ է ուղղում ՌՍԴԲԿ-ի Անդրկովկասյան կազմակերպության հասցեին, թե նրանք վարակված են եղել ազգայնականությամբ և էկոնոմիզմով, մեղադրանքներ, որոնք ժամանակին ելնում էին սպեցիֆիկներից և դաշնակներից» (բնագիրը՝ ռուսերեն): Հարցը ոչ թե հնչած քննադատությունը (սպեցիֆիկյան կամ դաշնակցական) բովանդակային

իրականության հետ հարաբերելու, դրա կոնկրետ սոցիալ-հասարակական կայացման պատմությունը հաշվի առնելու, դրանից ծնված քաղաքական մտքի ավանդույթի ռեալությունը ներկայում ըմբռնելու Հովհաննիսյանի ու ազգային կոմունիստների մոտեցումը քաղաքականապես վտանգավոր էր այլևս: Քաղաքական ժառանգությունը պետք է «մաքրվեր», իսկ Հովհաննիսյանի ու ազգային կոմունիստների համար ազգային հեղափոխական կամ տեղական մարքսիստական ավանդույթը զուտ գիտական ուսումնասիրման նյութ չէր, այլ այն կենդանի ավանդույթը, որոնց կրողն էին իրենք անձնապես: Հետևաբար իրենք էին նաև, որ անձնապես պետք է վճարեին «մաքուր բոլշևիկյան» ժառանգություն ստեղծելու քաղաքական օրակարգի կենսագործման համար: Վճարվող գինը պետք է դառնար Հովհաննիսյանին ու ազգային կոմունիստներին ազգայնականության, նացիոնալիզմի մեջ մեղադրելը: Միայն այս անկյան տակ դիտված է հստակ դառնում, թե ինչպես 1920-ականների առաջին կեսին Դաշնակցության դեմ պայքարում կուսակցությունը մանրբուրժուական գնահատելու Հովհաննիսյանի քաղաքական ջանքը քաղաքական դատավճիռ պետք է դառնար հենց իր համար ու հնչեր իբրև ազգայնական թեքման մեջ մեղադրանքների անհերքելի ապացույց: Համագումարում Հովհաննիսյանի ելույթին հաջորդած քննարկման ընթացքում կարմիր թելի պես ձգվում է Դաշնակցության ու մասնավորապես Դաշնակցության սոցիալական ծագման շուրջ առաջ եկած կռիվը: Նույն Եսայանն իր ելույթում հատուկ նշում էր, որ Դաշնակցության «սոցյալական եությունը» բնորոշելու հարցը «լուրջ խնդիր» է և որ այն «զուտ «պատմական»» հարց չէ: Եսայանի գնահատմամբ կուսակցության ներսում այս խնդրի շուրջ «մտքերի կատարյալ խառնաշփոթ ե տիրում». «Մեր ղեկավարությունից մի մասն ասում ե, վոր դաշնակցությունը – հայ բուրժուազիայի մարտական կուսակցությունն ե, իսկ մյուսներն աշխատում են ապացուցել, վոր նա մանր-բուրժուական, ազգային, հեղափոխական կուսակցություն ե եղել» (թ. 39):

Ծագած այս տարաձայնությունն իսկ ստալինյան քաղաքականության հաստատման վճռական նշանն էր: 1920-ականներին պատմագիտական հիմնավորմամբ Դաշնակցությունը մանրբուրժուական կուսակցություն գնահատելը ոչ միայն Հովհաննիսյանի օրակարգն էր, այլև հայաստանյան ներքին քաղաքական հարցերում խորհրդահայ ղեկավարության ուղենիշ դիրքորոշումը: Սակայն Եսայանի ելույթից պարզ է դառնում, որ Դաշնակցության մանրբուրժուականության գնահատականը ոչ միայն վիճարկվել էր, այլև այդ վիճարկումն արդեն իսկ Դաշնակցության գնահատման թեման տեղակայել էր ներկուսակցական պայքարի կենտրոնում.

> Մենք ճանաչել ենք «հայ հեղափոխական դաշնակցությանը», վորպես հայ բուրժուազիայի կուսակցություն յեվ բոլոր փորձերը մանր-բուրժուականացնելու, հեղափոխականացնելու նրան, հետ պետք ե վանվեն մեր կողմից: Այս խնդրի լուծումն ունի վորոշ այժմեական նշանակություն՝ դաշնակցության հանդեպ մեր տակտիկան վորոշելու խնդրում (թ. 39):[123]

Այս կերպ, Դաշնակցությանը տված Հովհաննիսյանի գնահատականի վիճարկմամբ միաժամանակ վիճարկվում էր Դաշնակցության դեմ որդեգրված «տակտիկան»: Իսկ վիճարկել Դաշնակցության մանրբուրժուականության թեզը, նշանակում էր վիճարկել նաև

իմաստով քննարկման առարկա դարձնելն էր, այլ ի սկզբանե սպեցիֆիզմից ու դաշնակցականությունից քաղաքականապես օտարվելու օրակարգը: Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 7, գ. 16, թ. 15:

[123] Արամայիս Երզնկյանը Հովհաննիսյանի՝ Դաշնակցությանը տված գնահատականի վերաբերյալ իր ելույթում շեշտում է. «Ընկեր Աշոտի տեսակետն այս հարցում կտրուկ տարբերվում է ընկեր Շահումյանի և ՌՍԴԲԿ-ի հին անդամների տեսակետից, նրա տեսակետը համընկնում է արդեն գոյություն չունեցող «սպեցիֆիկների» տեսակետի հետ» (բնագիրը՝ ռուսերեն): Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 7, գ. 16, թ. 15:

հայաստանյան իրականության սոցիալական նկարագրին տված Հովհաննիսյանի այն գնահատականը, որը որոշել էր Դաշնակցության հանդեպ որդեգրած ազգային կոմունիստների դիրքորոշումը:

Դաշնակցության սոցիալական ծագմանը տրվող գնահատականի վճռական նշանակությունը հասկանում էին այն վիճարկողներն ու քննադատողները: Պլենումում հանդես եկող Հայկ Ազատյանը, որի՝ Հովհաննիսյանի դեմ ուղղված խոսքն աչքի էր ընկնում առանձնակի սրությամբ, հայտարարում էր. «Մենք մինչև հիմա չունենք ՀԿԿ պատմություն: Դուք բոլորդ կհամաձայնեք ինձ հետ, որ այդ պատմությունը չի կարող կազմվել այնքան ժամանակ, մինչև մեզ մոտ չմշակվի որոշակի տեսակետ սպեցիֆիզմի և դաշնակցության սոցիալական ծագման վերաբերյալ» (բնագիրը՝ ռուսերեն) (թ. 54):

Ակնհայտ է, ուրեմն, որ Դաշնակցության սոցիալական ծագման շուրջ կուսակցության ներսում ծագած բանավեճի սկիզբը միաժամանակ պիտի վճռեր նաև հարցը, թե ինչպես պետք է գրվեր հայաստանյան քաղաքական մտքի պատմությունը: Սակայն ե՞րբ ու ո՞ւմ միջև էր ծագել պատմությունը վերագնահատելուն հավակնող այս բանավեճը, որի առանցքում Դաշնակցության սոցիալական ծագումը որոշելու խնդիրն էր: Կուսակցության նույն՝ 4-րդ պլենումում Ասքանազ Մռավյանի խոսքը կուսակցության ներսում ծագած տարաձայնությունների մասին պարզաբանում էր տալիս: Ըստ Մռավյանի «որոշ, այսպես ասած, ներ-հայկական հարցերում մեզ մոտ առկա է թերասացություն, թափթփվածություն, անկարգապահություն»: Այդ «ներ-հայկական» հարցերից էր փաստորեն նաև Դաշնակցության սոցիալական ծագումը գնահատելու խնդիրը: Ըստ Մռավյանի՝ Կենտկոմի նախագահության ներսում հարցի շուրջ երկու գիծ էր ձևավորվել՝ Հովհաննիսյանինը և Կարինյանինը: Վերջիններս նախագահությանն էին ներկայացրել խնդրին անդրադարձող իրենց թեզիսները: Բայց, Մռավյանի խոսքով, նախագահությունն իր առաջարկով դրանց քննարկումը հանել էր օրակարգից. «Ես այդ առաջարկն արեցի, քանի որ այդ հարցի շուրջ վեճը խմբավորումների առիթ էր տալիս» (բնագիրը՝ ռուսերեն):[124]

Չնայած Մռավյանի քայլերին՝ 1927-ի 4-րդ պլենումի ժամանակ ակնհայտորեն այդ խմբավորումներն արդեն կային: Պլենումում Հովհաննիսյանի դեմ հանդես եկողների համար Դաշնակցության սոցիալական ծագման շուրջ բանավեճի հրապարակ բերելը քաղաքական առաջնահերթ խնդիր էր: Կարինյանն ինքը պլենումում այս առիթով հայտարարեց, թե Դաշնակցության սոցիալական ծագման շուրջ իր և Հովհաննիսյանի միջև ծագած վեճը մի «շատ պարզ վեճ» էր. «Ես անձամբ լավ հարաբերությունների մեջ եմ ընկեր Աշոտի հետ: Մեր վեճը միայն պատմա-գրական բնույթ էր կրում: Սակայն, նկատելով, որ վեճի շուրջ կարող են որոշակի խաղեր գնալ, ութ ամիս առաջ մենք դադարեցրինք անգամ կարծիքների փոխանակումը» (բնագիրը՝ ռուսերեն):[125] Արդյո՞ք Դաշնակցության շուրջ ծագած վեճն իսկապես պարզ մի վեճ էր և արդյո՞ք Կարինյանն իսկապես հակված էր մտածելու, թե եղածը միայն պատմա-գրական վեճի բնույթ ուներ:

Ուշագրավ է, որ այս հարցի պատասխանը տալիս էին դաշնակցականները: Դաշնակցական մամուլը պարբերաբար անդրադառնում էր Հայաստանի Կոմկուսի ներսում սրված իրադրությանը: 1927-ի սկզբին Թիֆլիսից *Դրոշակին* ուղարկված թղթակցություններից մեկը գրում էր «Թիֆլիսում բոյն դրած հայ կոմունիստների քլիքի»

[124] ՀԱԱ, ֆ. 1, ց. 7, գ. 16, թ. 58:
[125] ՀԱԱ, ֆ. 1, ց. 7, գ. 15, թթ. 58-59:

մասին:[126] Սարգիս Կասյանը, Աշոտ Խումարյանը, Սարգիս Խանոյանը, Հմայակ Նազարեթյանը և Սուրեն Երզնկյանն էին, *Դրօշակի* հաղորդմամբ, վիժեցրել Անդրկովկասի երկրկոմի քարտուղարի պաշտոնում Սարգիս Լուկաշինի նշանակումը և փոխարենը քարտուղարի պաշտոնում հաստատել Խանոյանին: Նույն թղթակցությունը հաստատակամորեն պնդում էր, որ «Թիֆլիսի քլիքը իր ճյուղն ունի և Երևանում». «Գաղտիք չէ, որ այս խմբակի հետ ձեռք ձեռքի գործում է և Արտ. Կարինյանը»:[127] Դաշնակցականների տեսանկյունից էական չէր, թե Կոմունիստական կուսակցության ներսում ծավալված պայքարի արդյունքում «ո՞վ էր այս կամ այն աթոռին նստողը: Վերջին հաշւով, նրանք բոլորն էլ միևնոյն արժէքը ունեն – զէրօ»:[128] Դաշնակցականների համար տարբերությունը «շատ-շատ մանրամասնութիւնների մէջ» էր, այնինչ Հայաստանի Կոմունիստական կուսակցությունն այդ պայքարում առերեսում էր ստալինյան քաղաքականությունների հաստատումը:

Պատահական չէ, որ նույն ժամանակ Կոմունիստական կուսակցության պլենումի ընթացքում ծավալված վեճում նույն Կարինյանի խուսափողական պատասխաններն առիթ ծառայեցին Հովհաննիսյանի դեմ դուրս եկած կուսակցականների համար: Բացելով վեճի հիմքում ակնհայտորեն երևացող պատմա-քաղաքական կողմը՝ Հովհաննես Բաննահյանը բարձրաձայնում էր ըստ էության արդեն մեծամասնության կարծիքը.

> Սխալվում է ընկեր Կարինյանը, որը հայտարարում է, թե դաշնակցության բուրժուական և մանրբուրժուական կուսակցություն լինելու մասին այս բոլոր խոսակցությունները զուտ պատմա-գրական վեճ է իր և Աշոտ Հովհաննիսյանի միջև, և որ դա իրենց անձնական գործն է, թե ինչ եզրակացության նրանք կգան: Ընկեր Կարինյանը մեզ նույնիսկ խորհուրդ տվեց չանհանգստանալ այս առիթով, այլ հանգիստ նստել ու սպասել վեճի արդյունքներին (բնագիրը՝ ռուսերեն):[129]

Թվում է, այս պարագայում դժվար է կուսակցական մի ամբողջ թևի՝ Կարինյանի հետ չհամաձայնելու փաստը համարել չարդարացված: Դաշնակցության սոցիալական ծագման շուրջ բանավեճը 1926-ին արդեն քննարկվում էր կուսակցության ամենաբարձր մակարդակում և այդ բանավեճը, անկախ այն առկախելու Մռավյանի փորձերից, պետք է գտներ իր հանգուցալուծումը: Ազգային կոմունիստների ու ստալինիստների քաղաքական կռվում Դաշնակցության սոցիալական ծագման հարցն էր ի վերջո, որ դրված էր սեղանին ու պետք է վճռեր հայաստանյան քաղաքականության բնույթն առհասարակ:

---

[126] Հերա, «Եօթը պարիսպներից ներս», էջ 94: Դաշնակցականների հաճախ օգտագործած «կլիկ» բնորոշումը նշանակում է հանցավոր խումբ, ոհմակ:
[127] Հերա, «Եօթը պարիսպներից ներս», էջ 94: Այս մասին տե՛ս նաև «Եօթ պարիսպներից ներս. Հայկոմկուսի բարքերից»: Ըստ թղթակցությունների Երևանում նույն խմբակի թիրախում էին հատկապես Սաքո Համբարձումյանն ու Աշոտ Հովհաննիսյանը: Կոմկուսի ներսում ծավալված պայքարին դաշնակցական մամուլի անդրադարձներից տե՛ս նաև «Հայ Կոմկուսի պառակտումը», *Յուսաբեր,* 20 սեպտեմբերի 1927 թ.; «Հայ ժողովրդի զինաթափութիւնը եւ զանգուածային ձերբակալութիւնները երկրում», *Յուսաբեր,* 6 հոկտեմբերի 1927 թ.:
[128] Հերա, «Եօթը պարիսպներից ներս», էջ 94:
[129] ՀԱԱ, ֆ. 1, g. 7, գ. 15, թ. 109: Այն, որ քննարկվող հարցը ոչ թե պատմա-գրական, այլ քաղաքական խնդիր էր, հաստատում էին նաև ելույթ ունեցողներից ոմանք, ինչպես Շավարշ Ամիրխանյանը, Սեդրակ Սարգսյանը, Արամայիս Երզնկյանը: ՀԱԱ, ֆ. 1, g. 7, գ. 15, թթ. 21, 117; ֆ. 1, g. 7, գ. 16, թթ. 14-15:

«Ո՞վ էր մեր իրականության մեջ ներկայացնում մանր բուրժուազիայի շահերը»

Կենտրոնական կոմիտեի նախագահությունը դեռ 1926-ի օգոստոսին էր որոշում ընդունել, որ Հովհաննիսյանը և Կարինյանը երկշաբաթյա ժամկետում պետք է ներկայացնեին իրենց «գրավոր թեզիսները «Դաշնակցության» և այդ կուսակցության դեմ հետագա պայքարի տակտիկայի մասին»:[130] Ազգային արխիվում պահվող մի թղթապանակում, որ թվագրված է 1926-ով, պահվում է ռուսերեն մի փաստաթուղթ «Դաշնակցություն կուսակցության մասին թեզիսներ» վերնագրով:[131] Անստորագիր այդ փաստաթղթի բովանդակությունը, սակայն, կասկած չի թողնում, որ այն Հովհաննիսյանի ներկայացրած թեզիսներն են: Դրանք մի զգալի մասով կրկնությունն են 1927-ին *Նորք* հանդեսում լույս տեսած Հովհաննիսյանի «Դաշնակցության սոցիալական ծագումը» հոդվածի:[132]

Արդեն 1920-ականների կեսերին փաստորեն Դաշնակցության սոցիալական ծագման շուրջ կուսակցության ներսում առկա էին ակնհայտ տարաձայնություններ: Այս պայմաններում, սակայն, Հովհաննիսյանն ակնհայտորեն չէր նահանջում 1920-ականների առաջին կեսին Դաշնակցության մանրբուրժուականությունը պաշտպանող իր դիրքորոշումից, որը 1926-ին Կենտկոմի նախագահությանը ներկայացրած թեզիսների առաջին տողերում ամրագրում էր հատուկ ընդգծմամբ.

> Մարտավարության մասին մեր դատողություններում մենք սովորաբար ելնում էինք այդ կուսակցության սահմանումից իբրև *հայ մանր բուրժուազիայի կուսակցություն՝ կողմնորոշված դեպի խոշոր բուրժուազիան և իմպերիալիստական պետությունների այս կամ այն խումբը:* Այս տեսակետն այն

---

[130] ՀԱԱ, ֆ. 1, ց. 6, գ. 6, թ. 69 (բնագիրը՝ ռուսերեն): Նախագահության մեկ այլ նիստում որոշվել է թեզիսների ներկայացումը հետաձգել ևս մեկ շաբաթով, տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 6, գ. 6, թ. 76:

[131] ՀԱԱ, ֆ. 1021, ց. 2, գ. 1410: Կարինյանի թեզիսներն արխիվում գտնել չհաջողվեց: Սակայն Կարինյանի ֆոնդում Դաշնակցությանը նվիրված բազմաթիվ անտիպ հոդվածներից մեկը կրում է «Դաշնակցության սոցիալական եությունը» վերնագիրը, որն ակնհայտորեն արձագանքում է Հովհաննիսյանի հոդվածի վերնագրին: Այն այլ բան չէ, քան Հովհաննիսյանի դեմ գրված հոդված, որտեղ Կարինյանը քննադատում է Դաշնակցության մանրբուրժուականության տեսությունն ու Հովհաննիսյանին մեղադրում սպեցիֆիզմի մեջ: Տե՛ս ՀԱԱ, ֆ. 862, ց. 1, գ. 117, թթ. 28-50: Հոդվածի վերնամասում մատիտով արված գրությունն ասում է՝ «գրված 1928-ին «Նորք»-ի համար. Չի տեղադրվել»: Տե՛ս ՀԱԱ, ֆ. 862, ց. 1, գ. 117, թ. 28: Այն, որ 1920-ականներին Դաշնակցությունը եղել է նաև Կարինյանի ուշադրության կենտրոնում, վկայում են հրատարակված ու անտիպ հոդվածներն ու հրապարակումները: Տե՛ս, օրինակ, ««Դաշնակցություն կուսակցությունը» ուսումնասիրությունը» (1924 թ.), ՀԱԱ, ֆ. 862, ց. 1, գ. 115; «Դաշնակցություն» (զեկուցում)» (1925 թ.), ՀԱԱ, ֆ. 862, ց. 1, գ. 441; Ա. Կարինյան, *Դաշնակցությունը փաստերի դեմ* (Թիֆլիս: Զակկնիգա, 1926); Ա. Կարինյան, *Դաշնակցությունը յեվ իր զինակիցները* (Յերեվան: Պետհրատ, 1932):

[132] Հոդվածի ծանոթագրությունում կարդում ենք, որ այն Հովհաննիսյանի «Դաշնակցության սոցիալական բնույթը» վերնագրված ձեռագիր աշխատության մի գլուխն է: Բացի ներածական ու եզրափակիչ մասերից, աշխատությունն ամփոփում է իր մեջ նաև «Դաշնակցության սոցիալական ծագմանը, եվոլյուցիային և վերասերմանը նվիրված առանձին գլուխներ»: Տե՛ս Հովհաննիսյան, «Դաշնակցության սոցիալական ծագումը», էջ 149: Ո՛չ Ազգային արխիվում, ո՛չ Մատենադարանի Հովհաննիսյանի ֆոնդում մեզ դեռ չի հաջողվել գտնել այդ աշխատությունը: Որքան էլ հայ պատմաբանության մեջ ներկուսակցական պայքարի համատեքստում նշվում է Հովհաննիսյանի՝ Դաշնակցությունը մանրբուրժուական կուսակցություն գնահատելու, նաև այդ առումով առանցքային նշանակություն ունեցած «Դաշնակցության սոցիալական ծագումը» հոդվածի մասին, այնուամենայնիվ դրա ո՛չ քաղաքական, ո՛չ պատմաբանական նշանակությունը պատշաճ ուշադրության չի արժանանում: Օրինակ՝ Արարատ Հակոբյանը գրում է, որ Հովհաննիսյանը հենվելով «ականավոր բոլշևիկ-լենինյաններ Ս. Սպանդարյանի, Ստ. Շահումյանի և մյուսների ասույթների ու դատողությունների վրա, Դաշնակցությանը համարում էր «*կովկասահայ մանր բուրժուազիայի*» (ընդգծումը մերն է – Ա. Հ.) և դրա հետ մեկտեղ «բուրժուազիայի սոցիալական ծնունդ ու գաղափարական հենարան»»: Ապա Հակոբյանը եզրահանգում է, որ «եթե «կովկասահայ բուրժուազիայի սոցիալական ծնունդ» ձևակերպումը տեղավորվում էր մարքս-լենինյան ուսմունքի ու մեթոդաբանության մեջ, ապա Դաշնակցությանը «մանրբուրժուական, գյուղացիական ինտելիգենտական սոցիալական ծագում» վերագրելը որակվեց մարքսիզմին անհարազատ գաղափար՝ դրանից բխող մեղադրանքներով ու անցանկալի հետևանքներով»: Տե՛ս Հակոբյան, *Միակուսակցական վարչակարգի ձևավորումը,* էջ 300: Տե՛ս նաև Սարուխանյան, *Ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյանի պատմագիտական ժառանգությունը,* էջ 61-74:

> տեսակետն է, որը գերիշխում էր կուսակցական մամուլի էջերում: Այս նույն տեսակետը մինչ այժմ ընկած է եղել Դաշնակցության նկատմամբ մեր գործնական քաղաքականության հիմքում (ընդգծումը՝ Ա. Հ.):[133]

Հովհաննիսյանի համար միաժամանակ հստակ էր, որ «մի շարք» ընկերների կողմից այս տեսակետի վիճարկումը նշանակում էր «ուղղակիորեն կամ անուղղակիորեն մեր առաջ դնել կուսակցության ղեկավար, մարտավարական գիծը վերանայելու հարցը» (թ. 1): Ըստ այդ ընկերների գնահատման՝ Դաշնակցությունը կապիտալիստական, ավելի կոնկրետ՝ արդյունաբերական-կապիտալիստական բուրժուազիայի կազմակերպությունն էր:[134] Հովհաննիսյանը պարզաբանում էր, որ ըստ այդմ Դաշնակցությունը համարվում էր համաշխարհային իմպերիալիզմի զավակը (детище)՝ նկատի ունենալով ոչ թե կուսակցության քաղաքականության բուրժուա-իմպերիալիստական կողմնորոշումը, այլ կուսակցության գաղափարական և կազմակերպչական կապը կապիտալիզմի և իմպերիալիզմի ողջ համակարգի հետ.

> Այս տեսանկյունից Դաշնակցություն կուսակցությունը հանդիսանում է իմպերիալիստական քաղաքականության *անմիջական վարողը (прямой проводник)* Արևելքում. իր ստեղծման պահից մինչ օրս այն գործում է Եվրոպայի այս կամ այն իմպերիալիստական պետության *անմիջական ցուցումով՝ քաղաքական սադրանքի համակարգ իրականացնելով Տաճկահայաստանում և Անդրկովկասում* (ընդգծումը՝ Ա. Հ.) (թթ. 1-2):[135]

Հովհաննիսյանի համար նման դիրքորոշման քաղաքական, հռետորաբանական ասպեկտը պարզ էր. պայքարի ընթացքում, ըստ Հովհաննիսյանի, քաղաքական ագիտացիայի հաջողության նպատակով կարիք է լինում հակառակորդին տալ սուր բնորոշումներ: Այդ տեսակետից նման դիրքորոշումը կարող էր ունենալ մեծ առավելություն, քանի որ «սկզբում հարցի պարզեցումը մեզ թվացյալ հնարավորություն է տալիս հեշտությամբ «ջարդել» թշնամուն» (թ. 3): Բայց Հովհաննիսյանի ըմբռնմամբ մարքսիզմը չէր կարող բավարարվել հարցի նման պարզեցմամբ: Ավելին, Հովհաննիսյանի համար նման մոտեցումը սխալ էր, ելնելով հանգամանքից, որ կատարված եզրահանգման վրա կառուցվում էր Կոմունիստական կուսակցության քաղաքականությունը, մշակվում էր Դաշնակցության դեմ պայքարի գիծը (թ. 3): Հովհաննիսյանն այս դեպքում իրական վտանգներ էր տեսնում առաջ քաշված այս տեսության մեջ. «Տեսականորեն խեղաթյուրելով իրականության պատկերը, [այն] ներառում է նաև մեր գործնական պայքարի գիծն ամբողջությամբ խեղաթյուրելու վտանգը» (թ. 3): Հովհաննիսյանը նշում էր այս տեսակետի «հիմնական սխալը».

---

[133] ՀԱԱ, ֆ. 1021, ց. 2, գ. 1410, թ. 1: Տեքստից հետագա մեջբերումները՝ տողամիջում:

[134] Կարինյանը Դաշնակցությանը գնահատական տալիս մասնավորապես նշում էր. «Կարեվորը այն է, վոր դաշնակցականները վոչ միայն «ընդունել» են կապիտալիզմը, այլև ամեն կերպ աշխատել են հիմնավորել կովկասյան կապիտալիզմի գլխավոր կրողի – հայ բուրժուազիայի հաղթական արշավն ու դերը: Կարևորը այն է, վոր նրանք հիմնական այդ բազայի ուժեղացման հետ են կապել «հայ ժողովրդի տնտեսական ու կուլտուրական վերածնությունը»: Հիմնական այդ յելակետից են նրանք ուղեվորվել միշտ: Յեվ միևնույն այդ յելակետի վրա յել կանգնած են այժմ»: Տե՛ս ՀԱԱ, ֆ. 862, ց. 1, գ. 117, թ. 29:

[135] Հովհաննիսյանն ընդարձակ մեջբերում է կատարում Հայկ Ազատյանից՝ իբրև այս տեսակետի պաշտպան: Ազատյանը թեզիսների ներկայացման նույն շրջանում *Խորհրդային Հայաստան* թերթում հրապարակեց իր «Դաշնակցությունը գաղափարական բյուրեղացման ճանապարհի վրա» հոդվածը: Հոդվածի առաջին մասը կրում էր «Դաշնակցության սոցիալական արմատները» ենթավերնագիրը: Տե՛ս Հ. Ազատյան, «Դաշնակցությունը գաղափարական բյուրեղացման ճանապարհի վրա», *Խորհրդային Հայաստան,* 3, 18 հունիսի 1926 թ.:

> Հայերի վերջին տասնամյակների հասարակական զարգացման պատմությունից, ըստ այս կոնցեպցիայի, որպես սոցիալ-քաղաքական գործոն ամբողջությամբ դուրս է մնում մանր բուրժուազիան և առաջին հերթին գյուղացիությունը, որն այս կամ այն ձևով հանդես է բերել իր քաղաքական դեմքը: Ո՞վ էր մեր իրականության մեջ ներկայացնում մանր բուրժուազիայի, մասնավորապես գյուղացիության շահերը, ո՞վ էր մեզ մոտ ղեկավարում մանր բուրժուազիան, մասնավորապես գյուղացիությունը, ո՞վ և ինչպե՞ս էր արտահայտում մեզ մոտ այդ սոցիալական կատեգորիայի շահերի բախումը խոշոր բուրժուազիայի շահերի հետ մի կողմից, և պրոլետարիատի շահերի հետ՝ մյուս կողմից: Այս կոնցեպցիայում հիմնարար այս հարցի ոչ մի պատասխան չեք գտնի (թթ. 3-4):

Հովհաննիսյանի այս հարցադրումները միաժամանակ պարզ կերպով ցույց էին տալիս առաջ քաշված այդ դիրքորոշման քաղաքական հետևանքները. մանր բուրժուազիայի, մասնավորապես գյուղացիության դերի թերագնահատումը սպառնում էր, Հովհաննիսյանի կարծիքով, կուսակցական գծի քաղաքական ապակողմնորոշմամբ, պարզ այն պատճառով, որ նույն այդ կուսակցությունն իր գործունեությունը ծավալում էր մանրբուրժուական միջավայրում: Մյուս կողմից՝ այդ թերագնահատումն աղճատում էր միաժամանակ պայքարի այն գիծը, որի նպատակը գյուղացիությանը հետ նվաճելն էր Դաշնակցությունից, որը տասնյակ տարիների ընթացքում քաղաքական ղեկավարման մենաշնորհ էր հաստատել գյուղացիության հանդեպ: Սրանից բխող վտանգն էր նաև, ըստ Հովհաննիսյանի, Դաշնակցության թերագնահատումը, կուսակցություն, որի հետևից տասնյակ տարիներ գնացել էին հայ աշխատավոր զանգվածների լայն շերտեր և որը, Հովհաննիսյանի գնահատմամբ, չէր հրաժարվել դեռևս մանրբուրժուական լայն շերտերի վրա իր ազդեցությունը վերականգնելու համար պայքարից (թ. 4):

Ստալինյան հավակնությունն էր, Դաշնակցության բուրժուականության տեսությունը պաշտպանելով, խեղաթյուրել հայաստանյան իրականությունը: Այդ տեսությունը պետք է հաստատվեր ի հաշիվ սեփական անցյալից հրաժարման ու հենց Կոմունիստական կուսակցության պատմության խեղաթյուրման: Հովհաննիսյանի՝ Դաշնակցության մանրբուրժուականությունը պաշտպանելը նշանակում էր պաշտպանել Կոմունիստական կուսակցության պատմությունը: Իսկ պաշտպանել պատմությունը, նշանակում էր ընդունել այն իրականությունը, որտեղ ծնվել էր Դաշնակցությունը և որի պայմաններում գործում էր Կոմունիստական կուսակցությունը: Իրական կյանքից, դրա սոցիալական հենքից ելնող հակընդդեմ քաղաքական ուժերի միջև կապը, ուրեմն, պետք է խզվեր: Հովհաննիսյանի ու Դաշնակցության մանրբուրժուականության նրա տեսության դեմ Շահումյանի հեղինակությունը խաղարկելը պատմությունն ու իրականությունը միմյանց դեմ հանելու ստալինյան քաղաքական քայլն էր: Հովհաննիսյանի Դաշնակցության մանրբուրժուականության տեսության պաշտպանությունը հակադարձ ձևով, ուրեմն, նշանակում էր պաշտպանել Շահումյանի տեսակետը խեղաթյուրումից, պաշտպանել կոմունիստական կուսակցության պատմությունն ու դրա որդեգրած քաղաքականությունը:

Ըստ Հովհաննիսյանի՝ բոլոր այդ դատողություններն առհասարակ հնարավոր կլիներ լռությամբ շրջանցել, եթե Դաշնակցության՝ որպես «քաղաքական սադրանքի» կամ որպես արդյունաբերական կապիտալիզմի կուսակցության կոնցեպցիայի կողմնակիցները չփորձեին իրենց տեսակետը ներկայացնել որպես ուղղադավան բոլշևիզմի, որպես Շահումյանի ու Սպանդարյանի տեսակետ. «Դրանով իսկ մեր մարտավարական գծի վերանայման փորձերը կարող են դրվել որոշակի կապի մեջ այդ ընկերների բոլշևիկյան մարտավարության հետ: Ուստի, անհրաժեշտ է ամենավճռական կերպով մերժել հիմքում

այս սխալ առաջադրույթը» (թ. 6):[136] Պատահական չէ, որ թեզիսների ամբողջ երկրորդ գլուխը Հովհաննիսյանը նվիրում է Շահումյանի դիրքորոշման պարզաբանմանը:[137] Շահումյանի դիրքորոշումն իբրև ուղենիշ ունենալով՝ Հովհաննիսյանը ձևակերպում էր Դաշնակցությանը տրվող գնահատականը: Հայաստանի սահմաններում իր ազդեցության թափով միակ քաղաքական կազմակերպությունը լինելով՝ Դաշնակցությունն իր վրա էր վերցնում ոչ միայն մանր, այլև խոշոր բուրժուազիայի շահերի պաշտպանությունը: Այդուհանդերձ Դաշնակցությունն իր բնույթով ու էությամբ բուրժուազիային հատուկ կազմակերպություն չէր (թ. 12):

Հովհաննիսյանի համար, սակայն, Դաշնակցության հանդեպ Շահումյանի դիրքորոշման պարզաբանումը չէր սահմանափակվում իր դեմ մեղադրանքները հերքելու հանգամանքով և նույնիսկ Կոմունիստական կուսակցության պատմությունը խմբագրելու փորձերի դեմ պայքարով: Դաշնակցության սոցիալական ծագումը մանրբուրժուական գնահատելու համար Հովհաննիսյանի կռիվը Կոմունիստական կուսակցության պատմությունն իր մեջ ներառող ավելի մեծ՝ արդի հայ քաղաքական մտքի պատմության գնահատման շուրջ կռիվն էր: Պատմական ուղեգիծը, որ Հովհաննիսյանը երևան էր բերում Դաշնակցություն կուսակցությունը գնահատելու հարցում, միաժամանակ պատմականորեն գծագրում էր հայ արդի քաղաքական մտքի բռնած ճանապարհը: Ըստ Հովհաննիսյանի, ի դեմս Դաշնակցության՝ իր պատմական զարգացման ավարտին էր հասել 1880-ականների հայ մանրբուրժուական ինտելիգենցիայի հասարակական-քաղաքական շարժումը, շարժում, որը, Հովհաննիսյանի գնահատմամբ, կրում էր 1860-1870-ականների մանրբուրժուական նարոդնիկության ակնհայտ ազդեցությունը: Այդ շարժումը, Հովհաննիսյանի պնդմամբ, «ոչ միայն կապիտալիզմի քաղաքական իդեոլոգիայի ուղղակի արտահայտությունը չէր, այլև մի զգալի չափով ռեակցիա էր առևտրա-արդյունաբերական կապիտալիզմի աճի և նրա գործադիր մարմնի՝ ցարական ինքնակալության քաղաքական ճնշումների ուժեղացման դեմ» (թ. 13):

Մանրբուրժուական նարոդնիկության պատմական զարգացման հեռանկարում բացվող Դաշնակցության ծնունդը նշում էր կուսակցության ձևավորման ակունքները քաղաքական, սոցիալ-հասարակական կոնկրետության մեջ: Այդ կոնկրետության մեջ էր երևան բերում Հովհաննիսյանը Դաշնակցության անցած «35-ամյա զարգացման դիալեկտիկական ճանապարհը».

> Ֆեոդալա-կալվածատիրական ինքնակալության և արդյունաբերական-կապիտալիստական բուրժուազիայի *դեմ* մանր բուրժուազիայի պաշտպանության դիրքերից բուրժուա-ազգային սահմանափակության շրջանակում մանր բուրժուազիայի ազգային-հեղափոխական շարժման հակասական շրջանի միջով, հանուն ազգային «ազատության» ու «անկախության» իդեալների իրականացման, այն անցավ բուրժուական սեփականության և բուրժուա–ազգային

[136] Կարինյանն իր հերթին պնդում էր, որ «բայլշևիկյան շարքերում յերբեք և վոչ մի կասկած չի յեղել այն մասին, թե ի՞նչ ե ներկայացնում Դաշնակցությունը իրենից: Այդ կուսակցությունը սկզբից արդեն համարվում եր հայկական կապիտալի, բուրժուազիայի և բուրժուական մտավորականության կազմակերպություն»: Տե՛ս ՀԱԱ, ֆ. 862, g. 1, գ. 117, թթ. 34-35: Կարինյանի այս տեսակետի հիմնավորման աղբյուրը Սուրեն Սպանդարյանի, բայց նախևառաջ Շահումյանի գրվածքներն էին: Այնինչ Հովհաննիսյանը՝ «պատմագիտական դիսցիպլինայի «վարպետը»», ըստ Կարինյանի, «փոխարեն հենվելու անմիջական աղբյուրների, Շահումյանի շատ պարզ տեսակետի վրա, դիմում ե զանազան, խիստ կասկածելի տրամաբանական մանիպուլյացիաների ոգնության իր ջախջախված տեսակետը վորևե կերպով կոնտրաբանդայի միջոցով առաջ տանելու համար»: Տե՛ս ՀԱԱ, ֆ. 862, g. 1, գ. 117, թթ. 36, 45:

[137] Թեզիսների երկրորդ գլուխը վերնագրված է «Դաշնակցություն կուսակցությունը Շահումյանի լուսաբանմամբ» (թթ. 6-13):

> պետականության պաշտպանության դիրքի՝ *ընդդեմ* պրոլետարիատի դիկտատուրայի և այդ դիկտատուրան ղեկավարող Կոմունիստական կուսակցության (ընդգծումը՝ Ա. Հ.) (թ. 19):[138]

Հովհաննիսյանի համար Դաշնակցության անցյալը պայմանավորում էր կուսակցության հանդեպ քաղաքական դիրքորոշումը ներկայում: Խոսելով Դաշնակցության բուրժուական բնույթի կամ դրա բուրժուական «վերասերման» մասին, Հովհաննիսյանը զգուշացնում էր, որ չի կարելի կոծկել խնդիրը և խուսափել կուսակցության էության հստակ ձևակերպումից: Հովհաննիսյանի համար Դաշնակցության գնահատման հարցը քաղաքական ագիտացիայի հարց չէր, այլ Կոմունիստական կուսակցության դիրքորոշման՝ ընդդեմ Դաշնակցության:[139] Հովհաննիսյանը պնդում էր, որ խոսելով կուսակցության նախկին ամբողջ գործունեության բուրժուական բնույթի մասին, չպետք է աչքաթող արվեր այն, որ խոսքը մանր բուրժուազիայի գործունեության մասին էր, որին «վիճակված չէր դուրս գալ բուրժուական հասարակայնության և պետականության շրջանակից» (թ. 21): Նույն կերպ և խոսելով կուսակցության բուրժուական վերասերման մասին, չպետք է աչքաթող արվեր փաստը, որ խոսքը նույն մանր բուրժուազիայի մասին էր և այն մանր բուրժուազիայի վերասերման մասին, որին «պատմականորեն վիճակված [էր] առհասարակ կանգնել կա՛մ պրոլետարիատի ռելսերի, կա՛մ բուրժուազիայի ռելսերի վրա» (թ. 21):

Ծնունդ լինելով մանրբուրժուական խավերի՝ Դաշնակցության «տատանումները», «շրջումները», «վերասերման միտումները» նշում էին կուսակցության հենց մանրբուրժուական առանձնահատուկ բնույթը (թ. 21): Հովհաննիսյանի գնահատմամբ՝ անհնար էր շրջանցել Դաշնակցությունից եկող վտանգներն այն դեպքում, երբ իրենց՝ կոմունիստների աշխատանքը ծավալվում էր մանրբուրժուական, առաջին հերթին գյուղացիական տնտեսության պայմաններում: Անխուսափելի էր և այն իրական վտանգը, որ կարող էր առաջ բերել Դաշնակցությունը բանվոր դասակարգի և երկրում գերիշխող մանրբուրժուական մասսաների՝ գյուղացիության շահերի միջև իրական բախման դեպքում: Ի վերջո հենց Դաշնակցության մանրբուրժուական բնույթն էր բացատրում այն երբեմնի համբավը, որը կուսակցությունն ունեցել էր բնակչության լայն շերտերի շրջանում (թթ. 22-23): Հովհաննիսյանը քաղաքական եզրահանգումների գալիս էր միայն Դաշնակցության պատմասոցիալական այս քննությունից հետո: Կոմունիստների պայքարը Հովհաննիսյանը տեսնում էր երկու ուղղությամբ: Հետևողական պայքարը հանուն բնակչության լայն զանգվածների, որոնք ամբողջությամբ դուրս չէին եկել Դաշնակցության քաղաքական ու գաղափարական ազդեցությունից, պետք է է՛լ ավելի

---

[138] Հովհաննիսյանի ձևակերպումների բարդությունը հաշվի առնելով՝ տալիս ենք նաև ռուսերեն բնագիրը. «От позиции зашиты мелкой буржуазии *против* феодально-помещичьего самодержавия и промышленно-капиталистической буржуазии через противоречивый круг национально-революционного движения мелкой буржуазии в рамках буржуазно-национальной ограниченности, за осуществление идеалов национальной <свободы> и <независимости>, она перешла на позицию зашиты буржуазной собственности и буржуазно-национальной государственности *против* диктатуры пролетариата и *против* Коммунистической партии, руководящей этой диктатурой»:

[139] Հովհաննիսյանի Դաշնակցության մանրբուրժուականության տեսությունը սպեցիֆիզմի հետ ուղիղ կապելով հանդերձ՝ Կարինյանը հարկ է համարում իմիջիայլոց հավելել. «Դրանով չենք ցանկանում ասել, թե ընկ. Աշ. Հովհաննիսյանը միանման յեզրակացությունների համար ե առաջադրել իր տեսակետը: Ամենևին վոչ: Մենք ցանկանում ենք միայն շեշտել այն, վոր նրա պաշտպանած հիմնական հայեցակետը այնպես ե կառուցված, վոր հակառակ նույնիսկ հեղինակի կամեցողության կարող ե շատ հեշտ կերպով ոգտագործվել մեր դասակարգային հակառակորդների կողմից»: Տե՛ս ՀԱԱ, ֆ. 862, g. 1, գ. 117, թ. 48:

հետևողական դառնար:[140] Երկրորդ կետով միայն Հովհաննիսյանը նշում էր քաղաքական ուղիղ գործադրությունը՝ ճակատային պայքարը դաշնակցական կազմակերպությունների դեմ (թթ. 23-24):

1927-ի մարտյան պլենումում Հովհաննիսյանի դեմ հնչած մեղադրանքներն ակնհայտ էին դարձնում, որ ստալինյան քաղաքական օրակարգում Դաշնակցության սոցիալական ծագման տեսությունը ոչ միայն տեղ չէր կարող գտնել, այլև պետք է համարվեր թշնամական: Դաշնակցության քաղաքական ուժը չեզոքացնելու համար հայաստանյան իրականության սոցիալական նկարագրի վերափոխման երկարաժամկետ քաղաքական աշխատանքը չէր տեղավորվում ստալինյան հնգամյակում: Քաղաքական հրահանգով իրականությունն արագ վերափոխելու ստալինյան հավակնությունն, ուրեմն, առաջնահերթ կերպով պետք է վերացներ այդ իրականությունից ելած տեսությունն ու այդ տեսությունն իբրև քաղաքական ուղեցույց որդեգրած քաղաքական ուժը՝ ազգային կոմունիստների ողջ ղեկավարությունն ու նախևառաջ Հովհաննիսյանին: 1927-ի մարտյան պլենումը հատուկ բանաձևով մերժեց Կենտրոնական կոմիտեին սպեցիֆիկյան թեքման մեջ մեղադրող հայտարարությունները:[141] Սակայն պլենումին հաջորդած իրադարձություններն այդ բանաձևը չեզոքացրին շատ կարճ ժամանակով: Հայտնի է, որ պլենումից հետո դրա արդյունքների ներկայացման համար գումարված կուսակցության Երևանի ակտիվի պլենումի նիստում՝ իբրև պլենումի արդյունքները ներկայացնող երկրորդ՝ ըստ էության չնախատեսված ելույթով Ասքանազ Մռավյանից հետո հանդես է գալիս Աշոտ Հովհաննիսյանը:[142] Հայտնի է նաև, որ Հովհաննիսյանի այդ ելույթից հետո Կենտրոնական վերահսկիչ հանձնաժողով է ներկայացվում երկու, իսկ Կենտրոնական կոմիտե՝ մեկ դիմում ընդդեմ Հովհաննիսյանի: Ըստ դիմումների, Հովհաննիսյանը խախտել էր մարտյան պլենումի որոշումը և իր ելույթում արտահայտել էր ոչ թե պլենումի միասնական տեսակետը, այլ իր անձնական տեսակետը:[143] Կենտրոնական վերահսկիչ հանձնաժողովի և Կենտրոնական կոմիտեի միջև Հովհաննիսյանի ելույթի շուրջ ծագում են լուրջ տարաձայնություններ: Քննության առնելով ընդունված դիմումները՝ Կենտրոնական վերահսկիչ հանձնաժողովի նախագահությունը հաստատում է, որ Հովհաննիսյանի ելույթը կառուցված չի եղել Կենտրոնական կոմիտեի պլենումի որոշումների ոգով, որ Հովհաննիսյանը մոտեցել է հարցին սուբյեկտիվորեն և դրանով խախտել է այն որոշումը, որն ընկած էր մարտյան պլենումում ձեռք բերված հաշտության հիմքում: Կենտրոնական կոմիտեն իր հերթին, ընդունելով հանդերձ, որ Հովհաննիսյանը որոշ հարցեր լուսաբանել էր սուբյեկտիվորեն, հաստատում էր, որ ելույթն արվել էր պլենումի որոշման ոգով:[144] Ներկուսակցական սրված այս պայմաններում Հովհաննիսյանը հունիսի 6-ին դիմում է

---

[140] Դաշնակցական գաղափարների ակտիվություն Հովհաննիսյանը նկատում էր նաև մտավորականության լայն շերտերի շրջանում, այն մտավորականության, որը դուրս էր եկել մանրբուրժուական միջավայրից, կամ գտնվում էր դրա ազդեցության տակ (թ. 23):
[141] ՀԱԱ, ֆ. 1, ց. 7, գ. 23, թ. 40:
[142] Արխիվում Հովհաննիսյանի ելույթը, ցավոք, մեզ չհաջողվեց գտնել:
[143] Երևանի ակտիվի նիստից հետո Վերահսկիչ հանձնաժողովին ու Կենտրոնական կոմիտեին Հովհաննիսյանի դեմ ուղղված դիմումներից տե՛ս Արսեն Եսայանինը (ՀԱԱ, ֆ. 1, ց. 7, գ. 77, թթ. 1-2), Հ. Կարոյանինը (թ. 5), Արամայիս Երզնկյանինը (թ. 6), Հովհաննես Բաննահյանինը (թթ. 1-2, 8-9): Կուսակցության 5-րդ պլենումին ուղղված Եսայանի և Բաննահյանի ընդարձակ դիմումը տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 7, գ. 77, թթ. 38-51: Իր դեմ ուղղված դիմումներին ի պատասխան Վերահսկիչ հանձնաժողովին ու Կենտրոնական կոմիտեին ուղղված Հովհաննիսյանի դիմումը տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 7, գ. 77, թթ. 17-21: Այս մասին տե՛ս նաև Հակոբյան, *Միակուսակցական վարչակարգի ձևավորումը,* էջ 303-304:
[144] Այս տեղեկությունները մեզ հասու են կուսակցության արդեն 5-րդ պլենումի ժամանակ գլխավոր քարտուղարի պաշտոնում ընտրված Հայկ Հովսեփյանի ելույթից: Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 7, գ. 23, թ. 42: Հովսեփյանի ելույթից պարզում ենք նաև, որ Վերահսկիչ հանձնաժողովի նիստի ժամանակ Արսեն Եսայանը մեղադրել է Հովհաննիսյանին «սպեցիֆիզմի և դաշնակիզմի» մեջ: Վերահսկիչ հանձնաժողովը նույն Եսայանից ստացել է դիմում Հովհաննիսյանի կուսակցական ստաժի գերազանցման մասին, որը Հանձնաժողովը մերժել է: Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 7, գ. 23, թթ. 42-43:

Կենտրոնական կոմիտեի նախագահությանն իրեն Կենտրոնական կոմիտեի գլխավոր քարտուղարի պաշտոնից և նախագահության անդամի պարտականություններից ազատելու խնդրանքով:[145]

1927-ին կատարվող այս իրադարձություններն այլ բան չէին, քան կուսակցության ստալինացումը: Հովհաննիսյանի պաշտոնից ազատումը և գլխավոր քարտուղարի պաշտոնում Հայկ Հովսեփյանի նշանակումն ազգային կոմունիզմի պարտության ու ստալինյան քաղաքականությունների հաստատման շրջադարձային կետն էր: Ուշագրավ է, թե ի վերջո ստալինյան գծի կոմունիստների ձևակերպմամբ, Հովհաննիսյանի՝ Դաշնակցության դեմ կռիվն այլափոխված ինչ կերպարանքով էր հանդես գալիս: Հովհաննիսյանի դեմ ելած ամենաակտիվ կուսակցականներից Եսայանի ու Բաննահյանի 5-րդ պլենումին ուղղված գրության մեջ, որտեղ ազգային կոմունիստների քաղաքական գիծը շարունակում էր ենթարկվել սուր քննադատության, առանձին կետով նշվում էր.

> Հայ ազգայնականները գոհ էին նախկին սպեցիֆիկների ղեկավարությունից, որոնց նրանք անվանում էին «խիղճը չկորցրած», «իմաստուն» կոմունիստներ: Այս գոհունակությունը պետք է բացատրել նրանով, որ նրանց դեմ հետևողական գաղափարական պայքար չի տարվել: Նրանց հնարավորություն էր տրվում վերականգնել կորցրած դիրքերը և քաղաքական կապիտալ կուտակել (բնագիրը՝ ռուսերեն):[146]

Դաշնակցության դեմ քաղաքական ու գաղափարական կռիվ տվող ազգային կոմունիստների քաղաքականությունը ստալինյան գծի կոմունիստների համար այլևս ոչ միայն ուղղադավան կոմունիստի չափանիշին չէր համապատասխանում, այլև ազգային կոմունիստներին դնում էր դաշակցականների կողքին: Ուշագրավ է, որ սրա նշան ստալինյան գծի կողմնակիցները համարում էին հենց դաշնակցականների գնահատականը կոմունիստական կուսակցության ներսում սկսված պայքարին. «Հայաստանի ղեկավարությունը պաշտպանում էին անգամ դաշնակները, իսկ այն ընկերները, որոնք քննադատում էին Հայաստանի Կենտկոմի գիծը, ենթարկվում էին ազգայնականների և դաշնակների անխնա հալածանքներին» (բնագիրը՝ ռուսերեն) (թ. 41): Պատահական չէր Եսայանի ու Բաննահյանի պնդումն այն մասին, որ ինչպես հայ «հակահեղափոխականները»՝ դաշնակցականները, այնպես էլ Կենտկոմի ղեկավար կազմը նույն գնահատականն էին տալիս ներկուսակցական կռիվներին՝ «խմբակայնություն», «խարդավանքներ», «Վրաստանի ազդեցություն» և այլն (թ. 41): Իրենց դիտարկման մեջ Եսայանն ու Բաննահյանն ըստ էության չէին սխալվում: Դաշնակցականները հետևում էին Հայաստանում ծավալվող իրադարձություններին: Ըստ դաշնակցականների մեծամասնականների թիֆլիսյան «վոհմակը,....իբր անխառն միջազգայնականներ, բուռն պայքարի մէջ է[ր] Երևանի վարիչների հետ»:[147] Դաշնակցականների գնահատմամբ «Հայաստանի կոմունիստների ներքին վէճերը տարւում էին երեք գծով 1. կուսակցութեան ղեկավարների, 2. ընդդիմադիր փոքրամասնութեան ու ստալինեան մեծամասնութեան և 3. Երևանի ու Թիֆլիսի կոմունիստների միջև»:[148] Ըստ դաշնակցականների՝ Ռուսաստանում սկսված «ընդդիմադիր շարժման ալիքը» հասել էր Հայաստան. «Փորձեր եղան հաստատելու, թէ

---

[145] Հովհաննիսյանի դիմումն ամբողջությամբ Հովսեփյանն ընթերցում է իր ելույթի ժամանակ: Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, g. 7, գ. 23, թ. 48:
[146] ՀԱԱ, ֆ. 1, g. 7, գ. 77, թ. 41: Տեքստից հետագա մեջբերումները՝ տողամիջում:
[147] Հերա, «Թիֆլիս – Երեւան պայքարը», *Դրօշակ,* 1927, թիվ 5, էջ 156:
[148] Տե՛ս Աշոտ Արծրունի, «Հակառակորդի բանակում», *Դրօշակ,* 1928, թիվ 10, էջ 246:

իբր, հայ ընդդիմադիր կոմունիստները գործակցութեան մէջ են «ազգայնական դաշնակների» հետ: Այդ, ի հարկէ, անհիմն պրովոկացիա էր»:[149] Նույն այդ պայքարում, դաշնակցականների գնահատմամբ, «ընդդիմադիր շարժման» պարտությունը զրկում էր Հայկոմկուսին «ձեռնհաս և ազդեցիկ ղեկավարներից ու գիտակից և պատրաստված երիտասարդութիւնից»:[150]

Ուրեմն, կա՞ր արդյոք ստալինյան մեղադրանքների մեջ ճշմարտություն: Այո՛. ստալինյան քաղաքականության դիրքից հստակ երևում էր դաշնակցականների ու ազգային կոմունիստների միջև կապը: Ստալինիզմը, սակայն, մտահոգ չէր տեսնելու այդ կապի բարդ, ներհակ բնույթը, որ սնում էր հայ քաղաքական մտքի ավանդույթը: Ստալինիզմը հակառակը՝ կոչված էր վերացնելու այդ ավանդույթը՝ դաշնակցականներին ու ազգային կոմունիստներին դնելով միմյանց կողքին: Ստալինյան այս մոտեցումը պարզեցնում էր հայ քաղաքական մտքի պատմությունը, լղոզում ու քողարկում էր դրան հատուկ հակասությունները. հայ քաղաքական մտքի պատմությունը տրվում էր մոռացության:

«Դաշնակցության մանր-բուրժուականության տեսության քաղաքական հետևանքները»

1927-ին կատարված դեպքերն ապահովեցին կուսակցության ներսում քաղաքական բեկումը, բայց ստալինյան հաղթարշավը դեռևս առջևում էր: Ստալինյան քաղաքականության ձեռագիրն էր երևում նրանում, որ Հովհաննիսյանին պաշտոնանկ անելուն զուգահեռ միաժամանակ իրենց զբաղեցրած պաշտոններից հեռացվեցին նաև նրանք, որոնց ձեռքով էլ հենց կատարվեց Հովհաննիսյանի պաշտոնանկությունը: Աշխատանքից հեռացվեցին Հովհաննիսյանի դեմ քաղաքական արշավ սկսած Եսայանը և Բաննահյանը (թ. 49):[151] Կարճ ժամանակ անց գլխավոր քարտուղարի պաշտոնից ազատվեց նաև Հովհաննիսյանին փոխարինած Հայկ Հովսեփյանը:[152] 1928-ին գլխավոր քարտուղարի պաշտոնը զբաղեցրեց Հայկազ Կոստանյանը:[153]

1928-ը ստալինյան քաղաքականության վերջնական հաստատման ու ազգային կումունիստների քաղաքականության վերջնական վարկաբեկման ու քաղաքականապես

---

[149] Աշոտ-Արծրունի, «Հակառակորդի բանակում», էջ 247:
[150] Աշոտ-Արծրունի, «Հակառակորդի բանակում», էջ 247:
[151] Չնայած ընդունված որոշմանը՝ Բաննահյանի ազգանվանը հանդիպում ենք 1928-ի 5-րդ պլենումի արձանագրություններում: Հարցը՝ արդյո՞ք Բաննահյանին ու Եսայանին զբաղեցրած պաշտոններից հեռացնելու մասին որոշումը գործադրվել է, թե ոչ, կարիք ունի պարզաբանման:
[152] Հարկ է նշել, որ դատելով 1927-ի պլենումների արձանագրություններից, Հովսեփյանը քարտուղարի պաշտոնում ոչ թե ներկուսակցական պայքարը հրահրողն էր, այլ ավելի շատ թվացյալ հավասարակշռություն ու համերաշխություն պահպանողը: Ո՛չ 4-րդ, ո՛չ 5-րդ պլենումների իր ելույթներում Հովսեփյանը Հովհաննիսյանի և Կենտկոմի քաղաքական գծի դեմ բացահայտ հանդես չեկավ: Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 7, գ. 16, թթ. 47-55; ֆ. 1, ց. 7, գ. 23, թթ. 40-50; ֆ. 1, ց. 7, գ. 24, թթ. 81-90: Պատահական չէ, որ 1929-ին Հայաստանի Կոմկուսի 6-րդ համագումարի ժամանակ Շավարշ Ամիրխանյանը «հին ղեկավարության սխալների սկզբունքային բնույթը յեվ ԿԿՀ-ի վերաբերմունքը» պարզելիս նշում էր, որ Հայկ Հովսեփյանը «հանդիսացավ գաղափարական ժառանգն Աշոտ Հովհաննիսյանի»: Տե՛ս «Ընկեր Շ. Ամիրխանյանի զեկուցումը Հայկոմկուսի (բ) վեցերորդ համագումարում», *Խորհրդային Հայաստան*, 2 փետրվարի 1929 թ.:
[153] Ըստ դաշնակցական *Դրօշակի՝* ներկուսակցական պայքարի արդյունքում «համակրանք ու հեղինակութիւն չվայելող Մռավեանների, Կարինեանների ու Նաթան իմաստուն՝ Գիւլիքեոխվեանի» «կլիկն» էր առաջ քաշել կուսակցության գլխավոր քարտուղարի պաշտոնում «մի ոչնչութիւն՝ «համեստ» զինկոմ՝ Հայկ Յովսէփեանին»: Սակայն սրանով պայքարը չէր ավարտվել: Ըստ *Դրօշակի,* Երևանի ու Թիֆլիսի միջև սկսվում է «մահու և կենաց կռիւ», որից հաղթող է դուրս գալիս Անդրերկրային կոմիտեն. «Հայկենտկոմի պարտութեան հետևանքով է, որ, Կրեմլի հաւանութեամբ, փոխւում է կուսակցութեան ղեկավարութիւնն ու կառավարութեան կազմը»: Տե՛ս Աշոտ-Արծրունի, «Հակառակորդի բանակում», էջ 247:

չեզոքացման տարին էր: 1928-ին կայացած Կենտկոմի 4-րդ՝ նոյեմբերյան պլենումում արդեն քաղաքականապես հստակ սահմանագիծ անցկացվեց հին ու նոր ղեկավարությունների միջև: Քաղաքական ամենաբարձր ամբիոնից հին ու նոր ղեկավարությունների տարբերությունն ամրագրելու հարցում վճռական էր գլխավոր քարտուղար Հայկազ Կոստանյանի ելույթը:[154] Կոստանյանը փաստում էր, որ ներկուսակցական պայքարի ժամանակ կենտրոնական կետը կազմում էին իդեոլոգիական խնդիրները և որ հին ղեկավարությունը «հիմնական սխալ» ուներ այս խնդրում.

> Ըստ իս, այդ սխալն այն է, վոր բացակայում եր խիստ հաստատուն հիմնավորված և վերջնական հայացք՝ մեզ թշնամի կուսակցությունների սոցիալական եյության վերաբերյալ և, առաջին հերթին, նրանցից ամենագլխավորի «Դաշնակցություն» անունը կրող կուսակցության: Յերկրորդ սխալն այն է, վոր այդ խնդրում քաղաքական դրությունը խարդախված է՝ հիշյալ կուսակցությունների ակադեմիական ուսումնասիրությամբ և, այն ել, այնպիսի մարդկանց ձեռքով, վորոնք կամ բոլորովին չեյին տիրապետում մարքսիզմի զենքերին, կամ մարքսիստական դիալեկտիկային չափազանց թույլ եյին տիրապետում:[155]

Կոստանյանի ելույթը պարզում էր ոչ միայն քաղաքականության վերջնական ստալինացումը, այլև գիտությա՛ն ստալինացումը, քաղաքականության ու գիտության միջև ստալինիզմով հաստատվող խզումը: Ստալինյան քաղաքականությունը ելել էր Հովհաննիսյանի մարքսիստական պատմաբանության դեմ.

> Ընկերնե՛ր, դժբախտությունն այն չե, վոր մարդիկ պատմությամբ եյին զբաղվում և չափազանց փութաջանությամբ մեր հանդեսների եջերը լցնում այդ խնդրի առթիվ յեղած վեճերով: Այդ դժբախտություն չե, վորովհետև բայլշեվիկները պատմությամբ ել պիտի զբաղվեն: Դժբախտությունն այն է, վոր մարդիկ այնքան հրապուրվեցին հարցի այդորինակ «պատմական» դրվածքով, վոր դրանով են լցրել Կենտկոմի և թե այլ կուսակցական մարմինների քաղաքական բովանդակ աշխատանքը, մինչդեռ գյուղի սոցիալ-տնտեսական կառուցվածքը՝ տվյալ պատմական ետապում – թույլ է ուշադրության առնվել:

Ստալինիզմի հաստատմամբ պատմության ու քաղաքականության տարանջատումը քաղաքական հրամայական էր: Պատմությունը պետք է ենթարկեցվեր քաղաքական հրամայականին. դա էր իրականությունը քաղաքականությամբ արմատապես վերափոխելու միակ հնարավորությունը: Քաղաքականությունը կտրել պատմությունից նշանակում էր ապապատմականացնել ներկան, նշանակում էր քաղաքական գործադրությունն այլևս անհրաժեշտաբար չհարաբերել պատմականորեն կոնկրետ ներկայի ու իրականության հետ: Այդ էին վկայում Կոստանյանի խոսքերը, թե Կենտկոմն իր հիմնական ուշադրությունը պետք է նվիրեր այն «իրական պրոցեսներին», որոնք տեղի էին ունենում երկրում, նկատի ունենալով նախևառաջ գյուղի դասակարգային դիմագծի ամբողջական այլափոխումը: Այդ «իրական պրոցեսներում» սակայն պատմականորեն կոնկրետ գնահատականներն այլևս քաղաքականապես անպատեհ էին. «Զբաղվել պատմական հարցերով՝ հարկավոր է՝ սակայն սահմանափակվել դրանով և հրապուրվել

---

[154] «Ընկեր Հայկազ Կոստանյանի զեկուցումը ՀԿ(բ) ԿԿ 4-րդ պլենումում», *Խորհրդային Հայաստան*, 19 հուլիսի 1928 թ.: Հետագա մեջբերումներն այս հոդվածից են:

[155] Կոստանյանի ելույթում ներկուսակցական դրության և հին ղեկավարության հետ կռվի մասին տե՛ս Կոստանյանի ելույթը, որը նաև գրքույկի ձևով հրատարակվեց պլենումից հետո՝ Հայկազ Կոստանյան, *Ներկուսակցական դրությունը յեվ մեր հերթական անելիքները* (Երևան: Պետական հրատ., 1928), էջ 57-69:

դրանով չի կարելի»: Հովհաննիսյանի՝ Դաշնակցության սոցիալական ծագման շուրջ բացված խոսակցությունն, ուրեմն, անպիտան էր դարձել ներկայի քաղաքական խնդիրների համար: Ուրեմն և Դաշնակցության դեմ վարելիք քաղաքական կռիվը հիմնավորման կարիք չուներ. «Կարե՞լի յե հրապուրվել հարցի ուսումնասիրական ակադեմիական կողմով և աչքաթող անել մեր յերկրի իրական գործնական պայմանները ու մտածել, վոր Դաշնակցության դեմ պետք չե պայքար մղել....»: Այն, որ հին ղեկավարությունը ստանձնել էր նման մոտեցում, Կոստանյանը հավաստում էր մեջբերելով «մի քանի տող Հայաստանի Կոմկուսի կենտրոնական Կոմիտեյի մի շրջաբերականից».

> «Դաշնակիզմը ինչպես և ամեն մի հակահեղափոխական իդեոլոգիա, կարող ե վերջնականապես հաղթահարվել միայն դասակարգի վոչնչացման պրոցեսում, հասարակական հարաբերությունների արմատական փոփոխությունների դեպքում» (ծիծաղ, աղմուկ):

Ուշագրավ է, որ 4-րդ պլենումում Կոստանյանի ելույթը, որ լույս էր տեսել առանձին գրքույկի տեսքով, որոշ տարբերություններ ուներ *Խորհրդային Հայաստան* թերթում տպված տարբերակից: Մասնավորապես գրքույկի տարբերակում Կենտկոմի շրջաբերականից մեջբերում կատարելիս Կոստանյանը նույն շրջաբերականի մասին մասնավորեցնում է, որ հին ղեկավարության ժամանակ գրված շրջաբերականը «ստորագրված ե նրա գլխավոր քարտուղարի կողմից»:[156] Հովհաննիսյանի՝ հայաստանյան իրականության սոցիալական վերլուծության տեսությունն այլևս «ծիծաղ ու աղմուկ» էր հարուցում: Հովհաննիսյանի առաջ քաշած թեզը, թե Դաշնակցության քաղաքական ուժը կարող էր չեզոքացվել կյանքի սոցիալ-հասարակական տեղաշարժերի, տնտեսակարգի փոփոխության արդյունքում, այլևս քննարկելի չէր: Դաշնակցության հետ կռիվը դարձել էր զուտ քաղաքական, իդեոլոգիական հարց ու կտրվել նույն Դաշնակցության ուժը պայմանավորող մանրբուրժուական տնտեսությունից ու կենցաղից: Հովհաննիսյանի դիրքորոշումը, ըստ Կոստանյանի, նշանակում էր, որ Դաշնակցությանը «գոյության մանդատ» էր շնորհվում մինչև սոցիալիզմ, մինչև կոմունիզմ. «Այդ վոչ միայն կոպիտ սխալ ե, այլ և հանցանք: Վոչ վոք դրանց այդ իրավունքը չի տա, յես համարում եմ, վոր Դաշնակցությանը մենք կարող ենք և անպայման պետք ե վոչնչացնենք մինչև սոցիալիզմը: (Ծափահարություններ)»:[157]

1928-ին հին ղեկավարությունն արդեն հրապարակայնորեն մեղադրվում էր «ուկլոնիզմի» ու նացիոնալիզմի մեջ:[158] Պլենումն արձանագրում էր, որ նախկին ղեկավարության շրջանում տիրել են «ազգայնական տենդենցներ.... վորոնք հետագայում կարող եյին խորտակել Կենտկոմի բայլշևիկյան, լենինյան գիծը»:[159] Հաստատված ստալինյան նոր ղեկավարությունն իր քաղաքական օրակարգն էր սահմանել. «Մաքրել այն ամբողջ կեղտն ու փտածությունը, վոր կուտակվել են մեզ մոտ, շտկելով բոլոր թեքումներն ու շեղումները»:[160]

Կենտկոմի նոր ղեկավարության այս մաքության քաղաքականության հիմնապատճառը բացահայտ տեսնում էին նաև դաշնակցականները: Դաշնակցական *Դրոշակի*

---

[156] Կոստանյան, *Ներկուսակցական դրությունը*, էջ 50-51:
[157] «Ընկեր Հայկազ Կոստանյանի զեկուցումը»:
[158] Կոստանյան, *Ներկուսակցական դրությունը*, էջ 51-55, 59-60:
[159] «ՀԿ (բ.) Կ Կենտկոմի չորրորդ պլենումի արդյունքները», *Խորհրդային Հայաստան*, 5 հուլիսի 1928 թ.:
[160] «Հ.Կ. (բ.) Կ. պլենումը. 2-րդ-6-րդ նիստերը», *Խորհրդային Հայաստան*, 3 հուլիսի 1928 թ.:

հոդվածագիր Աշոտ Արծրունին հին ղեկավարության դեմ ուղղված քաղաքական մեղադրանքների շարքում որպես «գլխաւոր մեղադրանք» տեսնում էր այն, որ Հովհաննիսյանին թույլատրվել էր հայտարարել, որ Դաշնակցությունը մանրբուրժուական կուսակցություն է:[161] Այնինչ, Աշոտ Արծրունու խոսքով, «ինչպէս Կոստանեաններն են համոզուած», վկայակոչելով Շահումյանի կարծիքը, Դաշնակցությունը եղել և մնում է բուրժուական կուսակցություն (էջ 249): Դաշնակցականներն իրենք հասկանում էին իրենց կուսակցությանը տրված գնահատականի այս փոփոխության արդյունքը. «Դաշնակցութեան բուրժուական կուսակցութիւն լինելը հաստատելու համար, բոլշևիկեան նոր «տեսաբանները» այնքան են հեռու գնում, որ իրենց հովանաւորութեան տակ են առնում.... մանր բուրժուազիային» (էջ 250): Սակայն Դաշնակցությանը տրված ստալինյան նոր գնահատականի բուն պատճառն ու հետևանքները դաշնակցականներին երևում էին միայն իրենց կուսակցության օրակարգի ներսից: Ըստ Աշոտ Արծրունու՝ Դաշնակցությանը բուրժուական համարելը նպատակ ուներ նախ «պրովոկացիոն յօդուածներով ու փաստերի խեղաթիւրումով (Հայկ Ազատեանի շարադրութիւնները) խրտչեցնել հայ աշխատաւորութիւնը այդ կուսակցությունից»: Երկրորդ՝ կոմունիստները Դաշնակցությունը հայտարարում էին բուրժուական, «որպէսզի իրենց մանր բուրժուական (եւ երբեմն էլ բուրժուական) բնոյթը քօղարկեն»: Երրորդ՝ մարքսիզմը տեսականորեն, իսկ կոմունիստները գործնականում՝ «իւրացնում են Դաշնակցութեան մի շարք տեսակէտները», ուստի հայտարարում են բուրժուական, որպեսզի Դաշնակցության ծրագրի կետերն իրենցը համարեն (էջ 250):

Դաշնակցության մանրբուրժուականության տեսության հերքման դաշնակցականների բացատրության մեջ իրենց կուսակցությանը տված Հովհաննիսյանի ու ստալինյան գնահատականները չեն տարբերակվում: Դաշնակցականներն իրենք շոշափում էին հայ քաղաքական մտքի պատմության ստալինյան վերանայումը, երբ պնդում էին, թե «որև է կուսակցութեան էութիւնը որոշելու համար անհրաժեշտ է այդ կուսակցութեան անցեալին ծանօթ լինել և նրա բոլոր առաջադրումները հրապարակ հանելով՝ մանրազնին վերլուծման ենթարկել» (էջ 250): Սրանով հանդերձ, սակայն, Աշոտ Արծրունու հնչեցրած մեղադրանքն ուղղված էր կոմունիստներին առհասարակ. «Ահա այս է, որ չեն անում բոլշևիկները Դաշնակցության վերաբերմամբ....: Կասկածից դուրս է, որ բոլշևիկեան հրապարակագիրներն ու պրոպագանդիստները դիտաւորեալ կերպով խոյս են տալիս դրանից: Բայց ինչու՞» (էջ 250): Իրենց իսկ բարձրացրած հարցին դաշնակցականները կարող էին պատասխանել միայն հակառակորդ քաղաքական ուժի դիրքից: Այնինչ Հովհաննիսյանն էր, որ հենց Կոմունիստական կուսակցության ներսում հետևողականորեն պատմաքաղաքական վերլուծության էր ենթարկում Դաշնակցությանը: Քննադատելով Դաշնակցությունը բուրժուական կուսակցություն գնահատող ստալինյան դիրքորոշումը՝ դաշնակցականները լռելյայն, բայց ընդունում էին կուսակցությունը մանրբուրժուական գնահատող Հովհաննիսյանի տեսությունը: Այնուամենայնիվ, այդ տեսությունը չէր կարող տեղ գտնել դաշնակցականների շրջանում այն պատճառով, որ քաղաքականապես կոմունիստական օրակարգից էր ելնում: Նույն այդ տեսությունը, սակայն, չէր կարող տեղ գտնել ստալինյան քաղաքականությունների շրջանում այն պատճառով, որ ստալինյան

[161] Աշոտ-Արծրունի, «Հակառակորդի բանակում», էջ 249: Հաջորդ մեջբերումները՝ տողամիջում: Աշոտ (Տուլյան) Արծրունու մասին մեզ շատ բան հայտնի չէ: Ըստ դաշնակցական աղբյուրների՝ Արծրունին ակտիվ կուսակցական գործիչ է եղել: 1920-ականներին պարբերաբար արտասահմանից վերադարձել է Խորհրդային Հայաստան, որտեղ վարել է գաղտնի գործունեություն: Տե՛ս *Յուշամատեան Հայ Յեղափոխական Դաշնակցութեան,* հ. 2 (Լոս Անճելէս: Հրատ. Հ. Յ. Դ. Արեւմտեան Ամերիկայի Կենդրոնական Կոմիտէի, 2001), էջ 224:

մաքուր «ուղղադավան» կոմունիզմի գնահատմամբ այն դաշնակցական օրակարգից էր ելնում:

Հայաստանում 1928-ին արդեն մեծամասնական, լենինյան գծի անունից հանդես եկող ստալինիզմը հին ղեկավարությանն ու մասնավորապես Հովհաննիսյանին քաղաքական գնահատական տալուն զուգահեռ առաջ էր բերել նաև հրապարակային քննադատության ու վարկաբեկման նոր ալիք: Հովհաննիսյանի՝ Դաշնակցության մանրբուրժուականության տեսության քաղաքական հետևանքներն այլևս անխուսափելի էին: Այս էին վկայում Հովհաննիսյանի դեմ կուսակցության պաշտոնական մամուլում լույս տեսնող հոդվածները:[162] Մասնավորապես Գուրգեն Վանանդեցին թերևս առաջինն էր, որ դեռ հուլիսյան պլենումից առաջ՝ 1928-ի ապրիլին հրապարակայնորեն բարձրաձայնեց «Դաշնակցության մանր-բուրժուականության տեսության քաղաքական հետևանքների» մասին:[163] Դաշնակցության խնդիրն այժմ չէր սահմանվում իբրև դրա սոցիալական ծագման կամ բնույթի խնդիր, այլ սահմանվում էր, ինչպես Վանանդեցին էր ձևակերպում, որպես «Դաշնակցության դասակարգային եյության» հարց: Հարցի «*բայլշեվիկյան* դրվածքը», ըստ Վանանդեցու, պահանջում էր «տեսականի և գործնականի որգանական համադրում, այդ յերկուսի փոխադարձ պայմանավորում» (ընդգծումը՝ Գ. Վ.): Ստալինյան դասակարգային պայքարի սրման տրամաբանությամբ, հարցի «*բոլշևիկյան*» դրվածքը պահանջում էր Դաշնակցության հարցը քննել ոչ թե դրա սոցիալական ծագումը, այլ դասակարգային էությունը որոշելու համար: Վանանդեցու քննության առարկան Հովհաննիսյանի 1920-ականներին Դաշնակցության սոցիալական ծագման մանրբուրժուականությունը երևան բերող հոդվածներն էին: Հովհաննիսյանի՝ Դաշնակցության պատմության ու հայաստանյան իրականության սոցիալ-քաղաքական բարդ վերլուծությունից Վանանդեցին պարզ հետևություն էր անում: Հովհաննիսյանի այն համոզմունքը, որ 1920-ին Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումը պայմանավորվեց նաև այն հանգամանքով, որ հայ քաղքենիությունը շրջվեց համաշխարհային կապիտալիզմից դեպի սոցիալիստական հեղափոխությունը, Վանանդեցուն հանգեցնում էր պարզ եզրակացության.

> Իսկապես Հայաստանի մանր-բուրժուազիայի (գլխավորապես աշխատավորական) ճնշող մասը յերեսը դարձրեց.... կապիտալիզմից...: Յեթե մանր-բուրժուազիան յերեսը դարձրեց դեպի հեղափոխությունը, հետևաբար այդպիսի քայլ պիտի կատարած լիներ և Դաշնակցությունը, վորովհետև վերջինս,– Վանանդեցին բերում է Հովհաննիսյանի փաստարկը,– մանր-բուրժուազիայի *հետեվողական* արտահայտիչն էր:[164]

---

[162] Տե՛ս Գ. Վանանդեցի, «Դաշնակցության մանր-բուրժուականության տեսության քաղաքական հետևանքները», *Խորհրդային Հայաստան,* 21 ապրիլի 1928 թ.; Մարենց, *Հայկական սմենովեխականության դեմքը* (Յերևան: Պետական հրատ., 1928); Գ. Քալաշյան,«Իդեոլոգիական պայքարի խնդիրները», *Լենինյան ուղի*, 1928, թիվ 3-4, էջ 56-62; Յե. Հրանտ, «Գրախոսություն. Ա. Հովհաննիսյան.–«Դաշնակցության առթիվ»–Մոսկվա, 1929 թ. հրատ. հեղինակի», *Նոր ուղի,* 1929, թիվ 6, էջ 206-210:

[163] Վանանդեցի, «Դաշնակցության մանր-բուրժուականության տեսության քաղաքական հետևանքները»: Հետագա մեջբերումներն այս հոդվածից են:

[164] Աշոտ Արծրունին 1928-ին *Դրոշակում* տպագրված իր հոդվածներից մեկում գրում էր, որ Հովհաննիսյանը դասվել է «հակալենինականների շարքին.... Դաշնակցութեան մասին ունեցած իր տեսութիւնների համար»: Արծրունու խոսքով, ըստ «նոր տեսաբանների», որոնց թվում փաստացիորեն նաև Վանանդեցին էր, «Դաշնակցութիւնը այլևս ոչ թէ մանր բուրժուազիայի պահանջների ու ձգտումների արտայայտիչ է, այլ բուրժուազիայի. իսկ մանր բուրժուազիան համարւում է կոմունիստական կուսակցութեան հիմք»: Տե՛ս Աշոտ-Արծրունի, «Ժամանակը լաւագոյն դատաւորն է», *Դրոշակ,* 1928, թիվ 10, էջ 319:

Հետաքրքրական է, որ Վանանդեցին միևնույն վերապահումն է անում մանր բուրժուազիայի պարագայում, ինչն իր հերթին արել էր Վահան Նավասարդյանը՝ մասնավորեցնելով մանր բուրժուազիան իբրև գլխավորապես աշխատավորական: Ինչպես Նավասարդյանի ու Դաշնակցությունը «հայ աշխատավոր խավերի» կուսակցություն հռչակող դաշնակցականների պարագայում, Վանանդեցու դեպքում ևս այս նշումը հիմնավորապես այլափոխում էր Հովհաննիսյանի մանր բուրժուազիայի՝ իբրև տատանվող խավերի ըմբռնումը: Իսկ այդ այլափոխումն իր հետ բերում էր համապատասխան «քաղաքական հետեվանքներ»: Երկու դեպքում էլ մանր բուրժուազիան քաղաքականապես անմեղացվում էր: Եթե դաշնակցականների համար այդ անմեղացումը Դաշնացությունը դարձնում էր «բովանդակ հայ ժողովրդի» կուսակցություն, ապա Վանանդեցու դեպքում դա թույլ էր տալիս կտրել Դաշնակցությունը մանր բուրժուազիայից և հռչակել այն բուրժուական կուսակցություն: Պատահական չէ, որ Հովհաննիսյանի պնդումը, թե Դաշնակցությունը «վերասերվել» է մանրբուրժուականից բուրժուականի, Վանանդեցին հայտարարում է «հնարովի մի թեորիա». Դաշնակցության «*ազգայնական*» իդեոլոգիայի մեջ «սկզբունքային վոչ մի հեղաշրջում» չէր կատարվել, դրանում գոյություն չուներ «հետադիմություն ու առաջադիմություն» (ընդգծումը՝ Գ. Վ.):

Ըստ Վանանդեցու, Դաշնակցության «դասակարգային արժեքի» շուրջ մեծամասնականների միջև բանավեճ չի եղել, իսկ տիրող կարծիքը եղել է Շահումյանինը, որը, Վանանդեցու խոսքով, համարել է Դաշնակցությունը «հայ բուրժուազիայի արտահայտիչ կուսակցությունը»: Հովհաննիսյանի՝ Դաշնակցության մանրբուրժուականության տեսությունը Վանանդեցին բացեիբաց հայտարարում էր «բայլշեվիկյան տեսակետի *ռեվիզիա*», հակադրում Շահումյանի գնահատականին (ընդգծումը՝ Գ. Վ.): Հովհաննիսյանի պատմաքաղաքական տեսությունը Դաշնակցության գնահատման հարցում Վանանդեցուն երևում էր ոչ որպես առաջ քաշված «*ակադեմիկ* մի հարց», այլ որպես «արգասիք քաղաքական իդեոլոգիական գծում արտահայտվող խոշորագույն սխալների, այդ սխալների *տեսական հիմնավորման* անհրաժեշտություն» (ընդգծումը՝ Գ. Վ.): Ըստ Վանանդեցու՝ Հովհաննիսյանը Շահումյանի ու մեծամասնականների տեսակետի վերաքննում կատարել էր սպեցիֆիզմից փոխառած գաղափարական զենքերով: Դաշնակցության մանրբուրժուականության տեսությունը Վանանդեցին գնահատում էր իբրև «իր ամբողջ եյությամբ սպեցիֆիկյան հայեցողություն»:[165] Ավելին, ըստ Վանանդեցու, սպեցիֆիզմը հարմարվել էր այն քաղաքականությանը, որ կիրառվում էր խորհրդային իշխանության կողմից գյուղացիության և ընդհանրապես մանր բուրժուազիայի հանդեպ. «Սպեցիֆիզմն աշխատում է *հաց փախցնել* մեր այդ քաղաքականությունից, հաց փախցնել մեր խանութից՝ Դաշնակցությանը բաժին տալու համար» (ընդգծումը՝ Գ. Վ.):[166]

---

[165] Իբրև դրա ապացույց Վանանդեցին ուղիղ զուգահեռներ էր անցկացնում սպեցիֆիզմի գաղափարակիր Դավիթ Անանունի և Հովհաննիսյանի դիրքորոշումների միջև: 1928-ին սպեցիֆիզմի քննադատության առանցքային հրապարակումներից դարձավ Սարգիս Կասյանի *Սպեցիֆիկները յեվ սպեցիֆիզմը* գիրքը (Թիֆլիս: Զակկնիգ, 1928), որտեղ Հովհաննիսյանը քննադատության թիրախում էր (էջ 140-185):

[166] Հետաքրքրական է, որ Աշոտ Արծրունին, անդրադառնալով հին ղեկավարության դեմ հնչող մեղադրանքներին ու հատկապես սպեցիֆիզմի խնդրին, նկատում էր. «Ինչպիսի պատճառաբանութեամբ էլ որ առաջացած լինի հայկական սպեցիֆիզմը և որքան էլ որ պայքարած լինի «ազգայնական» կուսակցութիւնների դէմ, պարզ է, որ այդ աղանդամոլ մարքսիստների կողմից որոշ *նահանջ էր դէպի Դաշնակցութեան դիրքերը:* Եւ եթէ, քսաներորդ դարու շէմքին, մեր երկրի առանձնայատուկ պայմանների ճնշման տակ, առաջացաւ նման մի փոփոխութիւն, հասկանալի է, որ սպեցիֆիկ շարժում պէտք է տեղի ունենար և ներկայիս, քանի որ *չեն վերացել* հայ ժողովրդի կացութեան սպեցիֆիկ պայմանները: Ահա թէ ինչու այսօր բոլշևիկներից ոմանք վարակւել են «սպեցիֆիզմի մտայնութեամբ»» (ընդգծումը՝ Ա. Ա.): Տե՛ս Աշոտ-Արծրունի, «Հակառակորդի բանակում», էջ 251:

Դաշնակցության մանրբուրժուականության տեսության ստալինյան մեկնաբանությունը Հովհաննիսյանին կարգեց Դաշնակցության հետևողական պաշտպան:[167] Եթե հայ մանր բուրժուազիան՝ որպես ցարիզմի կողմից շահագործված տարր, ցարիզմի դեմ հեղափոխական պայքար էր մղել, ապա մանր բուրժուազիայի մտայնությունն անդրադարձնող կուսակցությունը՝ Դաշնակցությունը, ևս պետք է ճանաչվեր որպես հեղափոխական կուսակցություն, որը կռիվ էր մղել ցարիզմի դեմ. մի «առաքելություն», որ, ըստ Վանանդեցու, «չի համապատասխանում պատմական իրականությանը»: Սակայն պատմական իրականությունից ելնելով չէր, որ Վանանդեցին կատարում էր իր քաղաքական եզրակացությունները: Արդեն իսկ պատմության այլափոխում էր Դաշնակցության մանրբուրժուական ծագման հերքումը: Դաշնակցությունը պետք է սահմանվեր որպես բուրժուական կուսակցություն և անջատվեր մանր բուրժուազիայից: Դրանով քաղաքականապես արդարացվում էին թե՛ Դաշնակցության դեմ քաղաքական կռիվը ու հռետորաբանությունը, թե՛ գյուղացիությունն իբրև դասակարգ վերացնելու ու մանրբուրժուականության տատանումները քաղաքական ուղիղ գործադրմամբ կանխելու ստալինյան ծրագիրը: Արդեն իսկ ստալինիզմի կողմից յուրացված «Լենինյան սիստեմի տեսակետից» էր Վանանդեցին քննադատում Հովհաննիսյանի տեսությունը, որը մեծամասնականների պայքարը Դաշնակցության դեմ դարձնում էր «հակասական». «Դաշնակցության դեմ ուղղված հարվածը հարված է մանր-բուրժուազիայի գլխին.... այն շերտերի, վորոնք սոցիալիստական հեղափոխությամբ պետք է գրավվեն պրոլետարիատի կողմից»: Այս մոտեցումից Վանանդեցու հետևությունն այն էր, որ գործնականում պետք էր «միանգամայն այլ քաղաքականություն» վարել Դաշնակցության դեմ: Ստալինյան օրակարգը, սակայն, «այլ» քաղաքականություն չէր ենթադրում: Վանանդեցու հոդվածի վերջին տողերը հայտարարում էին Դաշնակցության հանդեպ քաղաքական նոր գնահատականը. «Մեր պայքարը Դաշնակցության դեմ նպատակ ունի սպանել ու վոչնչացնել նրան, վորովհետև հանձին Դաշնակցության Կոմկուսակցությունը պայքարում է բուրժուազիայի դեմ»:[168]

Վերջաբանի փոխարեն

Հովհաննիսյանն այլևս Հայաստանում չէր, երբ իր դեմ 1928-ին սրվեց քաղաքական ու գաղափարական պայքարը: Ստալինյան գործելակերպին համապատասխան Հովհաննիսյանին քաղաքականապես վարկաբեկելուց հետո, նրան հանեցին Հայաստանից և լծեցին գիտական աշխատանքի նախ Պետերբուրգում, ապա Մոսկվայում:[169] 1929-ին լույս տեսած *Դաշնակցության առիթով* գրքույկը Դաշնակցության

---

[167] Պատահական չէ, որ դեռ 1927-ի մարտյան պլենումում Արամայիս Երզնկյանն իր ելույթում հիշեցնելով 1921-ի «Դաշնակցության դատի» ժամանակ Հովհաննիսյանի դիրքորոշումը, հայտարարում էր, թե դա «իսկական սպեցիֆիզմ է, նույնիսկ դաշնակների տեսակետ»: Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 7, գ. 16, թ. 15:

[168] Նշել է պետք, որ հուլիսյան պլենումում Հայկազ Կոստանյանն իր ելույթում անդրադարձավ Վանանդեցու հոդվածին, նշելով, թե վերջինը Վանանդեցու «քաղաքական անգրագիտությունն» է վկայում: Կոստանյանը մատնացույց էր անում, որ Վանանդեցին «շփոթում է մանր-բուրժուազիայի հարցը մանր-բուրժուական կուսակցությունների հարցի հետ»: Տե՛ս Կոստանյան, *Ներկուսակցական դրությունը*, էջ 55-56:

[169] 1927-ին իր պաշտոնանկությունից հետո Հովհաննիսյանը տեղափոխվում է Լենինգրադ (Սանկտ Պետերբուրգ), որտեղ Սալտիկով-Շչեդրինի անվան գրադարանում մեկ տարի աշխատելուց հետո հրավիրվում է Մոսկվա: 1928–1930 թվականներին Մոսկվայում աշխատել է որպես Մարքսիզմ-Լենինիզմի ինստիտուտի միջազգային հարաբերությունների բաժնի վարիչ, այնուհետև՝ 1929-1934 թվականներին ԽՍՀՄ Ազգությունների ինստիտուտում վարել է ազգային-հեղափոխական շարժումների պատմության ամբիոնը, 1934–1937 թվականներին եղել է Նյութական մշակույթի պատմության պետական ակադեմիայի Մոսկվայի

սոցիալական ծագման գնահատման շուրջ ծավալված կռվում Հովհաննիսյանի վերջին խոսքն էր: Մոսկվայում լույս տեսած գիրքը հեղինակային հրատարակություն էր, պարզ այն պատճառով, որ ո՛չ Հովհաննիսյանը, ո՛չ Դաշնակցության մանրբուրժուականության տեսությունն այլևս տեղ չունեին հայաստանյան քաղաքականության ու պատմագիտության մեջ:[170] Հովհաննիսյանն այս մասին առաջաբանում գրում է. «Պարբերական որգաններում տպագրության հանձնելու համար՝ գրվածքիս հիմնական մասը ուղարկել եյի Յերեվան դեռ յեվս անցյալ տարվա մայիսին: Անհայտ պատճառով գրությունս անտիպ մնաց մինչ այսոր»:[171] Հովհաննիսյանը բացեիբաց հայտարարում էր, որ լույս տեսած գրքույկը պատասխան գրություն է իր դեմ մամուլում սկսված հարձակումների, որոնց նախաձեռնողը Վանանդեցին էր, իսկ մյուսները (նկատի ունի Մարենցին և Քալաշյանին) նրա «տաղտկալի կրկնությունը» (էջ 4):

Ստալինիզմով սկսված քաղաքական պատմության հետահայաց խմբագրման փաստն էր 1920-ականների վերջին առերեսում Հովհաննիսյանը, երբ Վանանդեցու մեղադրանքներին ի պատասխան գրում էր. «Ըստ Վանանդեցու՝ Շահումյանի «ռեվիզիան» ձեռնարկել եմ իբր թե կուսակցության Կենտկոմի քաղաքական ինչ ինչ սխալներն արդարացնելու մտայնությամբ: Սակայն 1921 թվին վոչ այդ սխալները կային, և վոչ ել դրանց «տեսական արդարացման» հոգսերը» (էջ 9):[172] Քաղաքականապես պարտված, բայց գաղափարապես ստալինիզմին տեղի չտվող Հովհաննիսյանը բնորոշում էր իր իսկ գործը. «Իմ առաջին գրական յելույթից ի վեր, յես–իսկապես, և վոչ կարծիք–ռեվիզիայի եմ յենթարկում այսպես կոչված հայ ազատագրական շարժումը՝ սկսած հեռավոր միջնադարից մինչև ընթացիկ դարաշրջանը» (էջ 11): Սակայն անցյալի հանդեպ Հովհաննիսյանի քննական դիրքորոշման, հայ քաղաքական մտքի քննական պատմություն գրելու դեմ էր, որ դուրս էր եկել ստալինիզմը:[173] Պատահական չէ, որ Վանանդեցու «գրական աչքակապությունները» Հովհաննիսյանը պատմական անցյալի հանդեպ քաղաքական դիրքորոշման հարցի անկյան տակ էր տեսնում.

> Կարող ե, հիրավի, պատահել, վոր բայլշևիկների.... տեսակետը սխալ ե յեղել Դաշնակցության անցյալի նկատմամբ: Կարող ե պատահել, չենք վիճում: Բայց այս

բաժանմունքի տնօրեն, իսկ 1936-1937 թվականներին՝ մինչև բռնադատվելն ու աքսորը, ԽՍՀՄ Գիտությունների ակադեմիայի Պատմության ինստիտուտի փոխտնօրեն: Քաղաքականապես վարկաբեկված քաղաքական գործչի գիտական ներուժն օգտագործելն ու դրանից հետո վերջինիս աքսորելը կամ գնդակահարելը ստալինյան ձեռագիրն էր: Ստալինյան այս քաղաքականությունը փորձառած թերևս ամենավառ դեպքն էր Նիկոլայ Բուխարինը: 1920-ականների վերջին ներկուսակցական պայքարում Բուխարինն ի վերջո մեղադրվեց «աջ» թեքման մեջ և 1929-ին հեռացվեց Կենտկոմի նախագահությունից: Նույն 1929-ին Բուխարինը հրապարակայնորեն ընդունեց իրեն առաջադրված քաղաքական մեղադրանքները: 1930-ականների սկզբին արդեն քաղաքական ասպարեզը լքած Բուխարինը գիտական ղեկավար պաշտոններում էր. գլխավորում էր Ժողովրդական տնտեսության բարձրագույն խորհրդի գիտական բաժինը, ղեկավարում էր ԽՍՀՄ Գիտությունների ակադեմիայի Գիտության և տեխնիկայի պատմության ինստիտուտը, *Իզվեստիա (Известия)* թերթի խմբագիրն էր և այլն: Ստալինյան «մաքրումների» տարիներին՝ 1938-ի մարտին, Բուխարինը գնդակահարվեց:

[170] Ինչպես դաշնակցական մամուլն էր գրում, Հովհաննիսյանը գտնվում էր «պատուաւոր աքսորում» և «ապաշխարհում [էր] իր մեղքերը» Լենինգրադում: Տե՛ս Մարդ, «Լուրեր Հայաստանից», *Դրօշակ,* 1928, թիվ 11, էջ 296:

[171] Հովհաննիսյան, *Դաշնակցության առիթով*, էջ 3-4: Տեքստից հետագա մեջբերումները՝ տողամիջում:

[172] Ուշագրավ է այս առումով Վարդան Ազատյանի դիտարկումը Հովհաննիսյանի ՍԴԲՀԿ-ից ՌՍԴԲԿ անցման թվականները որոշելու խնդրում: Նկատելով Հովհաննիսյանի կենսագրականներում անդամագրման թվականի տարբերությունը՝ մի դեպքում 1906, մյուսում՝ 1907, Ազատյանը նկատում է, որ էականը ոչ այնքան ճշգրիտ թվականը որոշելն է, որքան «այն, որ այս հանգամանքը, ըստ ամենայնի, էական չէր նաև 1921 թվականի դրությամբ, ինչպես էական չէր մեծամասնականությանը ցուցաբերած հավատարմության շեշտադրումը»: Տե՛ս Ազատյան, «Ոչ եղիցի չեղեալ, զոր ինչ եղևն», էջ 615-616: Հակառակը՝ հավատարմության այդ չափանիշը վճռական պետք է դառնար ստալինյան «մաքրված», «զտված» պատմություն ստեղծելու օրակարգում:

[173] Հովհաննիսյանի «քննական» պատմաբանական մոտեցման մասին տե՛ս Ազատյան, «Ոչ եղիցի չեղեալ, զոր ինչ եղևն», էջ 647:

> նշանակում է միայն, վոր անհրաժեշտ է վերաքննել այդ տեսակետը, ուսումնասիրել հարցն ըստ էության: Այս կնշանակեր սակայն *պահանջել, վոր բայլշևիկները վերաքննեն իրենց այդ տեսակետը, բայց չբամբասել, թե այդ տեսակետը վերաքննում է բայլշևիկներին* (ընդգծումը՝ Ա. Հ.) (էջ 20):

Բոլշևիզմի ստալինացմամբ, ուրեմն, Հովհաննիսյանի՝ Դաշնակցության անցյալի վերաքննման մարտահրավերը նշանակում էր վերաքննել սեփական՝ բոլշևիկյան կուսակցության պատմությունը. մարտահրավեր, որը 1929-ի դրությամբ արդեն չեզոքացվել էր ստալինիզմի հաստատմամբ:

Դաշնակցության առիթով գրքույկը Հովհաննիսյանի վերջին կռիվն էր ստալինիզմի դեմ. «*Հետևողական բայլշևիզմը յերբեք չի հակադրել Դաշնակցության մանր-բուրժուական բնույթը նրա՝ մարտական բուրժուազիայի նպատակներին ծառայելու հանգամանքին*» (ընդգծումը՝ Ա. Հ.) (էջ 24): Ի դեմս Վանանդեցու Դաշնակցության գնահատման հարցում, սակայն, Հովհաննիսյանը բացահայտում էր հայաստանյան իրականության հասարակական-քաղաքական կոնկրետ նկարագրի խեղաթյուրման ստալինյան տրամաբանությունը. «Ընկ. Վանանդեցին դատում է հասարակական դասակարգի մասին ամենուրեք միայն վերացականորեն, անգիտանալով այն վորպես պատմական կատեգորիա, վորպես ժամանակի և միջավայրի կոնկրետ արտահայտություն» (էջ 25): Պատմական կատեգորիաները, սակայն, արդեն վերածվել էին քաղաքական կատեգորիաների: Խորհրդայնացմամբ մեկնարկել, բայց դեռևս չէր ավարտվել, ըստ Հովհաննիսյանի, մանր բուրժուազիայի սոցիալ-տնտեսական կերպարանափոխությունը, իսկ բուրժուական կուսակցության «վերասերված», բայց մանրբուրժուական միջավայրում «հին արմատներ» ունեցող Դաշնակցությունը կարող էր քաղաքական իրական վտանգ հարուցել խորհրդային իշխանության համար (էջ 55): Հովհաննիսյանը հայ քաղաքական մտքի պատմության ստալինյան խմբագրման պայմաններում հիշեցնում էր ներկայի համար անցյալի ուրացման քաղաքական հետևանքների մասին. «Դաշնակցության մանր-բուրժուական *ծագման*, նրա մանր-բուրժուական *անցյալի* անգիտացումը ոբյեկտիվորեն ռեալ.... վտանգ է պարունակում իր մեջ» (ընդգծումը՝ Ա. Հ.) (էջ 56):

Դաշնակցության մանրբուրժուական *ծագման*, նրա մանրբուրժուական *անցյալի* անգիտացումը քաղաքականապես հայաստանյան իրականության, դրան հատուկ սոցիալ-տնտեսական կոնկրետության, դրա առանձնահատկության անգիտացումն էր: Կտրել Դաշնակցության անցյալը հայաստանյան իրականության մանրբուրժուական միջավայրից նշանակում էր հետադարձ ձևով զրկել այդ իրականությունն իր պատմական զարգացման կոնկրետությունից, այն վերածել քաղաքականության կամայական գործադրման տեղի:

Հովհաննիսյանի՝ Մոսկվայից հնչող ձայնը, սակայն, Հայաստանում արձագանք այլևս չէր գտնելու: 1928-ին Կենտրոնական կոմիտեի հատուկ դեկրետով Դաշնակցությունը հայտարարվեց բուրժուական կուսակցություն:[174] Ինչպես Հովհաննիսյանի դեմ արշավ սկսած դեմքերից մեկը՝ Հովհաննես Բաննահյանն էր հայտարարում արդեն 1928-ի նոյեմբերյան պլենումի ժամանակ՝

[174] Այս դրույթն ամրագրեց նաև 1928-ին 5-րդ՝ նոյեմբերյան պլենումում ընդունված «իդեոլոգիական ֆրոնտում» պայքարի «հիմնական յելակետերը» պարզող բանաձևը. «Դաշնակների կուսակցությունը՝ հայ բուրժուազիայի կուսակցությունն է»: Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 8, գ. 8, թ. 161:

> Պետք է վերջ տալ այս փնտրտուքներին և այսօրվանից ամեն տեղ և ամենուր մատնանշել, պարզաբանել, որ «դաշնակցություն» կուսակցությունը և՛ երեկ, և՛ այսօր, և՛ վաղը եղել է, կա և կլինի հայ բուրժուազիայի կուսակցությունը, մարտնչող իմպերիալիզմի կուսակցությունը: Դա կլինի հարցի ամենաճիշտ լուծումը. փորփրել արխիվներն ու փաստաթղթերը, որպեսզի հաստատել, որ անցյալում դաշնակներից ինչ-որ մեկը հեղափոխական արտահայտություններ է արել, նշանակում է ապակողմնորոշել մեր կազմակերպությունը (բնագիրը՝ ռուսերեն):[175]

Այս կերպ ստալինիզմը շուրջ հարյուր տարի Հովհաննիսյանի՝ Դաշնակցության և հայ հասարակական իրականության մանրբուրժուական տեսությունը պետք է փակեր արխիվներում:

[175] ՀԱԱ, ֆ. 1, ց. 8, գ. 8, թ. 63: Ինչպես նույն պլենումում հանդես եկող Աղասի Խանջյանը ձևակերպեց, Դաշնակցության սոցիալական էությունը որոշելու հարցում «հարկ չկար սպասել ապագա պատմաբանին» (բնագիրը՝ ռուսերեն): Տե՛ս ֆ. 1, ց. 8, գ. 8, թ. 28: Իր հերթին Հայկ Ազատյանը հայտարարեց, որ Դաշնակցության սոցիալական էության մասին հարցն «այնքան հստակ է», որ դրա հետ կապված «պետք չէ սպասել ակադեմիական աշխատությունների» (բնագիրը՝ ռուսերեն): Տե՛ս ֆ. 1, ց. 8, գ. 8, թ. 41: